

ԹԻՒ 4

ՍԵՒ ԴՂԵԿԻ ԱԻԵՐԱԿՆԵՐԻ

Կ. Ա. Մ.

ՀԱՐԱՋԱՑ ՈՐԴԻ ԶԱՄԱՆՈՒԹԻՒՆ ՀՕՐՆ ԲԵՐԵ

ՊՈՏՄԱԿԱՆ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ՅԻՆ ԱՐԱՐՈ

ՀԵՂԻՆԱԿՐ

ԵՈՒԽԵՒԵԼ ԵՒ ՄԵՇՔԸ

ԹԱՐԳՄԱՆԻՉ
Տ. ԳԱԼԵՐԱԵԱՆՏԼՐ ԵՒ ՀՐԱՑԱՐԱԿԻՉ
ՏԻՐԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

մարք նուարտ յիւլիանտ քահնիկ طبع او լուշնու

Կ. ՊՈԼԻԱ
ՏԱՐԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

1889

ՍԵՒ ԴԱԵՎԻ ԱԻԵՐԱԿՆԵՐԸ

ԿԱՄ

ՀԱՐԱՋԱՑ ՈՐԴԻ ԶՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՀՕՐՆ ԲԵՐԵ




Բարոյալից Թատրերգութիւն յինն Արար



Տեք եւ Հրատարակիչ Տիրան Գ. Փափազեան



Ա.Ի. ԱԶՆՈՒԱՄԵՆԱՐ



ՄԵՍՔՈՎ ԷՅԻՆՏԻ ՊՈՒՊԱՒ

Ի ԶՄԻՒԹԻՒՆ

ՆՈՒԷՐ ՅԻՇԱՏԱԿԻ ՍԻՐՈՑ ԵՒ ԱՆԿԵՂՆ ՅԱՐԳԱՆԱՑ

ՀՐԱՏՐԱԿՁԵՆ



ԱԶԴ — Եթէ թատերական արհեստը գեղեցիկ արհեստն
ներուն մէջ առաջիններէն է ըսենք՝ չենք սխալիր. նկարի-
չը բնութիւնը կը նկարէ, աչքը կը դիտէ զայն, կը հիա-
նայ, կ'զմայի, կ'զգայ, բայց այսու ամենայնիւ լուռ, ան-
ձայն, անխօս ըլլալով զգացումը կատարեալ չէ : Բանաս-
տեղծը կը գրէ, կը կարդաս, կ'սքանչանաս, այսու ամե-
նայնիւ լուռ է ազգեցութիւնը . երաժշտութիւնն ալ միայն

իւր մասնաւոր ազգեցութիւնը ունի, բայց թատերական արհեստը, թատրոնը՝ այս ամենուն ամփոփումն է, ժազին է. Հան՝ Նկարչութիւն Բանաստեղծութիւն, Երաժշտութիւն, խօսուն լեզուով կենդանի ոգւով կը ներկայանան. առանց վրայ առելցուր նաև տրամական արհեստը, (Art dramatique) որով հեղինակը այն տեսակ տեսարանական դարձուածքներ դիմէ դործածել, որք ունկընդորին երեւակայութիւնը պահ մը վերացնելով ներկայացումը ճշմարտութեան կը փոխեն. Ահա Սեկ Դջեկի Արեմակների ասմաց մէջ առաջինն է, բնական բարոյացից խազ մը, ամէն մէկ տողը ազգու, ամէն մէկ խօսքը մէկ մէկ ճշմարտութիւն. տեսարանները վառաւոր, կազմակցութիւնը սքանչելի, վախճանը բարի. մէկ խօսքով աննըման թատրերութիւն մ'է.

Ա ԵԶԻՆՔ

ԿԱԻԵՏԾՕ ՏԸ ԿՕՆՉԱԿԱՌԻԷ, ի
յառաջարանն հալածական,
իշխան Մանթուի. Ասի՞ու-
ֆօ անուանիւ:
ՖՐԱՆԶԼԵՄԳԴ. կարծեցեալ կրտ-
սեր որդի Կոմիտօի:
ԲԱՅԼՈ անդրանիկ որդի Կո-
խօսի.
ԼՈՒԻԺԻ . . . Աւազակ
ԱՆԹՈՆԻԾՕ Բարեկամ Կոմիտօի
ԲԻԵԹԻՒ Ջենոր
ՄԵՅԼԵԹԹԱՆ. Գործակալ Ֆր-
բանչեալ ուղի
ՊԵՐԾՈ Սառայ Ֆրանչեալ ուղի

ՄԱՆԿԱԿԻՒ ՄԸ
ԵՐԵԲ ԱԶՆԱԽԱՎԿԱՆՔ
ՖԻԼԻԲԲՈ Աւազակ
ՄԱՎԻՈՂԱ Աւազակ
ՄՈՒՆԵՏԻԿ ՄԸ
ԴԲՍՈՒՀԻՆ ԼՀՕՆՈՒԱԱ
ԼԻՆՏԱ Կին Լուիձիկ և քոյր
Բիեթոօի
ԴԲՍՈՒՀԻՆ ՊիԱՆԳԱ. Դուստր
Ֆէռուասէի Դբսին և խօսե-
ցեալ Բաօլօի . . .
Զինւորք, Փաղովուրդ, Աւա-
զակը, Պալատական Տիկնայք
Պալատականք ևն. ևն.

Եղելութիւնն ի Մանթու, մը դարուն վերջերը

ՊԱՏԿԵՐ Ա.

ՅԱՌԱԶԱԲԱՆ

(ԶՈՀՆ ՈՒ ԴԱՀԻՃԱԾ)

(Տեսարանն է աղքատիկ պանդոկ մը . Խորը կամարադարդ պարտէզ . ի հեռուստ ժայռեր և անտառք երեխնա Սեղան, աթոռ և նստարանք . Աջ և ձախ կողմը դռներ .)

ՏԵՍԻԼ Ա.

Լինտա եւ եղկուտղայք, Ֆրանչէսկօ և Ֆրանչէսկինօ

(Վարուժական բայցուելու Քջողին Լինտա յան է աշխատ և, երկար ուղայ+ սեղանին սալը ուկէ ու ուկէ նապատ իւ ճացնեն :)

Լինտա .— (Ելլէլլ) Արդեօք այս գիշերն ալ դուրսը պիտի անցնէ . . . մինչև հիմա ուր մնաց . . . (Տեսնելու ու Ֆրանչէսկին զնիւակնետն յէլու համար իւ հրէ) Ֆրանչէսկօ, չա՛ր տղայ, միշտ եղբօրդ զարնել կաշխատիս . վար իջիր սեղանէն, իջի՛ր կըսեմ քեզի . (Զոյն է իջեցնէ) Բայց, կարծես թէ սաքի ձայն կայ . . . արդեօք ճամբորդ մ'է . . . հ'հ, ոչ, արդէն այս պանդոկը շատ մարդ չի յաճախեր . (Դեռ է երբէ երես, Ֆրանչէսկօ սեղանին դառնուիլ յափշտուիլով էղիք է սղառնուած)

Ֆրան .— (Սարսահար է ունիւելու) Ա՛հ, մա՛յր իմ, մա՛յր իմ : Լինտա — Ի՞նչ կընես, պղոխիկ թշուառական, (Պատկեր ու դառնուիլ յեռեն սանէ : Բիէթը իորէն իւ հոնէ :)

Բիէթը .— Ի՞նչ է ան .

Լինտա .— Բիէթը, եղբայր իմ . (Զոյն քոք)

Բիեթ.— Վերջապէս սիրելիք քոյր իմ, չորս տարի ետքը դարձեալ կը դանեմ զքեզ:

Լինտա. — Ո՞հ, ո՞չափ ծարաւի էի քու տեսութեանդ, բայց կեցիր նախ և առաջ սա տղոց գործը կարդադրենք, (Ֆրանչուինչ) Դուն հոս, խեղճ պղտիկ, (Ե այս ով հով ու բանին մշշ ունել ուսուը իւ քոյն. ողու վիրանչուսն յախ հով ու բանին մշշ իւ քոյն Ե ուսուը իւ իւն ըսւը) Դուն ալ հոն չար տղայ, ուսկից չպիտի կարենաս դուրս ելնել:

Բիեթ. Բարի՛ Լինտա, ըսէ տեսնեմ թէ՝ ի՞նչպէս կըլլայ որ զքեզ հոս կը դանեմ. երբ ես հասարակապետութեան նաւերուն մէջ ծառայելու համար ասկէց չորս տարի առաջ վենետիկէն մեկնեցայ՝ դուն հոն աղւոր ագարակ մը ունէիր, իսկ այսօր Մանթուի գքսութեան երկիրներուն այս անպիտան պանդոկիս մէջ կը դանուիս:

Լինտա. — Աւազ . . . չե՞ս գիտեր եղբայր իմ.

Բիեթ .— Այո՛, թերես ամսուինդ Լուիծի զքեզ թըշուայուցած և տունդ կործանելէ ետքն ալ երեսի վրայ թողած ըլլայ:

Լինտա. — Այն ատեն աւազակ խմբի մը մէջ մտած էր, այնուհեաւ օր մ'ալ զինքը չի տեսայ, և սակայն, ես այն միջոցին մայր պիտի ըլլայի, ուստի ագարակէս մեկնելով՝ Բէշիերայի մօտերը հեռաւոր ազդականներէս մէկուն տունը ապաստանեցայ, հոն զաւակ մը ծնայ, որ հազիւ քանի մը շաբաթ կրցաւ ապրիլ:

Բիեթ. — Խե՞զ Լինտա .

Լինտա. — Ալ անկէ ետքը միմիայն ինքզինքս մտածելու էի, և չուզելով աղքատ ազդականուհւոյս վրայ բեռ ըլլալ՝ անկէց մեկնելու էի, երբ յանկարծ զիպուածը անյուսալի օգնութեան աղբիւը մը դէմս հանեց:

Բիեթ. — Ո՞հ, ի՞նչ եղաւ նայինք .

Լինտա. — Ազդականիս հիւզին մօտ դանուող ամարա-

նոցին մէջ քաշուած կապրէին երիտասարդ մարդ մը և իւր կինը . կը կարծուէր թէ ասոնք վտարանդիներ էին . կինը, զոր երբէք չէի տեսած՝ ինձմէ քանի մը օր վերջը մայր եղած էր, իւր նորածին զաւակը տկար և հիւանդու էր, զոր առանց ստնտուի խնամոցն յանձնելու՝ ինքը կը սնուցանէր : Իւր երկրորդ զաւակն էր սա: Բայց օր մը, կերեւայ թէ այս փախստականներուն ապաստանարանը յայտնուեցաւ . աճապարանօք սահմատած էին փախչիլ, բայց պէտք էր տղան կերպով մը միատեղ չտանիլ, վասն զի այն խեղճ մանկիկը չպիտի կրնար դիմանալ ճամբորդութեան ատեն պատահելիք նեղութեանց և գժուարութեանց :

Բիէթ .— Թերես զայն քեզի յանձնեցին:

Լինտա .— Այո . իրիկուն մը օտարականը, որ անունս Ասթօլֆօ է ըստաւ, հարցուց ինձ թէ՝ յանձնառու կը լինի՞մ այն պղտիկ էակը խնամելու . և իմ ուրախ սրտով հաճութիւն յայտնելուս վրայ բաւական գումար մը տուաւ ինձ, խոստանալով միանդամայն երբեմն երբեմն նոյնչափ գումարներ դրկել, առկէց զատ, երբ օր մը, այսինքն ուղած ատեննին իրենց զաւակը քաջառողջ վիճակի մէջ գըրեկերնին յանձնէի՝ 4000 տուգա ոսկի պիտի տային:

Բիէթ .— (Զարմանու) Հազար տուգա ոսկի՞ . . . չըսե՞ս թէ իշխան մը ըլլալու է այդ մարդը :

Լինտա .— Զդիտեմ . . . կոտրած ոսկի մանեակ մը նշան գրինք մէջերնիս ժամանակին զմեղ իրարու ճանչցունելու համար: Երկինք օրհնեց իմ ջանքերս, տկար տղեկը իր առողջութիւնը գտաւ, և այնչափ աղէկ՝ որուն ապազայէն ալ Աստուծով վախ չունիմ: Սա տեսած երկու արդաքներէդ մին էր, (Աջ քուրու շահնելու) այն որ սանկ մտաւ . . . և ունեցած տկարութեանը պատճառաւ Ֆըրանչէսդինո դրի իւր անունը :

Բիէթ .— Բայց միւսը . . .

Լինտա .— Միւսը . . .

Բիեթ .— Զշափը թէ քու զաւակիդ մեռած էր արդէն .

Լինտա .— Այս, ճշմարիտ է:

Բիեթ .— (Չ-է բարեհաջանել) Ուրեմն այս կողմինը ով է :

Լինտա .— Ֆրանչէսկօ՞ն . . . աւա՛զ, որբ մ'է զոր ինձ որդեգրած եմ . իւր մայրը աւազակի մը այլի կինն էր , որ քաղքին մէջ կը մուրար . . . խեղճը հոս հիւղիս մէջ հիւսնդանալով մեռաւ , որով ստիպուեցայ իւր տղան ինձ որդեգրել , վասն զի աշխարհիս երեսը մէկը չունէր զինքը խնամող :

Բիեթ .— Շատ աղէկ , սիրելի քոյր իմ , բարի գործ մ'է այդ ըրածդդ :

Լինտա .— Ու շատ աղէկ չեկաւ ինձի , շատ ատեն ասոր վրայ զզացած եմ . եթէ զիանայիր Բիեթուօ , թէ այս տղան ո՞րչափ կը սոսկացնէ զիս . իւր փոքրիկ հասակէն միշտ չարութիւն դործելու ետեէ է : Տիար Ասթօլֆօի տըշըն հետ մէկ տարիք և միակերպ մեծցած է , բայց Աստածած այս երկուքը իրարմէ շատ տարբեր նշանով մը զատած է , . . . աւա՛զ , կարծես թէ մին դահիճ և միւսը իր զոհը :

Բիեթ .— Բայց վերջապէս պղտիկ ֆրանչէսկինօի աղնուական ճնողը իր խոստումը կատարե՞ց :

Լինտա .— Այն ատենները քանի մը անզամներ ծեր կը քօնաւոր մը եկաւ աեննելու , որ իրենց կողմէն զրկուած էր , եւ որ տղան ու իմ օրական հացերնուս համար ստակ կը բերէր մեզ . ստկայն ամբողջ տարի մը կըլլայ որ չէ երեցած , և այս յապազումէն կուիճի շատ անհանգիստ է :

Բիեթ .— Ի՞նքը . . . բայց ըսկիր թէ կուիճի քեզ ձգած էր .

Լինտա .— Իմանալով որ Փէջիէռա կը գանուիմ , եկաւ զիս դատաւ :

(Ըստահանիւլէ)

Բիեթ. — Եւ դուն հաւանեցա՞յ նորէն զինքը ընդունել.
Լինտա. — Պէտք էր որ հաւանէի եղբայր իմ, յիրաւի
զիս բաւական սրդողցուցած է, բայց վերջապէս ամսւախնս
է, պէտք է զինքը յարգեմ, զի ժամանակին զիս սիրած է,
և կարծեմ տակաւին կը սիրէ, որովհետեւ երբոր զիս գը-
տաւ, հետո միշտ աղէկ վարուիլ խոստացաւ :

Բիեթ. — Բէ՛՛ . . . նայինք իւր խոսամունքը պահե՞ց .
Լինտա. — Նախ՝ պահեց, բայց քիչ մը ատեն կայ, այսին-
քըն բարի կրօնաւորին մեղի ստակ բերելը դադրեցնելէն
ի վեր սասափիկ զայրացած է ինձ դէմ, միանգամայն այս
խեղճ տղուն հետ շատ հակառակութեամբ կը վարուի :
Զինքը կակզայնելու և հանդարտեցնելու համար հաւանե-
ցայ մինչեւ իսկ մեր հիւղը ձգելով այս պանդոկը դնել .
բայց աւա՛զ . . . հոս ալ անշահ մարդիկներէ, աւազակ-
ներէ, մարդասպաններէ և հին զօրականներէ ի զատ ու-
րիշ յաճախորդները չունինք :

Բիեթ. — Որք անշուշտ իւր ամենօրեայ ընկերներն են :
Լինտա. — Լուէ՛ եղբայր իմ, կարծեմթէ իւր ձայնն է .
Բիեթ. — Այո, ինքն է :

ՏԵՍԻԼ Բ.

Նոյնք և Լուիծի

Լուիծի. — (ԳՅԱՆ ՀԵՅՎԻ ԳՎ) Դինի բեր, կնի՛կ, զինի՛ .
մի՛ տնտեսը, աճապարէ՛ . այսօր քիչ մը անախորժ եմ, ո-
րովհետեւ զբանս պարապ և կոկորդս ալ ցամքած է . .
զինի ըսի քեզի, ինչո՞ւ կը կենաս . գինի պատրաստէ բա-
րեկամացս համար ալ որոց պիտի սպասեմ:

Լինտա. — Բարեկամնե՞րդ . . . բայց զիտե՞ս Լուիծի,
թէ կինդ այդ բարեկամացդ ներկայութենէն ամենեւին
չակործիլ .

Լուիճի. — Թող այդպէս ըլլայ . Է՛ ուրեմն, պանդոկասիե՛տ կին, զինի բեր մեր խմբին համար, (ԶԵՐԵՎԸ ՄԵՂՆԵՆ ՄԵՋՆԵԸՆ) զինի՛, զինի՛, ապա թէ ոչ՝ կ'երդնումսատանային մարմնոյն վրայ թէ հիմա ամեն բան կը կոտրտեմ .

Բիեթ. — (ՅՈՒՆԱՆԵՐԸ) կամաց, Լուիճի, կամաց . . .

Լուիճի. — Հէ՞ . . . ո՞վ է այն թշուառականը որ կը համարձակի . . . (ՃԱՆՉՆԵՐԸ) Բիեթուո՞ն :

Բիեթ. — Այս, Բիեթուոն, կնոջդ եղբայրը, որ զայն քու բարկութեանդ գէմ պաշտպանելու միանդամայն եթէ ինքը ուզէ՝ այդ քու իրեն համար պատրաստած թշուառ կեանքէդ ալ զինքը ազատելու պատրաստ է .

Լուիճի. — Ա . . . ուրեմն ինձմէ քեզի՞ ալ գանդատեցաւ . . . իրա՞ւ է Լինտա, որ կուզես քու պղտիկ և սիրելի ամուսինդ թողուլ .

Լինտա. — Պղտիկ եւ սիրելի ամուսինս . . .

Լուիճի. — Ուրեմն ուրիշ մը գտիր որ ինձմէ աւելի սիրելի և աւելի աղէկ ապրուսաի մը տէր ըլլայ : Եթէ զու իմ ուզած կինս ըլլայիր՝ գիտցած ըլլաս որ թափառական կեանքս և բոլոր ընելիք շահերս քեզի հետ պիտի բաժնէի, որովհետեւ, վերջապէս մարդս իւր քսակը լեցնելու համար աղէկ արհեստի մը կը կարօտի :

Բիեթ. — Աղէկ արհեստի՞ մը, ուրեմն ի՞նչ պիտի ընէիր .

Լուիճի. — Ի՞նչ պիտի ընէի, արդէն ունեցած արհեստով կզբակէի, որ է աւաղակութիւն. (Լինտա Քինչ բերելերայ)

Բիեթ. (ԶԵՐԵՎԸ) Աւաղակ .

Լուիճի. — Եւ ի՞նչ կուզէիր որ ըլլար ատենօք զինւութիւն ընող մարդ մը, այնպիսին պէտք է որ միշտ իւր սուրէն օդուտ քաղէ, ասկէց զատ, Բիեթուո՞, մի՛ վախնար, շատ չար ալ չեմ, անմեղ մարդիկները չեմ սպաններ այլ միայն սրիկաները, (Լինտա Քինչ բերե) Եկուր Բիեթուո, հիմա այս խօսքերը թողունք և ի միասին տնկենք .

Բիէթ. (Մերժուլ) — Շնորհակալ եմ.

Լուիճի. — Դուն զիտես . (ինչ է ի՞ն ,) է ուրեմն կնիկ , այս երկու օրուան մէջ երբէք կրօնաւորի մը կնքուղը չի տեսա՞ր .

Լինտա. — Ոչ :

Լուիճի. — Ուրեմն պէտք է որ հիմա երթաս Ֆրանշիսկեան կրօնաւորաց վանքը և հասկնաս թէ Հայր Անսէլմը դեռ չեկա՞ւ անցեալ տարուան պէս պաշտպան Սուրբին իննօրեայ աղօթիցը ներկայ գտնուելու : Վերջապէս պէտք է որ անոր հետ ունեցած հաշիւնիս կարգադրենք : Ինքը զինքնին մնուցանել չկարողացող մարդոց համար երկու տղայ մնուցանելը քիչ մը հին կուգայ : Արդ , եթէ ասոնց-մէ մին իր ընկերոջը համար չի վճարէ՝ երկուքն ալ պիտի վանտեմ :

Լինտա. — Ի՞նչ , դու այդ երկու անմեղները վռնտելու չափ պիտի կրնա՞ս անզթանալ .

Լուիճի. — Չեմ վանտեր , բայց կրնամ գնչուներու ծախել :

Լինտա. — Բայց վայրկենէ վայրկեան պղտիկ Ֆրանչիսկինոյի ծնողքը կրնան դալ և մեզ խոստացեալ ոսկիները վճարելով զաւկնին պահանջել :

Լուիճի. (Խժուլ) — Ա՞հ , իրաւ ըսկը . . . բայց անոնք թերես մինչև հիմա մեռած են , ես հաւասար եմ թէ այդ պարոն Ասթօլֆօն արդի իշխան տիար Պօնագոսի թշնամի նախորդ կուիտօ աը կօնղակուէ դքսին կողմանակիցներէն մէկը ըլլալով . . .

Լինտա. — Եթէ այդպէս ըլլար՝ քաղքին մէջ պտտելու չը համարձակեր , որովհետեւ Պօնագոսի իշխանը այնչափ կը հալածէ կուիտօ աը կօնղակուէ դուքսը՝ որուն գլուխը մինչև իսկ ծախու հանած է :

Լուիծի . (Գառանը բարձրացնելով) — Ծախու հանա՞ծ . . . վերջապէս կարծեմթէ մեզի գործ մը կելլէ :

Լինտա . — Ա՛վ Սուրբ Մատու . . . միթէ դո՞ւ ալ պիտի յանդղնիս ասանկ ոճրի մը մասնակցիլ :

Լուիծի . — Մասնակցիլ . . . անդի՞ն զնա դուն ալ , մասնակցիլ ի՞նչ է , ես առտնձին կուզեմ գործել , և եթէ ոճիր մ'է , մեղքը Պօնաքօս իշխանին վիզք ըլլայ : Ամեն մարդ իր գործը գիտէ , կնիկ , մեր իշխան Պօնագօսի պարտքն է վճարել , իմ ալ պարաքս է խոզի համդարտութեամբ այդ դումարը ձեռք բերել : Խնչպէս որ զինւոր մը իր զօրապետին հրամանացը կը հազարդի , նոյնպէս եւ ես . . .

Բիեթ . — Թշոււառակա՞ն , ի՞նչպէս կը համարձակիս այդ խօսքը ըսել . զինւոր մը ցերէկ ժամանակ կը պտտերազմի իւր թշնամնոյն հետ ճակատ առ ճակատ , և կեանքը վտանգի մէջ դրած իւր հայրենիքը և ընտանիքը կը պաշտպանէ , իւր ձեռք բերած յաղթութիւնը իրեններուն ազտութիւնն է , իսկ մահը՝ նոցա փառքը : Ա՛հ , դադրէ՛ Լուիծի , դադրէ՛ քաջի մը օրինաւոր սուրը փատ եղեռնազործի մը դաշոյնին հետ համեմատելէ :

Լուիծի . (Դաշնը + չէլուկ) Մա՞հ և դժոխք , հիմա պիտի տեսնես վատին ով ըլլալը . (Դաշնը բարձրացնէ)

Լինտա . (Մէջ ուշին հանելով) — Լուիծի , եղբայրս է . Բիեթո՞ , չի՞ս աեսներ թէ գինով է :

Լուիծի . — Ուրեմն թող հեռանայ աչքիս առջեւէն :

Բիեթ . — Հանդարտէ , ես ահա իմ նաւակս կը վերադառնամ , և տայ Աստուած որ զքեղ և քու ընկերներդ ճամբռու վրայ չի տեսնեմ , որք ահա կը մօտենան , որովհետեւ մենք շատ անդամ կախած ենք ծովահեններ , որոց ձեզմէ աւելի բարի մարդիկ ըլլալին ստուգած ենք , Առայժմ մնաս բարեաւ քոյր իմ :

Ալնտամ.— Մինչև վանքը կաւզեմ քեզ ընկերանալ, բայց կեցիր սա տղաքը հետեւնիս առնենք, զի աւելի հանդիսա կը լամ երբ այս տղաքը քովս ունենամ։ (Տղայուշ Դարձներէն հանելու երան յետերնուն բռնէ և իորին մինչին։)

ՏԵՍԻԼ Դ.

Լուիծի, Ֆիլիփիօ, Սալիկօլա և այլ Աւաղակք

Ֆիլիփի.— Լուիծի, կի նդ է որ ասկէց կը հեռանայ։
Լուիծի,— Այո, մինակ ենք և կրնանք խօսիլ։ Սալիկօլա, դուն հսկողութիւն ըրէ որ մէկը վրայ չի համի։

Սալիկօլա — Ուրեմն շիշ մը գինի տուր ինծի որ աչացս տեսութիւնը աւելի դօրացնէ։

Լուիծի.— Ա՛ռ նայինք քեզի շիշ մը գինի, (Կոռաց) Սալիկօլա, — Շնորհակալութիւն տէր Լուիծի, (Եւ Էրը Քրիստու իւ էակէ)։

Լուիծի — Ի՞նչ լուր, Ֆիլիփիօ։

Ֆիլիփի.— Կըսեն թէ Տիար կուիտո տը Կօնզակուէն այս կողմերս երեցեր է։

Լուիծի,— Հէ՛, ի՞նչ կըսես եղբայր, խե՞նթ է որ դայ դայլին որկորը իյնայ։

Ֆիլիփի,— Գիտե՞ս ուրեմն թէ Պօնադօոի իշխանը անոր դլուխը ծախու հանած է։

Լուիծի,— Ո՞րչափ կուտան կոր, Ֆիլիփի.

Ֆիլիփի.— Հինգ հարիսը ոսկի սկուդ։

Լուիծի.— Բաւտկան գումար մը . . . կընանք իրեն հետ համաձայնիլ։

Ֆիլիփի.— Ի՞նչպէս։

Լուիծի.— Շատ դիւրութեամբ, Փախստականը իր կերանքը վտանգի մէջ ըլլալը իմանալուն պէս՝ Վենետիկան երկիրներուն մէջ պիտի ապաստանի, ուր հասնելու համար

Բէշիէրայի պղտիկ ճամբէն զատ ուրիշ ճամբայ մը չունի .
այս պղտիկ ճամբան մինչև իմ պանդոկիս դուռը կը վեր-
ջանայ . ես այն մարդը հոս վար գնելը իմ վրաս կառնում,
խարէութեամբ կամ բռնութեամբ , վերջապէս պարագային
համեմատ . դուք հսկողութիւն կընէք և չորս կողմը կը
պաշտպանէք :

Ֆիլիփ .— Շատ աղէկ . (Գուստիւ բարյացնելը) Տիար կու-
իտօ տը կօնզակուէի մահուանը .

Լուին .— Լոէ՛ , ա՛հ , լոէ՛ . մարդուն մահուանը հա-
մար խմել .

Ֆիլիփ .— Ի՞նչպէս .

Լուին .— Պէտք է խոստացեալ պարզեւին համար խմել :

Ֆիլիփ .— Է՛ , այդպէս թող ըլլայ , ամենը մէկ ճամբայ
կելէ : Ուրեմն հինգ հարիւր ոսկի տուգատին համար .

Ամենքը .— Հինգ հարիւր ոսկի տուգատին համար . (Խ. Հ.)

Լուին .— Հիմա իրարմէ բաժնուինք , մինչև որ զիշերը
վրայ հասնի : (Առաջական :)

ՏԵՍԻԼ Դ.

Լուին (Միան)

Լուին .— Առաջ պէտք է գործին էական մասը կար-
գադրենք , այսինքն կնոջս ներկայութեանը ինքզինքնիս
շմատնելու համար զգուշանալ , վասնզի իրեն նման բարի
հոդիները ասանկ բարի գործերուն միշտ արգելք կըլլան :
Ա՛հ , Աստուած տայ որ փախստականին հոս հասած ատե-
նը ախոռիս մէջ ձի չդանուի , որովհետև ճամբան հետիստն
երթալը շատ գժուարին է : Խեղճդ Տիար կուիտօ , ամե-
ննեւին քեզի դէմ ոխ չունիմ , բայց ի՞նչ ընեմ , երբ մարդ իր
վրայ պաշտօն մը կ'առնու , պէտք է կապարէ . . . ա՛ , ա՛ .

զէկ միաքս եկաւ, ի՞նչ նշանով զայն պիտի ճանչնամ, . .
Է՛հ, այս առաջին անգամը չէ որ բնազդումս ինձ պիտի
օղնէ: Ո՞վ է այն որ դէպ ի հոս կուգայ . . . երկու ճամ-
ուրդնե՞ր:

ՏԵՍԻԼ Ե,

Լուիծի, Ասթօլֆօ և Անթօնեօ

Ասթօլ: — Պա՛րոն, այս պանդոկին տէրը դո՞ւք էք:

Լուիծի: — Այո՛ պարոններս, ի՞նչ կուզեք նայիմ:

Ասթօլ: — Մենք երկուքս վենետիկցի վաճառականներ
ենք, որ հայրենիքնիս կը վերադառնանք, ու հոս քիչ մը
հանդիստ առնուլ կուզենք: (Մեղան առջև իւ նորին)

Լուիծի: (Չանաւ քիուշէ) — Հանդիստ ըրէք, և ուզած-
նուդ չափ նստեցէք:

Ասթօլ: — Եթէ չեմ սխալի՞ր՝ Բէշիէրայի շատ մօտ ենք,
և ահաւասիկ այն ճամբան՝ որ հոն կը տանի:

Լուիծի: — Այո՛: (Ասեւէք: Անթաւով հեռ իւ քետոյ, Լուէտի
հիւսուն իւսե,) Երկուքէն մէկը մեր բնտուած մարդը շրլայ:

Անթօն: — (Կամաց հետիւղը) Հոն կերթամ: (Դեռ է եւր)

Լուիծի: — (Առ Ասթօլիք) Ընկերնիդ ձեզի հետ չպիտի
վերադառնայ ի վենետիկ:

Ասթօլ: — Այո, բայց կուզենք նախ և առաջ դժմել բա-
րի կին մը՝ որ այս կողմերս կը բնակի եղեք, որու հետ
խիստ շահաւոր դործ մը ունինք կարգադրելիք:

Լուիծի: — Պա՛հ . . այս մասին կարելի է կը ճամ ձեզ օդ-
նել, անունը ի՞նչ է այդ բարի կնող.

Ասթօլ: — Լինտա:

Լուիծի: — Կի՞նս . . .

Ասթօլ: — Ի՞նչ, արդեօք դուք,

Լուիծի: — Լուիծի Պարպարէնան եմ:

Ասթօլ. — Դա՞ք .

Անթօն. (Կահաց ճը ընկերութը) — Լուինի Պարուարէնա՞ կը-
սէ , աւազակ մը , հոչակաւոր ոճրագործ մը . . . ա'հ ,
տէր իմ , զգուշացէք ,

Ասթօլ. — Լուէ :

Լուինի. — Ե՛ռըեմն , պարոններ , կնոջմէս ի՞նչ կուղէք :

Ասթօլ. — Թերես իմ անունս անցեալ դէպք մը պիտի
յիշեցնէ ձեզ .

Լուինի. — Զեր անունը ,

Ասթօլ. — Ասթօլֆօ ,

Լուինի. — Ասթօլֆօ՞ է'հ , ուրեմն դո՞ւք էք որ առկէց
վեց տարի առաջ Լինտայի յանձնեցիք . . .

Ասթօլ. — Տզայ մը իւր օրօրոցին մէջ .

Լուինի. (Ուրախութեանք) — Այո՛ , այո՛ , Ասթօլֆօ էք .
(Մէկանք) ասիկայ մը բնտուածէն շատ տարբեր դործ մ'է .

Ասթօլ. — Այն տղան դեռ կապըի՞ .

Լուինի. — Աստուած վկայ՝ այո՛ .

Ասթօլ. — Օրհնեալ ըլլայ Աստուած .

Լուինի. — Եւ դուք զայն առնել տանելու համա՞ր ե-
կտք հոս .

Ասթօլ. — Եւ ուրիշ ի՞նչ պատճառաւ այս երկար ու
տաժանելի ճամբորդութեան յանձնառու պիտի ըլլայի .
ահաւասիկ ձեզմէ ճանչցուելու նշանս , (Էւս աղաքան չան ճը
շանէ և բարեւլ իւղանէ :)

Լուինի. — Աղէկ , աղէկ , բայց ամենը աս չէ .

Ասթօլ. — Ի՞նչպէս .

Լուինի. — Զէք յիշեր .

Ասթօլ. — Ի՞նչ բան .

Լուինի. — Լինտա ինձի հազար տուդաս ոսկին համար
խօսած էք . անիկայ ի՞նչ պիտի ընէք ,

Ասթօլ. — Այդ գումարը ձեզի պիտի վճարենք:

Լուիճի. — Ահ, աէր իմ, ի՞նչ ուրախութիւն, (Յուշբեռ-
եաւ) ըսել կուզեմթէ ի՞նչ ցաւ . . . խեղճ պղտիկ աը-
դան . . . ո՛չափ կը սիրեմ զինքը . . . և իրեն հետ ա՛յ-
չափ ջերմ սիրով կապուած էի որ . . . կը հասկնա՞ք . . .
մնուցիչ հայր մը . . . վերջապէս քանի որ դուք կուզէք . . .

Ասթօլ. — Ո՞ւր է հիմա.

Լուիճի. — Լինուա զայն պատցնել տարաւ, բայց շատ
չի քշեր կը վերադառնայ, նոտեցէք ուրեմն տեարք իմ:

Ասթօլ. — Կաղաչեմ, հոս կենալու շատ ժամանակ չունինք:

Լուիճի. — Կը հաւատամ, ճամբանիդ բաւական վտան-
գաւոր է . բոլոր երկիրը Պօնագոսի կողմնակից զինւորնե-
րով լեցուած, որք կը հալածեն . . .

Ասթօլ. — Զո՞վ.

Լուիճի. — Տիար կուիտօ տը կօնզակուէն, որուն դլուիը
ծախու հանած են:

Անթօն. (Դուշնաբ Առնօւլիչէ Նոյել) — Երկի՞նք :

Լուիճի. — Ի՞նչ ունիք աեարք իմ:

Ասթօլ. — Անթօնեօ կը զարմանայ թէ ի՞նչպէս համար-
ձակած է կուիտօ տը կօնզակուէ այս կողմերս երեիլ:

Լուիճի. — Ճշմարիտ է . և ձեզի բան մը ըսե՞մ, երբ դուք
հոս եկաք, առաջին անգամ կարծեցի թէ ձեզմէ մէկն էր
այն հալածեալ դուքսը:

Ասթօլ. — 0'. որչա՞փ ծաղրաբան էք եղեր պա՛րոն, իւր
զաւակը բնտուող հայր մը կուիտօ տը կօնզակուէն կարծե՞լ:

Լուիճի. • Այդպէս է, բայց մարդ չե՞նք, կը սխալինք.
թերես պարոն Անթօնեօն վախսսական դքսին կողմնակից-
ներէն ըլլայ:

Անթօն. — Ե՞ս .

Լուիճի. — Հանդարտեցէք, հանդարտեցէք, իմ գործո
միայն տիար կուիտոյի հետ է, որուն ձեռքէն 500 տու-

դատ ոռկին կրւղեմ առնուլ, եթէ յաջողիմ նոյն գումարը ձեռք բերել՝ ձեր բերածին հետ միացնելով մեծ դրամադիմոյ մը տէր պիտի ըլլամ.

Ա.թօսօլ.— Բայց կինդ կուշանայ.

Լուիծի. — Անիծեա՛լ կին . . . ներեցէք անոր ուշնաւուն համար տեարք իմ, եւ եթէ կուզէք ժամանակնիդ խմելով անցնել, կը խոստանամ ամենալնափր տեսակէն բերել. (Գնէ բերել եւլայ.)

Անթօն. (Կամաց ճշ ընկերական) — Կը տեսնէ՞ք տէր իմ, թէ ո՞րպիսի վասնդներով չըջապատեալ էք.

Ա.սթօլ. — Ի՞նչ կուզես որ ընեմ, Անթօնեօ, իմ կողմնակիցներս խարած են զիս և դեռ գործի սկսած չեն.

Անթօն. — Ու բեմն ի վեհնետիկ հասնելու համար պէտք է որ աճապարենք.

Ա.սթօլ. — Եւ տղա՞ս, . . . միթէ կրնա՞մ զայն հոս ձդել սրուն մայրը արնչափ անհամբեր իրեն կ'առասէ. բայց այս մարդուն խօսքերուն նայելով՝ մեր փախչելու յատակագիծը աւրուած է, ուրեմն չի ճանչցուելու համար պէտք է իրարմէ բաժնուինք: Խշկանուհի կինս իւր հազած գիւղցիի զգեստին տակ բազկացը մէջ ունենալով մեր անդրանիկ որդին Բաօլօն, ի Սէրանօ պիտի հասնի վեհնետկեան երկիրները մանելու համար, ուստի դու պէտի ընկերանաս իրեն այս ճամբորդութեանը մէջ. ուրեմն երթանք գըտնենք զինքը անտառին հովանոցին տակ որ մինչև յարդ ծածկեց զմեղ թշնամեաց աչքերէն. ևս այս գիշեր նորէն հոս կուզամդաւակս առնելու և ձեզ կը գանեմ ի վեհնետիկ: (Լուէտ գնէ բերել)

Լուիծի. — Ահաւասիկ տեարք իմ, ամենահին և ամենաընտիր տեսակէն ձեզի զինի մը, բայց ներեցէք ինձ մեծարոյ հիւրերս որ ձեր գալուստը ողջունեմնախ ևս անկելու

Ա.սթօլ. — Ի՞նչպէս, ուրեմն . . .

Լուիծի. (Լեզնէ) — Պարսն Ասթօլֆօի և իւր անձեղ Ֆըրանչէսգօ որդւոյն կենացը, որուն բաժանումը ինձ խիստ ցաւ և կոկիծ պիտի պատճառէ. (Խաչէն Երիշ) աւա՛ղ, հազար տուգատը շատ պղտիկ գեղ մ'է իմ այս ցաւս դարմանելու, բայց և այնպէս . . . եթէ . . . եթէ կուզէք զանոնք համրել . . .

Ասթօլ. — Անթօնեօ նախ մօտերը սակարկութիւն մը ունի լմնյնելիք . իրիկուան դէմ, այսինքն գիշերը վրայ հասնելուն պէս ևս առանձին պիտի դամ, թող կինդ պատրաստուի զաւակս ինձ յանձնել և խոստացեալ գումարը ընդունիլ:

Լուիծի. — Պատրաստ պիտի դանէք տէր իմ,

Ասթօլ. — Ընտանեկան անհամաձայնութիւններ զմեղ կատլպեն ձեզմէ ամենախիստ դաղանապահութիւն մը խնդրել :

Լուիծի. — Ա', մի՛ վախնաք, երբ խնդիրը ստակի վրայ է, ևս հատաքըքիլները չեմսիրեր,

Ասթօլ. — Առ այժմ մնայք բարեաւ, քիչ ժամանակէն կը տեսնուինք,

Լուիծի. — Ա, յո՛, քիչ ժամանակէն, երկինք տռաջնորդէ ձեզ և մեծ բարութիւններ պարգևէ :

(Ասթօլ. և Անդանէ. Գիշին)

ՏԵՍԻԼ. Զ.

Լուիծի (Միավու)

Լուիծի. — Կ'նչ երջանկութիւն . . . կ'նչ բաղդ . . . ևս որ այս առաւօտ տասը տուգատի համար հոգիս սատանային կը յանձնէի, ահա հազար հատիկ սոկի, որ երկինքէն կ'իջնէ: Ալ այսուհետեւ միմիայն ինծի համար են ամեն տեսակ ուրախութիւն, զեղիսութիւն, Ապանիոյ պատ-

ուական գինին, խաղատուններ, ծաղկապսակ տիկիններ, պարահանդէսներ, գղեակներ, վեհետիկիւ ուղնուազեական հանդէսներ, վաղը առկէ պիտի մեկնիմ գրաններս լեցուցած և այս ուշնդոկը պիտի այլեմ, Բայց ինչո՞ւ Լինտա, տա կուշանայ . . . ա՛, ահաւասիկ եկաւ, Լինտա, Լինտա, եկու, ի՞նչ ելջանկութիւն:

ՏԵՍԻԼ Է.

(Նոյն. Լինտա սարսափահար վաղէ վրան դլուխը անյարդար, երկու գեղջուհիք վիրաւորեալ ֆրանչէսկինօն զրկած կը մտնեն և ձախ կողմի սենեակը երթան.)

Լինտա. — Աստուած իմ, այս ի՞նչ դժբաղդութիւն է.
Լուինի. — Խ՞նչ կայ Լինտա.

Լինտա. (Զարդէն ելլեւս Քը Եղու Հոնանց լոն ճը ուուրդ) — Ա-ռէ՛ք սա լաթը և վէրքը կապեցէք: (Կանայ+ ուուրդնեալ է յախ հոնէն)
Լուինի. — Ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ . . .

Լինտա. — Սարսափելի դժբաղդութիւն մը, Լուինի. — Լուինի. (Զայրունիւ) — Պիտի բացատրե՞ս . . .
Լինտա. — Ֆրանչէսկինօ . . . լսե՛զն տղան . . . աւաղ, դիպուած մը . . .

Լուինի. — Ֆրանչէսկինօ կըսես . . .

Լինտա. — Վիրաւոր և մահամերձ, թերես մինչև ցարդ մեռած է:

Լուինի. — Ի՞նչ, Ասմուղօին տղա՞ն . . .

Լինտա. — Այս, նոյն ինքը, թո՞ղ որ երթամ և . . .
Լուինի. (Ուրէնքաւ) — Թշուառակա՞ն կին, դո՞ւ ըստաննեցիր զոյն . . .

Լինտա. — Ես . . . ո՞վ Աստուած իմ . . . Ես . . .

Լուինի. — Բայց պատմէ՛ ուրեմն, պատմէ՛, առա թէ ո՞չ կերպնում սատանային դիսուն վրայ թէ այդ սպան-

նութիւնը քու արեամբդ պիտի հատուցանես ինձ , շուտ
ըրէ , խօսէ' .

Լինտա.— Ա՛հ , մի' բարկանար Լուիծի , յանցանքը իմն
չէ . Հայր Անսէլմի վրայօք տեղեկութիւն առնելու համար
քու հրամանաւդ վանք գացած էի , և մի՛չդեռ վանահօր
հետ կը խօսէի , երկու տղայք ալ պատշգամին վրայ կը
խաղային . յանկարծ աղիք գալարող ճիշ մը կը լսեմ և կը
վաղեմ , ի՞նչ սարսափելի տեսարան , Ֆրանչէսկօ , այն չար
տղան զմիւսը այն բարձր պատշգամէն հրելով վար ձգած
էր : Ո՛հ , խեղճ Ֆրանչէսկինօն քարայատակին վրայ բըռ-
ւած , արիւնաթաթախս և գլուխը ջախջախուած կիսամեռ
ինկած էր . անմիջապէս զայն կը վերցնեմ , և օգնութեան
կանչելու ձայնէս ամենքը կը վաղեն . եղբայր Ամպոօղի-
օնըն ալ հոն տղուն քո՞մն էր . աւա՞ղ , անյոյս վիճակի մէջ
է խեղճ տղան :

Լուիծի.— Անյոյս . . .

Լինտա. (Լոււէ) — Խե՛ղճ տղայ . . . զոնէ Աստուած
ներեր ինձի , հսկողութեան պարտքս լաւ չի կատարելուս
համար :

Լուիծի.— Ֆրանչէսկինօ՞ն . . . բայց աղէկ գիտե՞ս , Ֆր-
րանչէսկինօ՞ն է , և մի՞ւսը , այն հարուածը տուողը այդ-
պղտիկ թշուառակա՞նն էր .

Լինտա.— Այո , ինքն էր , ես տեսայ , և որ ինքզինքը
ծածկելու համար այս կողմերը վախաւ . ա՛հ , այս առա-
ւոտ աղէկ կըսէի թէ դահիճ մը և իր զոհը :

Լուիծի.— Բայց չէ' , այս տղան չկընար մեռնիլ և պէտք
չէ' որ մեռնի , կը հասկնա՞ս , ուրեմն դու բան մը չե՞ս ի-
մացոծ այս մասին . . . բայց վաղէ' , վաղէ' այդ տղան
աղատելու :

Լուիծի.— Ո՛հ , որչա՞փ բարեսիրտ ես Լուիծի , աղաչենք
երկնից որ հրաշք մը ընէ , ապա թէ ոչ կորսուած է խեղճ
տղան : (Զա՞բ էռչը բոնէ)

Լուիծի (Արանչեն) — կորսուած, Ասթօլֆօի տղան, որ
քիչ մը ետքը պիտի զան զինքն առնուլ . . . և մեր զան-
ձը, ա'հ, մեր զանձն ալ կը կորսուի, Դժոխնք ինձ դէմ
կելլէ այդ պղափկ ճիւազին գէմքին տակ . բայց ուր է,
ուր պահութած է այդ լտկուը, որուն վրայ պէտք է
արդարութիւնը ի դործ դնեմ: (Այս Թջողին միւսնէնք իւրէն
ժոնէ բառանար և գուշւու ոջ խոռն անեւակը հոնելըն երտը բառար դոյշէ,)
ահ, ահաւասիկ, կ'երդնում գերեզմանիս վրայ որ իւր ա-
րիւնն ալ, . . . (Դաշնայ Բարձրացացած ուեռ է յաջ իւր գուշւ,
յանէրդ յաւաբերէ) բայց ի՞նչ կընեմ . . . վայրկեան մը մաս-
ծելու եմ, (Մասնէ) Տիար Ասթօլֆօ իր տղան չի ճանշնար,
վասն զի նորա ծննդէն ի վեր տեսած չէ . այս Թրանչէս-
գօն, այս աւազակի և մուրացկան կնոջ տղան միւսին հետ
մէկ տարիք ունի, Նախապէս նայինք որ մէկը վրայ չի
հասնի, (Զոյն ուրան առջւ երես, յոյն հնէ) կը պոռան . .
կուլան . . . մեռա՛ւ . ամեն բան լմնցաւ . . . զիշերը
վրայ կը հասնի և մեր մարդն ահա կուգոյ: (Տեսքանը ըլնաց)

ՏԵՐԵԼ Բ.

Լուիծի և Ասթօլֆօ (Երկար Հարություն և Եղջ Վանական)

Ասթօլ, (Մասն առենք, Գիւտու) — Փուռք Երկնից, իշ-
խանուհին և սիրելի Բաօլօս քիչ ատենէն պիտի երջանկա-
նան, ա'հ, ո'րչափ կուշանամ իմ կըտսեր զաւակս ալ իւր
մօրը զիրկն յանձնելու :

Լուիծի. — Դո՞ւք էք Տիար Ասթօլֆօ .

Ասթօլ. — Ե՛ս ուրեմն Լուիծի, զաւակս բերի՞ն,

Լուիծի. — Այս համբերութենէս կը տանջուիմ, շուտ ըրէ,

կանէլ՝ լինուան:

Լուիծի. — Լինուան . արդէն զինքը հեռացուցած եմ:

Ասթօլ.— Եւ ինչո՞ւ համար ,

Լուիծի .— Գիտնալով որ տղէն զատուելու միջոցին շատ ցաւ պիտի դդար :

Ասթօլ .— Խե՛ղճ կին . . . կուզէի դինքը աեսնել և զաւկիս համար տարած այնշափ խնամքներէն շնորհակալ ըլլար :

Լուէծի .— Ես ձեր կողմանէ շնորհակալութիւնիդ կը յայտնեմ իրեն :

Ասթօլ .— Շատ լաւ . . . , ուրեմն զաւակս բերէք , վասըն զի ժամանակ չունիմ վայրկեան մը իսկ սպասելու , վախնալով որ մութին մէջ աւազակաց կը հանդպիմ :

Լուիծի .— Այո , անսնք իմ ընկեր . . . (Յաշտելէալ) այսինքն աւազակներ են , որք ինձ չափ անվախ չեն , այլ տեսած ճամբորդնին կը կոզոպտեն և կը մեռցնեն : Սակայն դուք մէկ քառորդէն լերան ետեւ կողմը անցած պիտի ըլլաք :

Ասթօլ .— Կրնա՞ք ինծի ձի մը ճարել .

Լուիծի .— Հատ մը ունիմ հոս պատրաստ :

Ասթօլ .— Այդ ձիուն համար ձեզի հարիւր տուգատ ոսկի կուտամ :

Լուիծի .— Հարիւր ոսկի՞ , և հազար ալ արդէն պիտի տաք՝ որ կընէ հազար հարիւր տուգատ ոսկի :

Ասթօլ .— Սակարկութիւննիս լմնցաւ , (Ներէն առնայաց) բոյց այս ի՞նչ ազմուկ է :

Լուիծի .— Այ չար սատանայ , անսնք են , այսինքն աւազակները , քիչ մը ատեն սա կողմը պահուըտեցէք տէր իմ :

Ասթօլ . (Դեռ է յան եբալուլ) — Հո՞ն ,

Լուիծի .— Զէ՛ , չէ՛ , (Մէկսով) այ թշուառական , մեռած ողուն սենեակը կերթայ : (Զահի բարեւ իւ իշու) Տէր իմ , սա աջ կողմի պղտիկ սենեակը մաէք ուր պիտի դանէք պղամիկ ֆրանչէսկօն :

Ասթօլ — Զաւակս, այնպէս չէ՝,
Լուիճի, — Բոտ երեսութին,
Ասթօլ — Ինչ երջանկութիւն .
Լուիճի, — Շուտ ըրէք, մտէ՛ք : (Առնօլֆօ ով բռնէն հոնէ :)

ՏԵՍԻԼ Թ.

Լուիճի, Ֆիլիփիօ, Սավիօլա և ոյլ Աւաղակը
Լուիճի. — Ե՛, դո՞ւք եք ընկերք, ինչո՞ւ եկաք,
Ֆիլիփ, — Եկանք հարցնել քեզ թէ՝ մէկը չի տեսա՞ր ,
Լուիճի. — Ո՛չ :
Սավիօ, — Կասկածելի անձանօթ մը որ այս կողմերը կը
թափառէք. կարծեցինք թէ հոս մտած է:
Լուիճի. — Ա՛, հասկցայ ինչ ըլլալը . Լինտայի զաւակաց
միոյն զլսուն եկած մէկ մեծ փորձանքին պատճառաւը
գիւղացիներէն քանի մը հոգի եկած էին :
Սավիօ, — Ամենը այսչափ ,
Լուիճի, — Ուրիշ բան չիկայ :
Սավիօ, — Ըսել կուղենք թէ, կը հասկնա՞ս, կուղէ կոն-
զակուէ դուքսը ըլլայ կուղէ ուրիշ մը, բոլոր ճամբորդնե-
րը մեզ կը վերաբերին :
Ֆիլիփ, — Ուրեմն կըա՛կ բոլոր մեր ձեռքն իյնալիք
մարդկանց վրայ :

Լուիճի, — Ամեն բանի համար պատասխանառու եմ ձեզ,
միոյն թէ դացէք լաւ հոկցէք : (ԱԲՆ+Շ ԴՐՅԱՆ :)

ՏԵՍԻԼ Ժ.

Լուիճի, (ԵՊՒ) Ասթօլֆօ

Լուիճի, (ՄԻԱՆ) — Սրիկանե՛ք . . . եթէ այս մարդը
աեսնէին՝ անպատճառ 4100 սոկին ողիսի յավշտակէին,

որ ըստ օրինի ինձ կը վերաբերի . (Ա.Չ դաստիարակութիւնը հայոց հայութեալ) ահաւասիկ տղան գրկացը մէջ առած է . . . եթէ գիտնար թէ իւր զաւկին դահիճն է . . . (Բարձր) եկէ՛ք աէր իմ, ալ վախ չիկայ:

Ասթօլ . (Կերւէ Արքունութիւն բախտ ուշան էրիստ) —, Զեղիսուսացեալ գումարն այս քսակին մէջ պիտի գտնէք: (Քոսէ հը երիցնէ:)

Լուիճի . (Առանել) — Շնորհակալ եմ:

Ասթօլ . — Եւ ձի՞ն .

Լուիճի . — Դուրսը պատրաստ է . (Զայն իորը բան) Տղան չի տրտնջար գրկացդ մէջ .

Ասթօլ . — Ոչ . եւ կարծեմթէ կը քնանայ:

Լուիճի . — Խեղճ անմեղը . . . Ուրեմն երթայք բարեալ տէր իմ:

Ասթօլ . — Զգիաեմթէ ուրիշ անգամ ալ պիտի կարենամ ձեզ տեսնել . . . բայց Աստուած վարձարէ զձեզ բարի Լուիճի, որ զաւակս ինձ կը յանձնէք անվտանգ:

(Շոտուա ժինք)

Լուիճի . (Միանք) — Ահաւասիկ օրհնութիւն մ'ալ գողցանք, իսկ այս ստակին գալով շատ արդարսւթեամբ առնուած ստակ մը եղաւ.

Լինտա . (Ներկն յոի դրան Արքուն) — Լուիճի, Լուիճի.

Լուիճի . — Ա՛ . քիչ մնաց մտքէս պիտի ելլէիր կնի՛կ.

(Կըստ դաստիարակութեալ.)

ՏԵՍԻԼ ԺԱ.

Նոյն և լինտա (Արդարապետ)

Լինտա . — Աչ, Լուիճի, մեռաւ խեղճ տղան, մեռաւ :

Լուիճի . — Խմացայ . այս, ես ալ կը մնղնամ այդ պըզտիկ արարածը . . . բայց ի՞նչ կը նանք ընել . . . ձեռ-

ւընտաս ի՞նչ կուղայ . . . Տէր ետ և Տէր էառ, կըսէ Դաւիթ,
ասոր հետ մեկտեղ , այնչափ ցաւելու չենք, որովհետեւ
մեր հարազատ զաւակը չէր; Օ՛ն ուրեմն , մխիթարուէ՝
հոս նայէ, հոս, ահաւասիկ քսակ մը ոսկի .

Լինտա . — Ուսկի՞ ; . . . ո՞ւսկից ձեռք ձգեցիր .

Լուիճի. (Զայն Խորը Պահէլուէ) Նայէ՝

Լինտա . — Մեկնելու մօտ ձիաւոր մը ,

Լուիճի . — Ֆրանչէսկիցնօի հայրը .

Լինտա . — Իւր հայրը , Ասթօլֆօ՞ն .

Լուիճի . — Որ տղան առնելու եկած էր .

Լինտա . — Աստուա՛ծ իմ . և դու ամեն բան իմացուցի՞ր
իրեն .

Լուիճի . — Ոչ :

Լինտա . — Ի՞նչպէս ,

Լուիճի . — Զե՞ս հավակնար կնի՛կ .

Լինտա . — Ի՞նչ ըրի՛տ .

Լուիճի . — Զաւակը իրեն յանձնեցի :

Լինտա . — Բայց ո՞րը .

Լուիճի . — Ֆրանչէսկօն :

Լինտա . — Տղուն դահի՞՞ծը .

Լուիճի . — Զայն դրկացը մէջ սեղմեց և ճշմարիտ հօրմէ
մը աւելի երջանկացեալ մեկնեցաւ, (Կ'անչ սպանութ համեւէ)

Լինտա . — Ա՛հ, թշուա՛ռ մարդ, զանի այսպէս խարե՛լ,
բայց օճիր մ'է .

Լուիճի . — Ոճիր մի՛ . կորէ՛ր սընկէց , զայն մեծ յու-
սահատութենէ մը և քեղ ալ պղտիկ թշուառականէ մը
աղատեցի, միանկամայն այն պղտիկ թշուառական տղան
օր օր մը անշուշտ հօրը պէս աւաղակ պիտի ըլլար, ահա-
ւասիկ մեծ իշխանի մը ժառանդորդ ըրի . . . 1100 սո-
կին ալ այն հաշուէն դուրս է : Աշխարհիս վրայ ուրիշ
գործ մը գտիր ինծի որ ասկէ աւելի բարի ըլլայ :

Լինտա. — ԱՇ Լուիծի, վատաւթիւն է այդ . (Զակ ու բարձր է ծովաք և յետերը երկնակալ) Խեղճաց, գահին գլուխ կը յաջորդէ :

Լուիծի. (Քսանիք ժողովելք) — Հաշիւը շիտակ է . . . հիմա դորձին միտագոծ մասը նոյինք :

ՏԵՍԻԼ ԺԲ.

Նոյնը, Ֆիլիփիփօ, Սավիօլա և այլ Աւազակը

Ֆիլիփ. — Զիաւո՞ր մը որ սա կողմէն կը փախչի . . . ա՛ն. Լուիծի, մատնեցի՞ր զմեզ:

Լուիծի. — Սատանա՞ն տանի ձեզ:

Ֆիլիփ. — Շուտ, Սավիօլա, սա այլ կողմէն փախչող մարդուն և ձիուն վրայ կրակ ըրէք .

Սավիօլ. (Խորը գույք և հրացանը դարձու :)

Լուիծի. (Սակաւակ հոգորդէն բռնելք) — ԱՇ թշուառական, արդեօք ձի՞ս սպաննեցիր :

ԶԳԻ ՎԱՐԱԳԱՅՐՆ



ՊԵՏԿԵՐ Բ.

(Առաջինէն 47 տարի ետքը)

(ՖՐԱՆԶԷՍԳՈ ԿԱՐԾԵՑԵԱԼ ՀԱՐԱՋԱՏ)

Տեսարանն է Մանթուի դքսական պալատին մէկ սրահը,
Խորը և երկու կողմը դռներ :

ՏԵՍԻԼ Ա.

Իշխանուհին Լէօնուա և Դքսուհին Պիանգա (Նորած)

Լէօնուա .— Մտատանջութենէս կը մեռնիմ , սիրելիդ իմ
Պիանգա , ահաւասիկ այս վեցերորդ օրն ալ կանցնենք ա-
ռանց իմ սիրելի բաօլօէս լուր մը առնելու :

Պիանգա .— Հանդարաեցէք, տիկին , արդէն կը յիշեմ թէ
հայրս Ֆէրարի դուքսը զիս Զեր վսեմութեան քով բերած
ատեն դուք կը դողայիք ձեր անդրանիկ որդւոյն վրայ ,
սր Վենետիկցոց օդնելու համար Մանթուի դքսութեան
արթ բանակաց գլուխն անցած էր , և ասկէ մեկնելուն հե-
տեւեալ օրը Հունգարացւոց դէմ աարած այն մեծ յաշ-
թութեան լուրը առիք . այս անդամ ալ կը յուսանք թէ
այնպէս պիտի ըլլայ :

Լէօնօ .— Բայց մտածեցէք անգամ մը թէ՝ ամբողջ վեց
օր է իւր վրայօք լուր մը առած չենք . այս մասին ոչ պատ-
գամաւոր մը և ոչ ազդարարութիւն մը եկած է մեզ Ման-
թուէն . ընդհակառակն , մատնութեան և թշնամոյն ծախ-
ուած ըլլալու տարածայնութիւն մը կը պտտի ,

Պիան. — Սակայն, տիկին, տակաւին հաստատութիւն գտած չէ այս աղետաբեր տարածայնութիւնը Երկինք, որ ուրիշ անգամներ օդնած է ձեզ այնչափ վտանգներէ առատուելու համար, այս անգամ ալ չպիտի թողու որ զրբկուիք ձեր անդրանիկ զաւկէն՝ որ իւր մօրը անու անը պատիւ և հօրը գահուն նեցուկն է:

Լէօնօ. — Երկինք . . . ահ ինչո՞ւ ինձ երկնից խօսքը կընէք, որ թերես իրեն գէմ մեղանչելուս համար հիմա իւր բարկութեան շանթերը գլխուս վրայ կիջեցնէ:

Պիան. Երկինք զջեզ պատու հասե՞ն . . . զջե՞զ տիկին, որ այնչափ բարի և ողորմած էք. ի՞նչ ըսել կուզէք այդ խօսքերով.

Լէօնօ. — Աւա՛ղ, անարդարանալի յանձանք մը գործ ած եմ. Պիանգա, խիստ անարդարանալի, այն է՝ կրտսեր զաւկէս աւելի անդրանիկ որդիս սիրելս : Մայր մը իւր սէրն ու զօրովը հաւասարապէս պէտք է որ բաժնէ իւր աղոցը վրայ. բայց իմ մասիս չզիտեմ թէ ինչո՞ւ համար այս նախադատութիւնը հակառ սկ կամացս տեղի ունեցաւ: Ասկէց ԱՇ տարի առաջ արիւնուու շտ Պօնաքօսի մարդկանց ձեռքէն վասիչելու տաենս, բազկացս մէջ ունենալով Բաօլօս, իւր անմեղ գլուխն ալ իմ և հօրը նման վասնգի մէջ րլլալը ինձ աւելի ցաւ և կսկիծ պատճառելուն համա՞ր է արդեօք որ զինքն աւելի կը սիրեմ. բայց ինչ որ ալ ըլլայ՝ երբոր դուքսը հեռաւ ինձմէ օտարականներէ մնուցեալ ֆրանչէսդօ կրտսեր որդիս ինձ ներկայացուց, սիրտս իւր տեղեան ամենեին չզգաց այն համակրանքն ու զգացումէ՝ որ կը յուսայի: Ահա այս է իմ յանցանքու, զոր ամօթալից կը խոստովանիմքեզ Պիանգտ, տկամայ դործուած յանցանք մը, որոյ համար Աստուած զիս կը գատապարտէ և շատ անգամ կը պատժէ այնպիսի մայրերը, անոնց այն կոյք գորովանաց առարկայն շանթահարելով :

Պիան. — Սակայն Բաօլօ իշխանը իւր բարի յառկութիւններովը ձեր ամեն գորովանացը արժանի է :

Լէօնօ. — Այս, ազնիւ երիտասարդ մ'է Բաօլօս. այնչափ գեղեցիկ՝ որչափ քաջ. հաւատացէք մօր մը խօսքերուն զիանդա, թէ երջանիկ նշանած մ'էք դուք:

Պիան. — Տի՛կին .

Լէօնօ. — Ո՞հ, խիստ երջանիկ եղու այն օրը ինձ համար, երբ ընտանիքէս սերացած իշխանի մ' հետ կնքելիք գաշնագրութեան գաղափարը յղացայ, որուն այնչափ քաջութեամբ օգնեց իմ ամուսինս և իւր գահը յաջողեցաւ ձեռք բերել . . . բայց ի՞նչ ունիք, զլուխնիդ անդին գարձուցեր խոռված կերեւիք . արդեօք ձեզ վա՞խ կը պատճառէ այս ամուսնութիւնը .

Պիան. — Վա՞խ կըսէք, տիկին, և ինչո՞ւ վախնամ, մինչ տակաւին երիտասարդ իշխանը ճանչելու պատիւն ունեցած չեմ, բայց եթէ միմի այն իւր քաջաստրատութեանց պատմութիւնները լւելու բարեբարդութեանն որժանացած .

Լէօնօ. (Զայն ռէպէւլ) — Բայց դուք կը ճանչնաք անոր եղբայրը, ասմինքն Ֆրանչէսկօ իշխանին վրայ ի՞նչ գաղափար ունիք .

Պիան. — Բոլոր աւ ազ անին կը գարմանայ ֆրանչէսկօ իշխանին գթասրատութեանը, բարեբարատութեանը և անխրուով քաղցրութեանը վրայ. ուրեմն արժանի է նարին վոեմութիւնը իմյարդ անացս և վստահութեանս :

Լէօնօ. — Բայց անոր հետ ահանուած ատենիդ իւր եղբօրը վրայօք ի՞նչ կերպով խօսած է ձեզ .

Պիան. — Խանդակաթ և անկեղծ սիրով մը . ցաւելով միանդամայն իւր ամենասուիրելի Բաօլօ եղբօր բացակայութեանը վրայ որ իւրեն հաճելի երկեցող մեր ամուսնութիւնը երկարածելու պատճառ եղած է, որով զիս իւր քոյրը պիտի անուանէր .

Լէօնօ. — Ուրեմն ի՞նչպէս կըլլայ որ Ֆրանչէոգո իւր հօրը դքսին կիմացնէ թէ դուք այս ամուսնութեան ոչ հաճութիւն և ոչ ալ պատրաստութիւն ունիք։

Պիան. (Խոսքեալ , յորու) — Ո՛վ երկինք . . . ատիկայ ըսած է .

Լէօնօ. — Երէկ իսկ :

Պիան. — Արդեօք սրտիս ամեն գաղտնեացն ալ աեղեան է .

Լէօնօ. — Տեղեա՞կ . . . ի՞նչ ըսել կուզէք , բացայայտ խօսեցէք :

Պիան. — Ոհ , տիկին , չպիտի կրնամ համարձակիլ .

Լէօնօ. — Վստահ եղիք , հոս մէկը չուզեր ձեր կամքը բռնաբարել , բայց ես իրաւունք ունիմ , ինչպէս որ դուք ալ կը վկայէք ճշմարտութիւնը իմանալու . աեսմենք , խօսեցէք . ի՞նչ կը նշանակէ ձեր այդ յուզմունքը . միթէ ազատ չէ՞ ձեր սիրտը Պիանգա .

Պիան. — Ուրեմն տիկին , ամեն բան իմացէք : Ասկէց քանի մը ամիս առաջ , նոր դքսին թագադրութեան հանդիսին ներկայ գանուելու համար մօրաքեռու էսթի դըքսուհւոյն հետ վենետիկ գացած էի . իրիկուն մը մեծ ջրանցքին վրայ մեր նաւակը երիտասարդ պարոնի մը նաւակին հանդիպեցաւ , որ շուայարանէ մը դուրս կ'ելլէր , և որ անամօթաբար զմեզ անարգեց . օգնութեան աղաղակ բարձանք , բայց աւա՞զ , մեր նաւափարներն առաջուց կաշառուած էին , երկու սրիկայներ դքսւէհին բռնած էին որ արդեւք չըլլայ , և մինչդեռ թշուառականը զիս կը բռնադատէր իր նաւակն անցնելով պալատն երթալու , իմ հանած աղաղակներէս յանկարծ երիտասարդ ազնուական մը վրայ հասու իր ծառաներովը , զիս առևանգել ուզողին հետ սուրը խաչածելով զայն սպաննեց և զիս ազատեց . Հնորհակալեաց յայտաբար մի քանի խօսքեր թոթովելու և

անոր հետ նայուածք մը փոխանակելու հաղիւ թէ ժամանակ ունեցայ, վասն զի զիս ազատելով մօրաքեռս դիրկը յանձնելէն ետքը շտապաւ հեռացաւ . անշուշտ խոհեմութիւնը ու ազնուարտութիւնը զինքն ստիպած էր իւր ով ըլլալը մեզմէ ծածկել, որովհետեւ այն վայրկենէն վերջը ալ զինքը չի տեսայ . . . սակայն վայրկեան մը բաւական եղաւ ինձ նորա յիշատակը հոգւոյս մէջ քանդելու, և կարծեմ թէ աւա՛ղ անկէց չպիտի սրբուի մինչեւ յաւիտեան : Կը ներէ՞ք հիմա ինձ տիկին :

Լէօնօ.— Ա.յո՛, սիրելի զաւակս, կը ներեմքեզ այդ բընական ճշմարիտ դդացմանդ համար որ միմիայն այսպիսի դէպքէ մը կրնար յառաջ դալ, բայց թողէք ինձ յուսալ թէ ժամանակը և մեր խնամքները պիտի կարենան այդ յիշատակը ձեր սրտէն ջնջել և օր մը զձեզ իմ աղջիկս անուանել :

Պիան.— Տիկին .

Լէօն .— Ա.յդ անծանօթը ա՛լ չպիտի տեսնէք, ուրեմն . . . բայց ահաւասիկ դուքսը . . . ամենեւին մի՛ վախնաք Պիանդա այն դադանեաց համար դոր ինձ հաղորդեցիք :

ՏԵՍԻԼ Բ.

Նոյնը, կույսու և Անթօնիո

(Կույսու համբաւոյւ յառաջնորյ համարութեան և բայց նահան հայ յերաւ . իոն Անթօնիո իւրը կնոյա)

Լէօնօ.— Ա՛հ, տէր իմ, ի՞նչ կը նշանակէ այդ նամակը Ձեր ձեռացը մէջ, արդեօք զաւկէս բարի լո՞ւր մը . . .

Կույսու .— Ո՛չ Լէօնօւա, միշտ միւնոյն անստգութեան մէջ եմք, մեր զրկած պատգամաւորները տակաւին չի վերադարձան, ասիկա մէրարի դքսին մէկ նամակն է, Պիան . (Զաքոննու) — Հօրմէ՛ս . . . :

Կուի. — Այս Պիանդա հօրմէդ, որ ձեր իւր գրկէն այս շափ ատեն հեռանալէն զգացած արտմութիւնը կը նկարադրէ, յայտնելով միանդամայն թէ ծերութենէ և հիւանդութենէ տկարացած մարմինը ձեր խնամոցը կը կարօտի, ասկէց զատ, կը խնդրէ նաև որ ձեր հարսանիքը իւր ներկայութեանը կատարուի խօսեցելոյդ բաօլո իշխանին վերադարձէն անմիջապէս ետքը, ուստի Ֆէրարի մէջ պիտի սպասէք իշխանին և այս երեկոյ ճամբայ պիտի ելնէք ձեղ վայել ուղեկից գնդով մը:

Լէօնօ. — Այս իրիկուն . . .

Կուի. — Դքսին կամքը անդառնալի է. ուրեմն Լէօնօսա ձեր հաւատարիմ աղախիններէն մին ընտրեցէք որ դըքսուհոյն պիտի ընկերանայ,

Լէօնօ. — Եկուր ուրեմն դուստր իմ սիրեցեալ, ի միամին անցնենք այն վերջին վայրկեանները զոր տակաւին հոգ պիտի անցնես : (Պէտակայի հետ Գէնին)

ՏԵՍԻԼ Գ.

Կուիտօ, Անթնիօ (Եսու) Պէքօ

Կուի. — Խեղճ կին, որչա՛փ մեծ պիտի ըլլայ իւր ցաւը ըստ իմ համոզմանս . . . ո՛հ, այս լուսութիւնը անբացատրելի է և անտանելի, եթէ տակաւին երիտասարդ ըլլայի՝ անձամբ կերթայի բաօլոս տեսնելու : Անթօնիօ, Ֆրանչէստո իշխանը ինձ կանչեցէք : (Նորի և Քոհի)

Անթ. (Զանէտու լոբնէ, Պէտու լուսու հոնէ)

Պէքօ. — Է՛, Է՛, քիչ մը կամաց, ականջիս թմբուկը պիտի ճաթեցնէիր, գիտե՞ս .

Կուի. — Անկի՛րթ . . . :

Պէքօ. — (Սոբասէտահու) Նորին վսեմութիւնը . . .

Անթ.—Տէր իմ, այս մարդը Պէքօ Քարօնին է, տեսակ մը խենդ՝ զոր Ֆրանչէսգօ իշխանը իւր ծառայութեանը կը գործածէ չգիտեմ ի՞նչ պատճառաւ :

Պէքօ.—Լարեկցութեան պատճառաւ տէր իմ, միմիայն կարեկցութեան պատճառաւ, կըսէ թէ ես խիստ պարզ մէկն եմ աշխատելու համար . . . և զիս կը գործածէ բան մը չընելու համար . . . հաղիւ թէ աշխատութենէն կը դադրէի՝ երբ Տիար Անթօնիօ զիս ընդմիջեց :

Անթ.—Գնա՛ իշխանին իմացուը որ Նորին վսեմութիւնը կուզէ զինքը տեսնել :

Պէք.—Ե՞ս անոր իմացնեմ, լաւ . բայց եթէ շատ սահլողական գործ մ'է, գացէք դուք անձամբ իմացուցէք:

Անթ.—Ի՞նչ կըսես, յի՛մար, ի՞նչ կըսես .

Պէք.—Ներեցէք . . . ըսե՛ կուզեմ թէ չենք կրնար այս միջոցիս անհանգիստ ընել իշխանը, որովհետեւ . . . (Ա.Հ Էպի Քուազ Բայան) բայց ահաւասիկ իշխանը .

ՏԵՍԻԼ Դ.

(Նոյնք, Ֆրանչէսգօ, որ խոնարհութեամբ մտնէ և պարզ զգեստներ հագած է . ետեւէն Սրոլէթթա կրօնաւորի զգեստով կը մտնէ :)

Ֆրան. (Սբութենիցին) — Առէք այս քսակը հա՛յր, և իմ ամենասիրելի Բատօլո եղբօրս բարեյաշող վերադարձին համար աղօթքներ ըսել տուէք բոլոր վանքերուն մէջ :

Կուի. — Շատ բարի գործ մ'է այդ ըրածդ որդեակ իմ: Ֆրան. (Զաքուանու) — Հայր իմ, դուք հո՞ս էիք . Կուի. — Մեծ խնդրոյ մը վրայ խորհրդակցելու համար զքեզ հոս կանչեցի:

Ֆրան. — (Խոհաբեններմբ) Աւազը հայր իմ, պատրաստ եմ յօժարակամ զձեղ մտիկ ընել ցորչափ ալ տխրութեանց մէջ լինիմ, բայց Զեր վսեմութիւնը թողի նկատի առնու այսպիսի գործերու մէջ իմ ունեցած անյարմարութիւնս, ոչ փառասիրութիւն ունիմ և ոչ ալ հանճար, Բաօլո եղբայրս հոչակառ որ հանդիսացած է թէ պատերազմի, և թէ Զեր խորհրդոցը միջամտելու ունեցած յատկութիւններովը, իրեն համար են ամեն փառք և ձեղյաջորդելու բաղդը. իսկ իմ բաժինու է առանձնութեան մէջ անցնել ժամերս և մանաւանդ Զեր ամեն կամացը հնազանդիլ :

Կուի. — Եւ ես այդ հնազանդութեանդ համար զբեղ հոս կանչեցի :

Ֆրան. — Ուրեմն ի՞նչ կը հրամայէք հայր իմ.

Կուի. — Վերջին ծայր պարկեշտութիւնդ զբեղ կը կուրացնէ որդեակ իմ, բայց ես քեզմէ աւելի ճանչցած եմ քու արժանիքով. Բաօլոի բացակայութեան ատեն պէտք է դու կատարես այն գերը՝ որ Կօնզակուէի տան մէկ իշխանին կը վերաբերի. պէտք է որ անձամբ Վենետիկ երթաս եղբօրդ վիճակէն ճշդրիտ տեղեկութիւններ սահանալու, հոն, եթէ դժբաղդութիւն մը պատահած է իրեն. . .

Ֆրան. — ԱՇ, իցիւ թէ Աստուած զմեղ այդպիսի դըժբաղդութենէ մը զերծ պահեր :

Կուի. — Ես կ'երաղեմ որդեակ իմ և չեմ ուզեր գոժբաղդութիւններ նախագուշակել, սակայն եթէ եղբայրդայս միջոցիս դժբաղդութեամբ մը իր բանակին դլուխը չի գտնուիր, պէտք է որ իմ անուամբս մեր դաշնակից դըժսութեանց մէջ պատուառ կերպով խաղաղութեամն դաշնագիրն դու ստորագրես :

Ֆրան. — Կը հասկնամ տէր իմ.

Կուի. — Բայց տակաւին ամեն ընելիքներդ չիմացուցի:

Ֆրան. — Ուրեմն բարեհաճեցէք իմացնել .

Կուի. — Ֆէրարի դքսութեան պալատը դրեթէ ձեր ճամբուն վրայ կիյնայ, օրիորդ Պիանգան, ձեր եղբօր նըշանածը իւր հօրը վերադարձէք :

Ֆրան. — Ա՛հ.

Կուի. — Արդեօք այս պաշտօնը անհաճոյ կը թուի ձեզ.

Ֆրան. — Ոչ տէր իմ, ոչ, Զեր այս հրամանն ալ պիտի կատարեմ:

Կուի. — Պիտի բացատրեք դքսին այն աղետալի պատճառները, որ կ'երկարաձգեն այս ամուսնութիւնը, որուն երկու դքսութեանց ալ մեծ օգսւտ ունենալը հասկցած եմք, վասն զի մենք երկու դաշնակիցքս միանալով կրնանք բոլոր իտալիոյ իշխանութեանց թշնամութիւններէն ազատ մնալ, Յայտնե՞մ քեզ վերջապէս որդեակ իմ ինչ որ կը մըտածեմ, կուզեմ որ եթէ իմ անդրանիկ զաւակս, գահոյս ժառանգորդը անագորոյն բաղդին հարուածոցը տակ ճընշուած է . . .

Ֆրան. — Ա՛հ, տէր իմ, ես այդ կերպով ըլլալիք իշխանութիւնը ամենեւին չեմ ընդունիր.

Կուի. — Հանդարտէ որդեակ իմ և ինձ մտիկը ըրէ, կուզեմ աշխարհի ցուցնել իմ արիւնէս իշխան մը՝ իւր հօրը և եղբօրը արժանի յաջորդ: Առ այժմ ասկէց աւելի ըսելիք մը չունիմ քեզ: Այս իրիկուն պիտի մեկնիք, բայց մեկնելէ առաջ պարտիք ինձ ներկայանալ վերջին հրամաններս առնելու համար:

Ֆրան. — Հա՛յր իմ: (Կուիտո Յետք եւինցնէ, Ֆրանկոն զայն համբուցնելն եւուը ձառն էը մայ մնչւա որ Դաստոց մբնէ:)

Տէ՛ՍԻԼ Ե.

Ֆրանչէսկօ (Առաջին)

(Եռէսելւ) Վերջապէս ամեն բան իմ շինած յատակա-
գծիս համեմատ կընթանայ . . . հօրս պատգամաւորները
մէկիկ մէ կիկ ծուղակս ինկան . Բաժօ՛ եղբօրս նամակները
իմ կողմակիցներուս ձեռոքը արգիլուեցան և կամ թըշ-
նամնոյն ձեռոքը հասան , ինքն իթկ վերջին պատերազմին
մէջ յաղթուած և իրեններուն մատնութեամբը թշնամնոյն
ձեռոքը գերի ինկած ըլլալով անշուշտ մինչև հիմա փառա-
ւորապէս մեռած է , և այս բօթաբեր լուրը շատ չի քշեր
մեր ականջացը պիտի հասնի . ողբոց և վայոց սարսափելի
աղաղակներով արձագանք պիտի առնուն պալատիս պա-
տերը . . . այո՛ , Սրոլէթթա իւր դերը աղէկ կատարեց . .
ինձմէ ընդունած ոսկիները իւր հաւատարիմ ընկերացը
բաժնեց . . . և ես այսօր ի Ֆէրար պիտի տանիմ այն
սքանչելի Պիանգան , եղբօրս նշանածը , այն երկնային գե-
ղեցկութեան տիպարը՝ զոր ամեն անդամ տեսնելուս մար-
մինս կը դողայ և ցուրտ քրտինք մը վրաս կը տարածուի :
(Քիւ հը Տառնելին երեւ) Աղէկ խաղացիր , աղէկ ներկայացու-
ցիր քու դերդ ֆրանչէսկօ . . . ինչո՞ւ համար բաղդը գերեզ
կրտսեր ծնած է , մինչդեռ անդրանիկ լինելու կոչումն ու-
նէիր . բաղդէն այնչափ սիրեցեալ և փառաւորեալ այդ
անդրանիկը , մօրմէո ինձմէ նախապատիւ համարուած այդ
զաւակը որ բազդաւոր ծնունդ , պատերազմի փառք և իշ-
խանական պերճութիւնք անպակաս կը վայելէ չգիտէ թէ
ես . . . ես անգունեալս . . . ես այս խրոխտ կօնպակուեի
տան անարդուած կրտսեր որդին , ես ալ ատելութեան և
շահու մեժ հանճար մը ունիմ . (Խնդրալով) այո՛ , այո՛ , հա-

ւասար են մեր զէնքերը, վեր ի վերոյ չգիտեմ ի՞նչ ար-
դայական երաղ մը կը յիշեմ. . . եզրօրս դէմ բարկանա-
լով զինքը բռնեցի և խոր անդնդի մը մէջ դահավիժեցի,
ուսկից հանեցին իւր արիւնաթաթախ և անչափացեալ մար-
մինը. միթէ ասիկայ իմ ապագայ բազգս չէ՞ր որ նախա-
գուշակ եղաւ ինձ, Թող ուրեմն երազն իրականութեան
փոխուի, այլ ի՞նչ կըսեմ, կատարուած է արգէն ամեն
բան, զի Բազօծ մեռած է անշուշտ :

ՏԵՍԻԼ Զ.

Նոյն և Պէքօ

Պէք. — Տէր իմ . . . ինքը . . . բանը . . . այսինքն . . .
պատգամաբեր մը հասաւ :

Ֆրան. — Պատգամաբեր մը . . . վենէտիկէ՞ն .

Պէք. — Այս տէր իմ, և Բաօլօ իշխանը, . . .

Ֆրան. — Յառաջ տար, խեղճ եզրայրս մեռա՞ծ է .

Պէք. — Ոչ, կը վերադառնայ,

Ֆրան. (Երես երեւլ) — կը վերադառնայ,

Պէք. — Ահ, ի՞նչպէս ալ Զեր անոր բարեյածող վերա-
դարձին համար ըսել տուած ազօթքները լուելի եղան ա-
ռաջի Աստուծոյ :

Ֆրան. — Բայց անկարելի՛ է այդ, կը խաբուիս . եզրայ-
րս աղատած :

Պէք. — Մանաւանդ յաղթող հանդիսացած, կ'երեի թէ
առաջ ծուղակը ինկած է եղեր, բայց ետքը հրաշքով մը
աղատած ըլլալու է . իւր քաջարտութիւնը և սուրը . . .
չ'երկնցնեմ, երբոր ինքը վերադառնայ, ինձմէ աւելի կըր-
նայ ձեզի բացատրել :

Ֆրան. (Մեկո՞ւն) — Ահ, բոլոր չանքերա ի գերեն կ'ել-

լեն, և արդեօք մատնուեցած. . . (Բաբել) Պէ՛րո, ինձի
կանչէ Սբոլէթթան :

Պէր.— Ո՞ր Սբոլէթթան .

Ֆրան.— Քիչ մը առաջ առկէց մեկնող մարդը .

պէր.— Հա՛, Սբոլէթթա՞ է անոր անունը . (Դրուն իշխանութեան և նուստաբանաց Յայն,) ահաւասիկ տէր իմ, եղբայրնիդ կը վերադառնայ . կը լսէ՞ք .

Ֆրան . (Մեկուսէ) — Ա՛հ, փոխանակ յուղարկաւորութեան հանդէսով գալու, յաղթական փառօք կը վերադառնայ . . . խաբեցին զիս, խաբեցին . . . սակայն չի վհատինք և դարձեալ գործենք :

ՑԵՍԻԼ Է.

Նոյնք, կուիտօ, Լեօնօռա, Բաօլօ, Անթօնիօ և
Ժողովուրդք

Ժողովուրդք.— Կեցցէ՛ Բաօլօ իշխան .

Լէօնօռա . (Դրէս շբառաւ) — Բաօլօ՛, զաւակս .

Ֆրան . (Բառէ էլլու ներուն) — Ա՛հ, սիրելի եղբայր, արդեօք իրա՞ւ է որ երկինք զքեզ իմ գորովանացս կը յանձնեն .

Բաօլօ.— Սիրելի ֆրանչէստօ, ասկէ աւելի նուազ գորով չէի սպասեր ձեզմէ . երբ մահը ի մօտոյ կը տեսնէի, դիտէ՞ք ի՞նչ բան էր զիս միմիթարողը, կը մտածէի թէ հօրըս դահուն նեցուկ եղբայր մ'ալ տակաւին ունէի, որ . . .

Լէօնօ,— Ա՛հ, մի՛ այդպէս խօսիր, որդեակ իմ, եթէ Դու մեռնէիր, ես ալ քեզմէ անմիջապէս ետքը պիտի մեռնէի . . .

Քրան . (Մեկուսէ) Կ'երևիթէ իւր կըտսեր զաւակը այնախ բանի տեղ չի դներ :

Կուի. — Անթօնիո, որդւոյս Բաօլօի հետեւող քաջ զի-
նակցացս համար ընդունելութեան շքեղ հանդէս մը կա-
տարել պատրաստուեցէք. բոլոր աւագանին թող յաղթա-
կան կամարներ կանգնէ անոնց անցնելիք ճամբուն վրայ
և կանայք ծաղիկներ սփռեն, իսկ արքունիքս ինձ պիտի
ընկերանայ պալատին դրան առջև դիրենք գիմաւորելու:

Ժողով. — Կեցցէ՛ Բաօլօ իշխան:

(Անթօնիո, պէքօ և ժողովուրդք մեկնին.)

ՏԵՍԻԼ Ը.

Կուիտօ, Լէօնօռա, Բաօլօ և Փրանչէսդօ

Կուի. — Որդեակ իմ Բաօլօ, քու վերադարձիդ համար
եղած խնդումներէն ու շնորհաւորութիւններէն վերջը
կուզեմ ընտանեկան գործոց վրայօք խօսիլ քեղ, զոր ար-
դէն նամակացս մէջ ալ յիշած եմ:

Բաօ. — Զեր նամակնե՛ը . . . բայց չգիտէ՞ք թէ ա-
նոնցմէ մէկն ալ իմ ձեռքս չի հասաւ:

Կուի. — Ճշմարիտ է զաւակս, և այս վատութիւնը որ
միմիայն պալատիս մէջէն մէկուն գործն է, ամենասարսա-
փելի կերպով պիտի պատժուի:

Բաօ. — Ներուի ինձ հարցնել հայր իմ, թէ ի՞նչ է ու-
րեմն Զեր վսեմութեան նպատակը:

Կուի. — Քու երջանիկ ամուսնութիւնդ վաւթացնել:

Բաօ, (Դաշնար) — Ամուսնութիւն . . .

Լէօ. — Այո, Փերալի երիտասարդ դքսուհւոյն հետ,
որոյ հայրը մեղյանձնած էր զինքը:

Բաօ. — Բայց ես երբէք ճանչցած չեմ երիտասարդ

դքսուհին:

Կուի. — Կատարեալ աղջիկ մ'է, որոյ արժանիքն ու գե-
ղեցկութիւնը մօրդ կողմանէ ստուդուած է, և որ ձեզ

բացակայութեանը միջոցին ունեցած վախերնուս ընկերացած է. թէեւ կուզէի որ օրիորդ Պիանգա ալ ձեր վերադի ուրախութեանց մասնակցեր. . .

Լէօնօ. — Պիանգա ուզեց այս առաջին վայրկեանները ծնողացդ այլայլանացը թողուլ և իր մեկնելու պատրաստութիւնները . . .

Բաօ. — Մեկնելու . . .

Կուի. — Հայրը իւր քով կը կահչէ զինքը, ուր Պիանգա պիտի սպասէ ձեզ, եթէ հաւանիք իմ անոնց տուած խօսքը պահել.

Բաօ. — Հայր իմ, ամենեւին ամուսնանալ չէի մտածեր, բայց եթէ այս ամուսնութիւնը ձեր դահուն փառացն և հաստատութեանը պիտի նպաստէ, պատրաստ եմ ընդունելու :

Ֆրան. (Մեկնուք) — Ի՞նչ պաղ արիւն խօսուածք :

(Դրան ինքունիւնն յայն)

Կուի. — Եկէք տիկին, պալատին պատշգամը երթանք, իշխան մը երբոր քաջ և օրինապահ հպատակացը իւր շնորհակալութիւնքը յայտնել կը պարտաւորի, պէտք չէ որ զանոնք ընդ երկար սպասեցնէ : (Կուիտ և Լինուս Գինին :)

ՏԵՍԻԼ Թ.

Բաօլօ և Ֆրանչսդօ

Ֆրան. (Մեկնուք) — Արդեօք ինչո՞ւ խռովեցաւ . (Բաօլօ) սիրելի՝ իշխան .

Բաօ. — Ի՞նչ կըսես Ֆրանչսդօ, հոս ոչ իշխան կայ և ոչ վսեմութիւն, այլ երկու եղբայրներ . . . մինակ ենք, և պատերազմի հոգերէ վերջը ուրիշ բանի չեմ կարօտիր: Բայց եթէ ընտանեկան քաղցր գորովանաց և ուրախութեանց:

Ֆրան.— Ես հակառակը կը մտածէի , տեսնելով ձեր այնչափ զգուշաւոր գերքը որ խիստ կը նեղուէիք չի մատանուելու համար:

Բաօ .— Դուք նշմարեցի՞ք զայն .

Ֆրան.— Այս , երբ հայրս այն ամուսնութեան վրայօք կը խօսէր ձեզ:

Բաօ .— Այդ ամուսնութիւնը . . . այս' , ճշմարիտ է , բայց ես ուրիշ պատճառաւ խոռվեցայ:

Ֆրան.— Եւ այդ պատճառը արդեօք քու եղբայրդ չի կրնար իմանալ:

Բաօ .— Ինչո՞ւ չէ . ահա կիմացնեմ թէ այս ամուսնութեան պազ աչօք նայելուս պատճառը ոչ այլ ինչ է , բայց եթէ արդէն ուրիշի մը սիրոյն գերի ըլլալս:

Ֆրան.— Ուրիշի՞ մը . (Ու-էս) ա'հ խօսէ եղբայր իմ , խօսէ , չես կրնար երեակայել թէ որչափ եռանդով ու սիրով կապուած եմ այդ . (Յա-շբերեալ) ամեն բաներուն որ քեզ կը պատկանին:

Բաօ .— Ահ , եղբայր իմ , լսէ ինձ թէ ես խենթ մ'եմ և թերեւու յանցաւոր մը , որ անծանօթ աղջկան մը համար այս գիսի անյոյս զգացում մը սրտիս մէջ կը պահեմ . հըրեշտակի մը համար , զոր աւազ , մէկ մ'ալ տեսնելիք չունիմ . . . Ա'հ , օգնէ՛ ինձ եղբայր իմ այս սիրոյ դէմ բացած պատերազմիս յաղթող հանդիսանալսւ , ապա թէ ոչ նա պիտի փութացնէ իմ մահու և պիտի յաղթահարէ զիս:

Ֆրան.— Աստուած չընէ որ ես քու երջանկութեանդ արդելք ըլլամ . ե՞ս յազթեմ քու սրտիդ այդ իրաւացին մաքուր զգացմանը . . . ոհ , ճանչցիք զիս եղբայր իմ , ֆրանչէսդօ ուրիշ բանի համար չպիտի օգնէ քեզ , բայց եթէ քու անծանօթ սիրուհիդ փնտուել գտնելու եթէ աշխարհիս մէկ ծայրն իսկ զացած ըլլայ :

Բառ . — Դո՞ւն . . .

Ֆրան . — Եղբօրդ հաւասարմութենէն կը կասկածի՞ս .

Բառ . — Ո՞հ, երբէք, երբէք, սակայն հօրս արդար կամքը ի՞նչպէս պիտի մերժեմ:

Ֆրան . — Բացէ ի բաց մի՛ մերժէք:

Բառ . — Ի՞նչպէս .

Ֆրան . — Քիչ մը ետքը երիտասարդ դքսուհին պիտի մեկնի, այս կողմէն ամեննեին հակառակելու բան մը չկայ, մենք աւ իրեն հետ կը մեկնինք և ուրիշ ճամբէ մը . . .

Բառ . — Բայց վերջապէս ուշ կամ կանուխ պէտք է ուր ըլլալնիս հօրերնուս իմացնենք, այնպէս չէ՞ . (Յոժեֆ Նորք) ոհ, ի՞նչ կընանք ընել ուրեմն .

Ֆրան. (Անոք հսկեցած, +ուշցրայն) — Այո՛, ի՞նչ կընանք ընել, ոհ, եթէ ես աւ քեզի պէս գեղեցիկ ըլլայի, եթէ դիմաց և խօսքերու պչրանք ունենայի, և մանաւանդ եթէ կեանքս առանձնութեան նուիրած շըլլայի, կարելի էր որ միջոց մը գտնէինք:

Բառ . — Ի՞նչ միջոց:

Ֆրան . — Այն առեն ես անձամբ այդ երիտասարդ Պիանգան իւր հօրը գիրկը կը վերադարձնէի, որ քու պաղ շարժմունքներէդ միմիայն զքեզ պիտի ճանչնար, և պիտի սիրէր այն անձը՝ որ զինքը քու պաղ նայուածքներէդ աղատել կուզէք, պիտի պաշտէր իւր աղատարարը, որ աղատար մը կամքեզ նման իշխան մը և կամ մինչև իսկ քեզ արենակից մէկը եղած ըլլար :

Բառ . — Ի՞նչ կըսէք . . . ուրեմն դուք կուզէք Պիանցայի հետ ամսւսնանալ:

Ֆրան . — Բայց չէ՛, չէ՛ . ահ, խենթ եմ ես, ներէ եղբայր իմ յուսահատ և խոռովեալ մոտացս շփոթութեանը, քեզ ծառայելու համար ունեցած ջերմ փափաքս զիս խոտորեցուց . . . , Ե՞ս ամսւսնանամ, ե՞ս, որ կենացս մէջ կնոջ

մը սիրոյն վրայ ամենեին չեմ խօսած . ա'հ , ոչ , ոչ , անկարելի է . . . բաց ասկից , միթէ Թէրարի դուքսը կը հաճի , իւր աղջիկն ինձ տալու :

Բառ .— Այո , դուքսը կը փափաքի այս երկու մեծ դրքառութեանց մէջ խնամութիւն մը հաստատել , որովհետե ինքը ծերացած է և գահուն արժանի յաջորդ փեսի մը կը կարօտի , ահա դու շատ յարմարութիւն ունիս իրեն փեսայանալու . իսկ իմ ստանձնած պարտաւորութիւններս զիս կ'ստիպեն միշտ ի Մանթու կենալ . մեր հայրն իսկ զայս կը վկայէ , և իւր Թրանչեսդօ որդւոյն այս մեծ նըպատակը խնդութեամբ պիտի ողջունէ . ա'հ , եղբայր իմ , ընդունեցէք այս ամուսնութիւնը որով զիս պիտի աղատէք այս դժուտրին կացութենէս :

Ֆրան .— Բայց անկարելի է ըսի .

Բառ .— Եւ ինչո՞ւ ըլլայ անկարելի .

Ֆրան .— Վասն զի այն ատեն ամենէն պիտի բամբասուիմ :

Բառ .— Եւ ես պիտի պաշտպանեմ զքեզ այն ամեն բամբասանաց ու հալածանաց դէմ , զքեզ՝ որ ինձի մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլաս . ա'հ , Թրանչեսդօ , կը տարակուսի՞ս իմ վրաս .

Ֆրան .— Ոչ , պիտի հնազանդիմ քու խօսքերուդ :

Բառ .— Ահաւասիկ կրտսեր եղբօր մը արժանի խոստումը , (Պատուին է քրտսանչն :)

ՏԵՌԵԼ Ժ.

Նոյնք և Լէօնոսա

Բառ .— Ո'հ , եկէք մայր իմ . եկէք , լրջօրէն խոստովանանք մը ունիմ ձեզ . պիտի իմացնեմ իմ սրտիս դադանիքները , պիտի յայտնեմ նաև դաշինք մը՝ զոր քիչ մը ա-

ուազ եղբօրս հետ կնքեցի . . . ա'հ, հաւատա՛ ինձ մայր
իմ, թէ ֆրանչէսգօ իմ հաւատարիմ և անդուդական բա-
րեկամս է:

Լէօ. — Իրա՞ւ . . . ուրեմն շատ երջանիկ եմ թաօլօ :

Թաօ. (Մօքը Յեռու Պատէնէ) — Այս գործին յաջողութեանը
համար ձեր օգնութիւնը շատ պիտի նպաստէ, թոյլ տուէք
ուրեմն այդ մայրական խանդաղատանըը ինձ օգնութեան
կանչել, որ երբէք ստած չէ:

Լէօ. — Եւ որ զքեզ չպիտի խորէք որդեակ իմ,
քեզ, ինչպէս որ կը պարտիմ, Ֆէրարի իշխանուհւոյն ներ-
կայացնելէս անմիջապէս ետքը պարաստ պիտի ըլլամ
մտիկ ընելու:

Թաօ. — Իշխանուհին կըսէք . . .

Լէօ. — Ահոր կ'սպասեմ. (Պէտական Երիսու Հաւանց Շնչուիցու-
նեաբ իսրէն իւրեւոյ,) բայց ահա ինըը:

ՏԵՍԻԼ ԺԱ.

Նոյնք և Պիանգա

Պիան. (Պիանակայն, որ էլին հօռեցած եք) — Ա'հ, կը դողամ-
տիկին.

Լէօ. — Ահաւասիկ իմ անդրանիկս, թաօլօն. . . աշխար-
հակալ իշխան մը՝ զոր Զեղ կը ներկայացնեմ:

Թաօ. (Խաւանելով) — Տիկին. . .

Պիան, (Զայն բէտէլը Պիանակայն) — Ա'հ, տիկին,

Լէօ. — Ի՞նչ ունիք,

Պիան. — Ո'հ, տիկին, այն կենացս ազատարարը որո՞յ
համար քիչ մը առաջ խօսեցայ ձեզ, ահա ձեր զաւակն է
եղեր,

Թաօ. — Այս եղբայր իմ, այն անծանօթը, որոյ պատ-

կերը սրտիս մէջ անջնջելի կերպով նկարուած է ըստ քեզ
քիչ մը առաջ, ահա Պիանգա իշխանուհին է:

Ֆրան. (Մեկուսէ) — Անէ՛ծք . . .

Լէօ. — Կը սիրէ՛ք ուրեմն զինքը, Քաօ՛լօ.

Քաօ. — Կը հարցնէ՛ք մայր իմ, իմ բոլոր կեանքս իւր
մէկ նայուածքին մէջ էր, ես իրեն համար, իւր յիշատա.
կին համար ինքզինքէս դուրս ելած՝ քիչ մը առաջ անդի-
տաբար ֆէրարի դքսուհին կը մերժէի:

Լէօ. — Ե ուրեմն երջանկացիր որդեակ իմ, վասն զի ին-
քըն ալ կաթոգին կը սիրէ զքեզ. (Պէտական շաբաթունք) ա՛հ,
դու խստովանեցար ինձ զայդ դուստր իմ:

Քաօ. — Ո՞վ երջանկութեանս, սիրելիդ իմ Պիանգա ..
(Ֆրանէ՛չոյն) բաժնենք քեզի հետ այս երջանկութիւնը
եղբայր իմ, . . . այլ եւս քու գորովանացդ կարոտ չեմ,
բայց յաւիտեան երախտապարտ եմ քեզ:

ՏԵՍԻԼ ԺՔ

Նոյնք, կուիտօ, Անթօնիօ և Պալատականք

Քաօ. — Հայր իմ վեհազուն, Զեր և բոլոր աւագանեաց
ներկայութեանը կը իննդրեմ Պիանգա ա՛կաթէ Ֆէ-
րարի դքսուհին՝ սր բարեհաճի իւր ձեռքն ինձ նուիրել:

Լէօ. — Եւ ես Ֆէրարի և Էսմիթի դքսուհւայն Պիանգայի
կողմանէ կը պատասխանեմ թէ՝ պատրաստ է յօժարակամ-
ընդունիլ իմ անդրանիկ որդւոյս Մանդուի իշխանին համ-
բաւաւոր ձեռքու: (Պալատական ծառահարին)

Կուի. — Խիստ երջանկի եմ որդեակ իմ Քաօլօ, տեսնե-
լով որ երկու արքունեաց մոերմական կապերը աւելի կամ-
րապնդես այս ամուսնութիւնը ընդունելով, ի պատիւ ձեր
յաղթանակաւ վերադարձին, պատրաստել տուած խնճոյ-

քիս մէջ հարսանեկան մատանիները պիտի փոխանակէք :
Բաօ. — Եւ ես կը խնդրեմ պատիւ ունենալ իմ նշանա-
ծը Պիանդա դքսուհին անձամբ իւր ֆիորը զիրկը վերա-
դարձնելու .

Կուի. — Սրդէն հոն պիտի կատարուի ձեր ամուսնու-
թեան հանդէսը, և այս դիշեր կատարելիք հանդէսնիս
թող ձեր հարսանեաց սկզբնաւորութիւնն ըլլայ: (Պիանդայի)
եկուր աղջիկու, եկուր, ոհ, այնչափ ատենէ ի վեր որչափ
կը փափաքէլ այս քաղցր բառը արտասանել:

Բաօ. (Փրանչութօնն) — Դուք ալ պիտի ընկերանաք մեզ,
եղայլ իմ .

Ֆրան. — Կ'ընկերանամ: (Սբուենու ցուցնելով որ ի՞նը է եւլոյ)
ահաւասիկ կրօնաւոր մը, որ զմեզ գիւթական կապով մը
իրարու պիտի միացնէ :

(Սբուենու և Փրանչութօնն ըստ անհնա ու մինին:)

ՏԵՍԻԼ ԺԳ.

Ֆրանչսդօ և Սրօլէթթա, որ կրօնաւորի զգեստով է

Ֆրան. (Մեկուսէ) — Զգիտեմ, ինչպէս կրցայ ինքզինքս
զպել երբ այն մահացու հարուածը կուրծքիո դէմ շըտ-
կունցաւ . . . և ի՞նչ սոսկալի հարուած . . . Պիանդա
իմն էր. Ֆէրարի դքսութեան դահուն կը մերձնայի, և
այն ապագայ երջանկութիւնն ու պէրճութիւնը որ հազիւ
նշարուծ էի, մէկ վայրկենի մէջ կը կորպնցնեմ: ամեն յոյս
և ակնկալութիւնք ինձմէ կը բաժնուին յաւիտեան: Այլ ոչ
ոչ . . . դու որ գահ մը կը յափշտակես իմ ձեռքէս եղ-
բայլ իմ, ուրեմն աղէկ պաշտպանէ զայն, . . . աղէկ
պաշտպանէ . . . Սրօլէթթա .

Սրօլ: (Կը յառաջնուայ և հնիւութ էլեն իւ հոնէ) — Խշան .
Ֆրան. — Սրօլէթթա, յանցաւոր ես:

Սբոլ. — Ա'Հ . . .

Ֆրան. — Ի՞նչ ըստի ինձ երբ վենետիկէն վերադարձար,
միթէ չիմացուցի՞ր թէ եղբայրս թշնամւոյն ձեռքը գերի
ինկած էր և իր շինած յատակագիծը յայտնուած, չըսի՞ր
նաև թէ մէկ շարժմամբ ծուղակը պիտի իյնար, և թէ
վերջապէս կորսուած էր, . . . կորսուած էր անդառնալի
կերպով:

Սբոլ. — Պէտք էր որ այդպէս հաւատայի:

Ֆրան. — Այդպէս մի հաւատայի՞ր . . .

Սբոլ. — Այո՛:

Ֆրան. — Քայց ահա յաղթանակաւ կը վերադառնայ,
կը վերադառնայ գեղանի Պիանգայի հետ ամսւանանալու
և իմ ամեն յոյս ու ակնկալութիւնքս ձեռքէս շորթելու
համար: Ա՛Հ, խաբեցիր զիս Սբոլէ՛թթա, խաբեցիր:

Սբոլ. — Նա ինքն էր որ զմեղ խաբեց, իւր առիւծային
քաջութիւնը ամեն բան տակնուվերայ ըրաւ և յաղթող հան-
դիսացաւ:

Ֆրան. — Եւ ի՞նչպէս եղաւ այդ բանը.

Սբոլ. — Մինչդեռ յուսահատ վերջին ճգնաժամուն հա-
սած մահուան կ'սպասէր, չգիտեմ ո՞ւսկից օգնութիւն
գաաւ նոր և անընկճելի զօրութիւն մը, որոյ առջև թթը՝
նամեռյն խրօսատ ամբարտակները կործանեցան և ամեն ճար-
պիկ թելադրութիւնք անօդուտ եղան:

Ֆրան. — Ալ այսուհետեւ ինքզինքէս ուրիշ մէկու մը չի-
պիտի վատահիմ, Սբոլէթթա, չիմա վեց մարդու կը կա-
րսաիմ, վեց քաջաբազուկ մարդկանց, որք կարենան ուզա-
ծիս պէս շարժելու և ամեն բան ընելու, կը հասկնա՞ս, ա-
մեն բան ընելու. խօսէ՛, պիտի յաջողի՞ս գանել այդ մար-
դիկը.

Սբոլ. — Ես մէկը կը ճանշնամ, որ արդէն վեց մարդ կ'արժէ,
որոյ օժանդակ պիտի տամնաւ ուրիշ չորս քաջեր:

Ֆրան.— Վաղը արշալուսոյ մթնշաղ առաջին լոյսը երևի սկսելուն ոէս՝ պէտք է որ այդ մարդիկը Սանժօ միագոմ աբբայարանին ետևի կողմը գտնուին,

Սրո.— Զեր ամեն հրամանները պիտի կատարուին, իշխանդ վեհազուն :

Ֆրան.— Եթէ քեզ հարցնեն թէ որո՞ւ համար պիրենք կը վարձես, Խւպէոս դքսին համար է, ըսէ, Ֆէրարի դըքպին եղայրը և Պիանդայի հօրեղբայրը:

Սրո.— Բաւական է:

Ֆրան.— Անշուշտ կը յիշես իմ քեզի տռած խոստումն երք այս դահուն բաղմականը լինել յաջողիմ, խոստումն անմիջապէս պիտի կատարեմ . . . տակաւին խօսք մ'ալ, վանքին բժիշկը, եղբայրդ, ինձ դրկէ :

Սրո.— Ինձ նման Զեր վսեմութեան անձնուէր ծառացն,

Ֆրան.— Ա.յո՛, . . . բայց ոտքի ձայն կը լսեմ, կարծեմ թէ մէկը կուգայ . (Սքովին խոռոշ էւսկէ ռնէ) Երթայք բարեաւ հայր իմ, թո՛ղ երկնից կամքը կատարուի . (Պէտք որ ներս ճառն էր, ականանութեանք ու զանեւ ՀՄբիկնին, որ Անդի)

ՏԵՍԻԼ ԺԴ.

Ֆրանչէսկո և Պէրո

Ֆրան.— Ի՞նչ է ան, Պէրբօ .

Պէր.— Տէր իմ, բոլոր աւագանին ցնծութեան և ուրախութեան մէջ է, մանաւանդ երկու սիրահարեալները, տեսնելու արժանի բան մ'է տէր իմ, մինակ դուք կը պակսիք որ այդ ուրախութիւնը կատարեալ ըլլայ .

Ֆրան.— Լաւ, ահա կերթամ, բայց նախ ինձ մտիկը է, կը յիշե՞ս այն օրը, որ զքեզ ծօվահէնէ մը ծախու առի, մինչդեռ նա կը պատրաստուէր քու ոսկորներդ գաւազանին տակ կոտըտել .

Պէր. (Լուսէ) — Ահ, այս՝ կը յիշեմ տէր իմ, և այն կոտրտելիք դաւազանին նշանները տակաւին մարմնոյս վրայ կեցած են :

Ֆրան. — Այն ատեն ի՞նչ երդմնցար ինձ :

Պէր. — Ամեն պարագայի մէջ կուրաբար հնազանդիլ ձեր խօսքերուն :

Ֆրան. — Առանց հրամանացս իմաստն իսկ հասկնալ ու զելու, անանկ չէ .

Պէր. — Այս՝ առանց հետաքրքրութեան . . . նախ . . . բայց ինչո՞ւ պէտք :

Ֆրան. — Ահա ասոր համար քու վրադ կը վստահիմ. գիտե՞ս, հոս գքեղ խենթի տեղ դրած են .

Պէր. — Ամենքն ալ անանկ կը կարծեն :

Ֆրան. — Լաւ. ուրեմն կո հրամայեմ որ միշտ խենթ ձևանաս, հասկցա՞ր .

Պէր. — Արդէն երդմնած եմ ձեզ հնազանդիլ :

Ֆրան. — Մաիկ ըրէ, վաղն առաւօտ առանձին իմ սենեակս պիտի մտնես, զիս հոն գանես՝ կամ ոչ, պէտք է ամենուն իմացնես թէ՝ ես քիչ մը տկարութիւն ունենալէս հանգստութեան կը կարօտիմ. և չեմ ուզեր որ այս հանգստութիւնս խանդարի ինչ որ ալ պատահելու ըլլայ:

Պէր. — Շատ աղէկլ.

Ֆրան. — Դրացի վանքին բժիշկը, որ կանչել տուած եմ, առաջուց պիտի իմացնէ քեզ քու խօսելիքներդ, կը հասկընա՞ս, պէրբօ .

Պէր. — Բան մը չեմ հասկնար .

Ֆրան. — Բայց կը լսե՞ս .

Պէր. — Առանց բառ մը իսկ կորսնցնելու .

Ֆրան. — Ահա իմ ուզածս ալ այդ է . վերջապէս կուս

դեմ որ ամենէն ալ անտեսանելի ըլլամ:

Պէր. — Բաց ի ինձմէ, այնպէս չէ .

Ֆրան.— Բայց եթէ ես հսու չդտնուիմ. . .

Պէք.— Այն ատեն ես ալ զձեղ տեսնելիք չունիմ.

Ֆրան.— Աղէկ պիտի կատարես քու պարտաւորութիւնը, կամ հարիւր տուգատ ոսկի, և կամ ծովահենին հըռչակուոր դաւազանը, որուն համը տակաւին բերնէդ ելած չէ. ահա կը մեկնիմ, դարձեալիմացնելով թէ, այս դաշտնիքը մեր երկուրին մէջ պէտք է մնայ, (Մենք)

ՏԵՍԻԼ ԺԵ.

ՊԵՐՔԾ (Ա. Ա. Հ. Յ. Ա. Հ.)

Ա. Ա. Հ. Յ. Ա. Հ. Ա. Հ. Վաղին առաւօտ հիւանդապահ պիտի ըլլամ . . . առանց հիւանդի . . . հասկցանք . աս է նէ՝ բան մը ըսել չէ, հիմակու հիմա երթանք սա հանդէսը տեսնենք, (Դրուն զանգուիլ և նուտքաբանոց յայնտ, Պերքծ Հոգելու մէնէ)

ԶԴԻ ՎԱՐԱԳՅՈՐՆ



ՊԵՏԿԵՐ Գ.


(ԼՈՒՌ ՅԱՂԹԱՆԱԿ ԲԱՌՈՒՄ)

(Ցեսարանը կը ներկայացնէ պալատան մեծ գաւիթը, որ յաղթական կամարներով և դրաշակներով դարձարուած է: Խորը պատշգամ մը, ուր նստած են Դուքսը, Դքուու հին, Ֆրանչէսդո, Պիանդա, Անթօնիո, Իշխանք և Տիկնայք:)

—•—

(Վարագոյրին բացուելու ժամանակ նուագարանը քայլերգ (Մար) մը պիտի սկսի, որ կը յայտարարէ թէ թափօրը պիտի գայ: Կարգ կարգ զինւորներ յաջէն կը մտնեն և ձախէն մեկնին. անոնց կը հետեւին աղջկունք, որք ճամբուն վրայ ծաղիկներ կը սփռեն. ասոնցմէ ետքը կուգան զօրավարք և նուագածուք, շրջապատած զթաօօ, որ ձիով կը յառաջանայ, զօրականք և ժողովուրդք միաբերան « Հուռուա՛ ։ ։ ։ կեցցէ՛ թաօլօ իշխան, » կաղաղակեն . թաօլօ ձիէն վար կիջնէ, և խորի դռնէն պատշգամ ելնելով Պիանդայի քով կը նստի. ժողովուրդք գարձեալ « Հուռուա՛ ։ ։ ։ կեցցէ՛ թաօլօ իշխան և պիանդա իշխանուհին, » կաղաղակէ . ապա պալէթը կ'սկսի, « ը տասք վայրկեան կը տեւէ, նուագարանը սոյն արարուածին ըսկիզբէն մինչև վերջը անընդհատ կը շարունակուի: պարունիք պարելով կը մեկնին տեսարանէն .)

271 ՎԱՐԱԴՈՅՐՆ



ՊԵՏԿԵՐ Գ.

(ԱՌԵՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՊԻԱՆԳԱՅԻ)

— o —

(Տեսաբանն է ձկնորսի մը տնակին ներսի կողմը, խորի դուռը Մինչիօ գետակին ափանցը վրայ կը բացուի : Աջ կողմը պատճիկ և մէկ քանի ստքով սանդուղ մը՝ որ սենեակ մը կը տանի . Մէջ տեղը սեղան և աթոռներ :)

ՏԵՍԻԼ Ա.

Լինուա և Բիելինո

(Լինուա առաջանեց իւ կուրտ, Բիելին առաջանեց իւ լուս,)

Բիելինո . — Ե՛ս ուրեմն քոյլ իմ, այդ ուռկանները գետ մի լինցո՞ւն .

Լինուա . — Մէկ վայրկենէն կը լիննան, Բիելին . — Մեկնելու ժամանակ է, ովը պայծառ է և դշերտան համար գեղիցիկ որս մը կը խօսանայ մեզ . կոմտածեմ թէ մինչև վաղը մէկը չպիտի գայ Մինչիօ դիմացի եղերքը անցնելու, այսու ամենայնիւ դուն հսկուած :

Ան . — Էհ, գարձեալ մինա՞կ պիտի մնամ,

Բիելին . — Կը վախնա՞ս .

Ան . — Օ՛չոչ, կուրտուուր կոնդոկու է գրաին Մանթուի կանանց ըլլալն իւ մեր, երկիրը առաջնուրնէ տւելի ապահով է, բայց ինչ որ ալ ըլլայ, եռ խիստախտը կեանք մը ու-

նիմ, ի՞նչ պիտի ըլլայի առանց քեղի ահաւասիկ տասը տարի է որ ամուսինս զիս ձգած է :

Բիեթ.— Լուիճի՞ն . չելլաս նորէն ուզես այդ ժոյլ թշուառական դինովը :

Լին.— Է՛հ, եղբայր իմ, խեղճ պղտիկ Ֆրանչէսդինօի մահուանէն վերջը Լուիճի աղէկ տուժեց ինձ, զինքը համոզեցի որ մեր պղտիկ պանդոկը ծախսելով, մեծ և աւելի յաճախորդ ունեցող պանդոկ մը դնենք, վասն զի այնու հետեւ աւելի պարկեշտութեամբ ապրիլ կուղէր, և կարծես բոլորովին իւր կնոջն յարած էր, բայց ինչպէս որ գիտես, գիշեր մը Մինչիօ գետը հորթելով՝ ջուրը մեր պանդոկը իւր ամեն կարասիներովը քշեց տարաւ, ասոր վրա Լուիճի վհատեալ օտար երկիր գնաց իր բաղդք բընտռելու :

Բիեթ.— Ահա այսպէս կը կորսուի արդարութեամբ չի վաստկուած «տակը . միթէ հազար տուղարձ ոսկիի ծախու առած այն պանդոկը պինչափ վատութեամբ Ասթօլֆին խաբելով նորա ձեռքէն շորթած ստակովը չէ՞ր, որ փիսանակ խեղճին հարազատ զաւկին՝ անոր դահիճը յանձներ էր:

Լին.— Ա՛հ, աւա՛զ ճշմարիտ է այդ, բայց կ'երդնում թէ իմ կամքիս հակառակ էր ասի Բիեթուօ:

Բիեթ.— Այսու ամեն բան գիտեմ, զիտեմ թէ գու անմեղ ես, իսկ Լուիճիիդ գոլով, անշուշտ հիմա իւր հին աւազակի և մարդասպանի արհեստը նորէն ձեռք առած ըլլալու է, և եթէ մեռած ալ է՝ քաջայոյս եմ թէ կազախանին վրայ մեռած է :

Լին.— Ա՛հ, Բիեթուօ, ի՞նչ կըսես .

Բիեթ— Լաւ, քայլիմ, ահա զբեզ առանձին կը թումոր անոր հոգւայն փրկութեամբ համար ազօթես բայց ոչ թէ կ'ըստեամբ վրայ լաս Առ այժմ ուսկաններս առուր,

վաղը կը տեսնուինք դարձեալ: (Ուստինաւը սուսպ մէնի իսրէն) Հին. — (Ս.ռանչին) Ի՞նչ դառն յիշատակ . . . այս', գիտէի թէ այս գործը զմեղ պիտի ապերջանկացներ . . . զոհին աեղ դահիճն յանձնել . . . ասիկայ սճիր մ'է, որու համար ամեն օր երկնից ներողութիւնը կը խնդրեմ, կարծես թէ ես իմ ձեռոօքս գործած և կամ մեղսակից եմ, Բայց միթէ Լուիճիի մեղսակիցը չպիտի՞ համարուէի երբ այս սարսափելի սխալմունքը չ'ուղղէի . . . աւաղ, մինչեւ ցարդ չի փնտուեցի . . . վասն զի ուր կրնայի գտնել անանկ ընտանիք մը՝ որուն ծոցը օտարական մը յանձնուած ըլլար . . . : Արդեօք ի՞նչ եղած է հիմա այն չար ֆրանչէսգօն . անշուշտ կատարեալ մարդ մը. Աստուած տայ որ այդ կատարեալ մարդը բարի և ողորմած ըլլար . որչափ իր տղայութեանը չար և ոխակալ մ'էր: (Սենեսիւ երկնը հայուր սոնդունըն ելու մէջոյն ֆրանչուժութեան ու ուժուածութեան է:)

ՏԵՍԻԼ Բ.

Հինտա և Ֆրանչութու

Ֆրան. (Մարտ արշակ) — Տիկին, խօսք մը . . .
Հին. (Սարսաւունաց) — Մե՛ծդ Աստուած . . . գիմականոր մարդ մը . . .
Ֆրան. — Մի՛ վախնար, հանդարտէ՛ կեանքիս ապահովութեանն համար գիմակաւորեալ ճամբորդել ստիպուած եմ. այս գիւղին անունը ի՞նչ է:

Հին. — Վալտէզէռ:
Ֆրան. — Լաւ . . . մէկը չիկա՞յ . . . միթէ հոս չի՞ բնակիր ճամբորդները Մինչիօ գետին գիմացը անցնող նաւազարը.
Հին. — Այս' պարոն, բայց հիմա ձկնորսութեամբ պա-

վարը.

բապելու համար մեկնեցաւ և վազը կը վերադառնայ:
Ֆրան. — Ըսել է որ այս գիշերուան համար մէկը չիկայ
զմեզ գետակին դիմացի կողմը անցնող .

Լին. — Ոչ պարոն, ուրիշ նաւակ մ'ալ ունինք:

Ֆրան. — Բնդ ամենը մէջի հատ.

Լին. — Այս պարոն :

Ֆրան. — Ո՞ւր է :

Լին. — Դուրսը ձախ կողմի ժայռին կապուած է:

Ֆրան. — Եատ աղեկ, ես կուզեմ զայն վարձել .

Լին. — Հիմա անցնելու համար .

Ֆրան. — Հիմա կամ վերջը, ատիկայ իմ կամքէս կախ-
եալ է, բաւական է որ այն նաւակը այս գիշեր իմն ըլլայ
է . . . մնացածը ինձ կը վերաբերի, դուք անհոգ եղիք .
ահաւասիկ անոր գինը կը վճարեմ . (Քովը էակասած ուսովն
առնի բայ,) դո՞հ էք այսչափով .

Լին. — Խիստ գոհ . . . բայց

Ֆրան. — Ալ ուրիշ հարցմանքներ չեմ ուզեր, գնա՛ քա-
նի մը շիշ գինի բեր ընկերացս համար՝ որոց կ'սպասեմ:

Լին. — Ինչ որ տանս մէջ ունիմ, յոժարակամ պիտի
տամ ձեզ պարոն, որովհետեւ հոս պանդոկ մը չէ: (Մէկոսէ)
արդեօք ո՞վէ այս մարդը . (Զարդանաւ նոյն և մէկնէ:)

Ֆրան. (Մէկոսէ) — Պէտք է որ հստ հանգիստ առնունք,
վասն զի այս ձկնորսի հիւղը այս գիշերուան համար ման-
թուի իշխանաց պալատը պիտի ըլլայ :

ՏԵՍԻԼ Բ.

Նոյն և Սրուբթթա, որ զօրապետի հագուստով է.

Սրու. (Զորո Շին Նոյելու) — Կարծեմ թէ հստ պիտի ըլլայ:

Ֆրան. (Դիմուէ Հու առնելու) — Զի՞ս կը փնտուես, մինակ
եմ, և կընաս խօսիլ աղատօրէն :

Սրոլ.— Զեր ամեն հրամաննները ճշդութեամբ կատար-
ուած են, տէր իմ. կրօնաւորի հանդերձանքս մէկդի նե-
տելով իշխանին ներկայացայ իբր Ֆէրարի գքսին պատգա-
նոնց ընկերանամ։ Քիչ մը առաջ, քաղքէն քանի մը մղոն
հեռուէն ուզեցի իրենցմէ առաջ անցնելով հոս գալ, ըս-
տուգելու համար թէ, նորին վսեմութիւնը գիմացի կողմը
անցընելու համար Մինչիօի վրայ պատրաստ նաւակ մը
կայ արդեօք։

Ֆրան։— Հոս, ժայռին ետևը կապուած նաւակ մը կայ
եղեր, զոր ես վարձեցի, եթէ պէտք ըլլայ, կրնանք ընկղ-
մէ անոնց հետ ի միասին։ Տակաւին շատ հեռո՞ւն ձըդե-
ցիր զիրենք։

Սրօ.— Գրեթէ մէկ ժամուան ճամբայ հեռու են. տիկ-
նայք ոսկիէ Արծուի պանդոկը հանդիսաւ կառնուն։

Ֆրան։— Ինձ խոստացած քաջասիրտ ընկերներդ ո՞ւր են.

Սրօ.— Հոս են, բայց իրենց մեծաւորը առանց ձեզի
հետ տեսնուելու չուզեր գործել։

Ֆրան.— Ի՞նչ պիտի ըսէ։

Սրօ.— Զեմ գիտեր։

Ֆրան.— Կանչէ՛, թող գայ. (Դիմաւ և բնե)

Սրօ. (Խորին) — Ասկէց բարեկամ, առ կողմէն։

Լուիֆի. (Մասելով) — Բարեւ, տէր իմ։

ՏԵՍԻԼ Դ.

Նոյնք և Լուիֆի

Ֆրան.— Սրօլէ՛թթա, զգուշացիր որ մէկը վրայ չի հաս
ի. (Սրօլէ՛թթա իսրէ և աշ ինչ ուսուց և բարի) Եւ պարոն, իմա-
շուցին քեզ ընկերացդ հետ ընելիքներդ։

Լուի. — Ուղեկից խմբէ մը, որ հոս պիտի դայ, կին մը առեւանդել.

Թրան. — Եւ մահացու հարուած մը իջեցնել երիտասարդ իշխանի մը, որ կ'ընկերանայ վերոյիշեալ կնոջ. կը հասկը նա՞ս, մահացու պիտի ըլլայ կշռելիք հարուածդդ:

Լուի. — Հառկցայ . նախանձոտ սիրահար մը . . . կամ մերժուած ամուսին մը . . . և կամ անմեղութեան ազատարար մ'էք . . . այլ ի՞նչ կըսեմ, ասիկայ ձեր գիտնալիք բանն է և ես իրաւունք չունիմ խտոնուելու . ասոր հետ մեկտեղ, երկու երեք պզտիկ գժուարութիւններ կան . . .

Թրան. — Եւ որո՞նք են այդ գժուարութիւնները .

Լուի. — Ինչպէս որ Մթօլէթթա բարեկամը ինձ իմացուց այն ուղեկից խումբը ութը մարդիկներէ կը բաղկանայ եղեր, առանց երիտասարդ իշխանը հաշուելու, և մենք ընդամենը հինգ հոգի ենք. այս հաշով մեզմէ մէկը երկուքի գէմ պիտի կռուի :

Թրան. — Միթէ կը վախնա՞ս . բայց և այնպէս իմացուցին ինձ թէ դու մինակդ արդէն վեց հոգի կարժես եղեր:

Վլուի. — Ատիկոյ պարագային համեմատ է:

Թրան. — Ի՞նչպէս, պարագային համեմատ . . .

Լուի. — Այո, եթէ վարձատրութիւնը վահանդին մեծութեանը կը հաւասարի :

Թրան. — Այսինքն, եթէ քեզ խօստացեալ գումարը վեց անգամ կը կնուի:

Լուի. — Այդպէս է, վասն զի իմ քաջութիւնս ալ վեց անգամ պիտի կը կնուի . . . ասիկայ թուաբանական կլորիկ հաշիւ մ'է:

Թրան. (Քունք է իսկուսած ոստին ոստի ճը ոստի իւ հանի) . — Ա՛ռ ուրեմն :

Լուի. (Խանքիւլու) . — Զեր վսեմութիւնը այսպիսի գոր-

ծերէ աղէկ կը հասկնայ եզեր.

Ֆրան.— Է ուրեմն լմացա՞ւ.

Լուի.— Դեռ ոչ:

Ֆրան.— Ի՞նչպէս.

Լուի.— Ես չեմ ուզեր սպաննելիք մարդուս անունը իմանալ, այլ գործի սկսելէ առաջ պէտք է իմանամ թէ որո՞ւ համար կաշխատիմ.

Ֆրան.— Սբոլէթթան ձեզ իմացուցած ըլլալու է.

Լուի.— Այո, բայց ես այնչափով չեմ բաւականանար, Սբոլ— Ի՞նչպէս, չե՞ս հաւատար ինձ:

Լուի.— Այդ ալ հարցնելիք բա՞ն է, բարեկամ, (Փրանչստօն) այո՛ աէք իմ, կուզեմ իմանալ թէ որո՞ւ հետ կը խօսիմ, երբոր մէկը Մինչիօի ափանցը վրայ դիմակաւորեալ կը պտտի, ասիկայ երկու պատճտուներէ կընայ յառաջ դալ.

Ֆրան.— Եւ որո՞նք են այդ պատճառները:

Լուի.— Կամ իւր գէմքը մժեղներսւ խայթսւածներէն ազատ պահելու և կամ աւելի ուշ ինքզինքը յայտնելու համար:

Ֆրան.— Երկուքէն մին կընաս որոշել:

Լուի.— Է ուրեմն, լաւ.

Ֆրան.— Ահաւասիկ յանդուգն ստայակ մը.

Լուի.— Մտիկ ըրէք ուրեմն. Ես գաղտնապահ ըլլալու համար կաշառուած եմ տասը տարի կայ որ այս աւազակի արհեստը ձգած էի, հանդիսակապը էի ձեռքերս գըր-պանս և խեղճ կնկանս հետ մաքառնեա ուտելով, երբ ստանան նորէն զիս կործանելով իմ խաղաղ վիճակս ստանան նորէն զիս կործանելով իմ խաղաղ վիճակս իստնգարեց, վերջապէս ստիպեց դարձեալ դաշոյնը ձեռք առած այս վտանգալից արհեստով զբաղիլ, չաղիւ թէ առած այս վտանգալից արհեստով զբաղիլ, մտած էի, ահա ինձամբու վրայի դողերու խմբի մը մէջ մտած էի, ահա ինձամբու վրայի դողերու խմբի մը կ'առաջարկեն, այն ալ այսպէս կը-ծի գեղեցիկ գործ մը կ'առաջարկեն,

նոյն մը առևանգութիւնն էր, բայց չկրցանք յաջողիլ, և
իւր ամուսինը, վենետիկի տասնից ժողովոյն անդամ, իշխան մը, զիս և երկու ընկերներս մութ բանտի մը մէջնեւ-
տեց . հոն պիտի մնայի, մինչև որ զիս թելադրողին ա-
նունը իմացնեմ, սակայն ասիկայ անկարելի բան մ'էր, ո-
րովհետեւ ոչ իւր անունը գիտէի և ոչ դէմքը տեսած էր
Այս չգիտնալս ինձ շատ ոռողի նստաւ, այսինքն տասը խո-
շոր տարիներ բանտին մէջ անդամալուծացեալ մնալու
պատճառ եղաւ. ընկերներս հոն մեռան, ես ալ երկու ա-
միս չըներ որ ազատեցայ : Հիմա կը հասկնա՞ք տէր իմ, թէ
նորէն այն բանտը մտնելու ախորժակ շունիմ, և իրաւոնք
ունիմ ըսելու թէ, վար առէ՞ք դիմակնիդ:

Թրան.— Այս անդամ վախնալու բան մը չի կայ, երբ
կիմացնեմ քեզ թէ Ռւպէռթօ իշխանին, այսինքն Ֆէրարի
դքսին եղբօրը հաշւոյն համար պիտի աշխատիս . . .

Լուի.— Կը ճանչնամ իշխանը և ուրիշ անդամ իրեն հա-
մոր աշխատած եմ, խարեքայ յաճախորդ մ'է թշուառա-
կանը, զիս աշխատցնելիքն ետքը փոխանակ վարձատրելու
քիչ մնաց կախաղան պիտի հանէր:

Թրան.— Բայց քանի որ աշխատութեանդ վարձքը կան-
խաւ կառնուս:

Լուի.— Իրաւունք ունիք . . . է ուրեմն գոհ եմ, (Մւ-
կուսէ) հիմակու հիմայ . (Բարյէ) աեմսենք, ի՞նչ են ձեր հը-
րամանները.

Թրան.— Սրօէթթա պիտի իմացնէ . առ այժմ աղէկ
զգուշութիւն ըրէ որ մէկէ մը չի տեսնուիս .

Լուի.— Անհոգ եղիք .

Թրան.— Ո՞ւր պիտի պահուըտիս .

Լուի.— Ժայռի մո ճնշդին մէջ պահուըտելու աղէկ
տեղ մը գտայ, հիմա մարդկանց հետ հոն պիտի երթամ
կծկտիլ և մինչև որ յարձակման նշանը չի տրտւի, տեղէս

երերալիք չունիմ. . . գուք հանդիսաւ եղէք տէր իմ, ես
տուած ստակնիդ կարժեմ, ես խղճմտանք ունիմ (Եթոյ)

ՏԵՍԻԼ Զ.

ՖՐԱՆՀԷՄՊՈ և ՍԲՈԼԷՇԹԹԱ

Ֆրան. — ՍբոլէՇԹԹԱ, գու հոս պիտի սպասես մինչև
որ ուզեկից խումբը հասնի. ես, գետին դիմացի կողմը
պիտի անցնիմնաւակը անոնց աշքէն հեռացնելու համար,
և վերադարձիս . . .

Սրօ. — Թշնամիներնէդ ազատած պիտի ըլլաք.

Ֆրան. — Հոս պատրաստ ձի մը սւնիս զիս ի Մանթու
տանելու:

Սրօ. — Դուրսը պատրաստ է, և արեւուն ծագելէն ա-
ռաջ պիտի կարենաք հոն հասնիլ:

Ֆրան. — Ուրեմն ի կրկին տեսութիւն և յաջողութիւն.
(Մերք)

ՏԵՍԻԼ Լ.

ՍԲՈԼԷՇԹԹԱ, ԼԻՆՏԱ, (ԵՐԵՎ) ԱՆԺ ՕՆԻՔ

Լինտա. (Գառա-Բները ուղանին Հրայ, Դաւթակ) — Ահաւասիկ
պարոն . . . բայց հոս չէ.

Սրօ. — Զո՞վ կուզէք.

Լին. — Դիմակաւոր պարոնր, արդեօք դո՞ւք էք, բայց
անոր հասակը և ձայնը չունիք.

Սրօ. — Ես կամ ուրիշ մէ եղեք, հոգ չէ, բարի կին,
բաւական է որ պիտի վճարեմ, գնա զիսի բեր. (Լին-
դիք, Սբուշիս Երև Կըմաւէ) ահաւասիկ սողեկից խմբին
յառաջապահները կերւան, բայց ի՞նչ կը տեսնեմ, Անժ օն-

եօ՞ն . դքսին ամենահաւատարիմ՝ ծառաներէն մին , որ
Մանթուէն մեկնած ատեննիս ի միասին չէր , ի՞նչ կը նշա-
նակէ այս . (Անթօնիո հոգե Թէ ունէ զբահաններու)

Անթ .— Հոս ըլլալու է , վասն զի ահա Սբոլէթթան :

Սբոլ .— Ի՞նչպէս , դո՞ւք էք Անթօնիօ , բայց դուք իշխա-
նին ուղեկիցներուն ընկերացած չէիք :

Անթ .— Կօնդակուէ դքսին վերջին մէկ հրամանաւը ըն-
կերացայ , իմանալուլ որ քանի մը աւաղակաց խումբեր մօ-
տերս երկրին մէջ երկան ելած են , ուղեց այն պղտիկ ու-
ղեկից խումբը զօրացնել . մեր մարդիկներէն չորս կորովի
քաջեր ոսկիէ արծուի պանդոկը կեցած են տիկինները
պաշտպանելու համար , որք կառքսվ կը ճամրորդեն , իսկ
երիտասարդ դքսուհին փափաքեցաւ ձի հեծնել և այնպէս
ընկերանալ Բաօլո իշխանին :

Սբո .— Ուրեմն հիմա ուղեկից խումբը քանի՞ մարդիկն-
երէ կը բազկանայ :

Անթ .— Տասը ճարպիկ քաջամարտիկներէ :

Սբո . (Մեխանէ) — Տասը մա՛րդ . . . դժոխք կը յաղթա-
նակեն , ուրեմն գեմերնիս ելնելիք բանակը մերինէն կրկ-
նապատիկ է .

Անթ .— Բայց ահաւասիկ իշխանը հասաւ :

ՏԵՍԻԼ Ը.

Նոյնք , Բաօլօ , Պիանդա , հետեռուխք , (Երանէ) Լինտա

Բաօ . (Պիանդային) — Որչա՞փ երջանիկ եմ , չքնազդ Ամա-
զոնուհի , զքեզ իմ քովս ունենայով , բայց կը վախնամ որ
հոգնութիւնը ուստամենուն սիրելի և ինձ համար թանկա-
գին եղող քու գեղեղիկ կենացդ վեաս մը հանցնէ :

Պիան .— Այդ մասին անդորր եղիք , իշխանդ վեհապաւն ,

եռ քաջառիրտ եմ և երջանիկ կը համարիմ զիս ձեզի արժանի ուղեկից մը ըլլալս ցուցնելով, այն երջանկութիւնը որ ապագայն մեղ համար կը պատրաստէ, միթէ կեանքի մը բոլոր արկածից հաւասար մի բաժանումը չէ^ա, կեանքի մը, սիրելի իշխան, որ կը յուսամ թէ երկինք փառաւոր և երկար պիտի հանդիսացնէ:

Բաօ. — Միթէ կընայ երկինք չի լսել քեզ նման անմեղ հրեշտակի մը աղօթիցը:

Լինտա. (Դինէ բերէ) — Ա՛հ, ահաւասիկ այն ճամբորդ-ները որոց՝ կ'սպասուէր. (Պիտիայէ) արդեօք տիրուհիս իմ խնամոցս կամ ծառայութեանս կը կարօտի^բ.

— Բաօ. — Ե ուրեմն Սրոլէթթա, Մինչիօ գետին դիմացի կողմը անցնելու համար նաւակ մը կամ մակոյկ մը կըցա՞ր ճարել.

Սրօ. — Դժբաղդաբար շատ ուշ հասայ տէր իմ, այս կին կընայ խոստովանիւլ թէ իր ունեցած մէկ նաւակը իմ հոս հասնելէս առաջ ուրիշի մը վարձեր էր:

Լին. — Ի՞նչպէս . . . ձեզի համար չէ՞ր ուրեմն . . . ո՞հ, որչա՞փ կը զջամ . . . գեղեցիկ պարոն մը և աղնիւ կին մը, . . . մինչդեռ միւսը այնչափ գէշ կերպարանք մը ունէր. բայց կերպարանք ըսելով՝ չկըցայ զայն տեսնել վարն զի գիմակաւոր էր :

Անթօ. — Դիմակաւոր մարդ մը. ի՞նչ կը նշանակէ,

Սրօ. — Թերես վենետիկցի ազնուական մը . . .

Անթ. — Ինչ որ ալըլլայ, պէտք է որ նորին վսեմութիւնը իւր ճամբան շարունակէ, և եթէ նաւակը տակաւին հոս է . . .

Սրօ. — Հոս չէ, որով իշխան վաղութնէ առաջ չպիտի կարենայ ճամբան շարունակել:

Բաօ. — Միայն ձեզի համար է սիրելիդ իմ Պիտիայէ, որ

այս յապարումը զիս կը տրտմեցնէ . գիշեր մը ամբողջ այս
խրճիթին մէջ անցնե՞լ . . .

Պիան.— Ա՛հ, ես երեքը ինքդինքս չեմ՝ մտածեր, վասն
զի ձեր պաշտպանութեանը ներքեւ միշտ անդորր և երջա-
նիկ եմ, բայց աւա՛զ, իմ խեղճ հայրս որ հիւանդ կը տա-
ռապի, արդեօք ո՞րպիսի կասկածներով պիտի տանջուի
մեր այս յապարզման պատճառաւ :

Բաօ.— Ուրեմն պէտք է իմացնել հօրերնուդ մեր այս
յապարզման պատճառը, (ՄԷՌԵՒՆԵՐՅԻՆ) արդեօք մօտերս ու-
րիշ նաւակ մը չի՞ գտնուիր,

Սրօ. (ՄԵԿԱՆՔ) — Ա՛հ, ի՞նչ գաղափար, (ԲԱՇՅԵ) այս՛,
տէր իմ, ասկէց մէկ ու կէս մզոն հեռու :

Լին,— Հայր Յովակիմի՞ն նաւակը :

Սրօ.— Հայր Յովակիմի՞ն . . , այս, աղէկ ըսիր, բայց կը
վախնամ որ ան ալ վերջին յորդումէն վսասուած ըլլայ ,
Զեր վսեմութիւնը կընայ քանի մը մարդ զրկել ճամբուն
ապահովութիւնը ստուգելու համար :

Բաօ,— Ես ինքս պիտի երթամ,

Սրօ,— Դո՞ւք աէր իմ:

Բաօ,— Այս՝ ես աւելի աղէկ կրնամ դատել թէ պի-
տի կարենա՞նը անվնաս նաւարկել

Պիան,— Զեզի պիտի ընկերանամ, այնպէս չէ՞:

Բաօ,— Ոչ, սիրելիդ իմ Պիանդա, եթէ անցքը անկարելի
է, պէաք է նորէն հոս վերադառնալ, և այս ալ պարապ
հոգնութիւն մը պիտի ըլլայ ձեղնաման փափկասուն օրիոր-
դի մը համար, (ԼԻՆԵՐՅԻՆ) տիրուհւոյն համար յատուկ սեն-
եակ մը ունի՞ք,

Լին, իմն կուտամ, քաջայոյո լինելով թէ տիկինը շատ
պիտի գոհանայ և հանգիստ ընէ,

Բաօ,— Շատ աղէկ :

Սրօ.— (ՄԵԿԱՆՔ) Գողծը կարգին է . . .

Պիան. (Բայլով) — Մի՛ ուշանաք տէր իմ, երբ ինձմէ
պիտի բաժնուիք, գիտցիք թէ ունեցած քաջարտութիւնս
ալ ի միասին պիտի տանիք.

Բաօ. — Վստահ եղիք ինձ և հաւասացէք թէ կարելի
եղածին չափ շուտ պիտի վերադառնամ, ուր ո՞ր ալ լինիմ,
միշտ սիրտս ձեր քովը կը թողում.

Պիան. (Զեւց անոց երինակել) ի կրկին տեսութիւն,
Բաօ. (Զեւց համբուրել) — Հաճութեամբ.

(Պէտք լինույթ հետ երջին իւ բան)

Բաօ. — Եկէ՛ք Անթօնիօ, իսկ դուք Սբոլէթթա, աղէկ
հսկեցէք. (Մեխին)

ՏԵՍԻԼ. Ը.

ՍԲՈԼԷԹԹԱ և ՀՈՐՄ ԶԻՆԿՈՐՔ

Սրօ. (Մեխուչ) — Ահաւասիկ իրեններովը մեկնեցու,
հետևաբար, մեր գործելու ժամանակ է, բայց զգու-
շութեամբ և շուտով, որպէս զի խմբին օժանդակ գալիք
միւս մասին ալ զէմ դնելու ժամանակ ունենանք. (Գումբ
և լեցնե) ասիկայ ինձի համար, (Կուշը խոնե և բուռնին հո-
նձ որոսին տանի ճը խոնիւ գեղը լեցնե) այս ալ անոնց համար.
Բայց ինչո՞ւ այսչափ մութէ այս տեղը. է, լոյս բերէք
լոյս. (Լինուս բերէ) աղէկ, հիմա ինձմտիկ ըրէ քաջա-
սիրտ տիկին, (Կուտց) այս մարզոց զինովութիւնը զէշ է,
կը խրատեմ քեզ որ սնզգուշութեամբ հոս չի մտնես փոր-
ձանքի մը չի հանդիպելու համար, մինչև իսկ եթէ աղ-
մուկ մը լսես.

Լին. — Ոհ, պիտի զգուշոնամ, պիտի զգուշանամ, ըլ-
նորհակալ եմ պարսին, որ իմացուցիք ինձ, իմանուհոյն
հետ սինեակս կառանձնանամ: (Մեխի)

Սբօ. — Է՛ ուրեմն բարեկամք, այ կին չի կայ հոս, ե-
կէք, տնկենք, խմենք և վարձկան աւազակաց երգը եր-
գենք :

Ա. Զին. — Ի՞նչպէս, ուրեմն այդ աւազակները դուք
կը ճանչնա՞ք, տէր հրամանատար .

Սբօ. — Ա.յո՛, զանոնք խիստ մօտէն տեսած եմ պատե-
րաղմին մէջ .

Բ. Զօր. — Է ուրեմն երգենք .

Սբօ. (Երեկ)

Բարեյուսոյ ազնիւ գինին
Եւ Սէյլօնի շաքարօղին,
Հնդկահաւի խորովածով
Միշտ ոյժ կուտայ աւազակն :

(Զօրականք միաձայն կրկնեն, և գաւաթնին պարպելէ
ետքը իրենցմէ մին կը քնանայ :)

Սբօ. — Մէ՛կ . (Երեկ)

Երբ աւարի համար մեկնի,
Գրպանին մէջ կուտ մը չունի,
Բայց փոյթ չըներ, քիչ մը ետքը
Գրպանները պիտի լեցուի,

(Զօրականք կրկնեն ու խմեն, իրենցմէ մէկն ալ կը քը-
նանայ :)

Սբօ. — Երկո՛ւ . (Երեկ)

Աւազակն է յոյժ երջանիկ,
Ապլանք չի տար, կառնէ կանխիկ,
Եւ կը ծաղըէ խանութպանը,
Որ վարժած է տալ ապառիկ :

(Զօրականք կրկնեն և գաւաթնին պարպելէ ետքը կը
քնանան .)

Սբօ. — Ահաւասիկ դորձելու ժամն հասած է . (Խորը
Երեւակն երեւ անդամ նոէ իւ բանէ :)

ՏԵՍԻԼ Թ.

Նոյնք, Լուիծի և չսրս Աւազակը (Դաշոյն ի ձեռվն)՝

Լուի, — Յառաջ, յառաջ, ինքզինքնիդ աղէկ բռնեցէք,
է՛ ուրեմն Սրոլէթթա, ուր են մեր թշնամիները .
Սրօ, — Ահաւասիկ, կը քնանան .

Լուի, — Ա՞յս վիճակին մէջ . . . ի՞նչ աղւսր տեսարան,
բայց թշուառական, դուն զիս անպատուեցիր . միթէ բան
մը չընելո՞ւ համար վարձատրեցիր .

Սրօ, — Ի՞նչ կըլլայ, բաւական է որ նպատակնուս հաս-
նինք .

Ա. Աւազ, — Աւելի ապահով ըլլալու համար կրնանք
զանոնք սպաններ:

Լուի, — Պարապ տեղը մարդու մը արիւն թափե՛լ . . .
կը տեսնեմ թէ գոռող սրիկայ, մ'ես գու:

Սրօ, — Եթէ իրենց վրայի զէնքերը ժողուենք . . .
Աւազ, — Ատով վնաս մը հասուցած չենք ըլլար իրենց :

Սրօ, — Ինչպէս նաև մեղի. (Քնացանդեւուն ոչնիեւը ժուլուն)

Լուի, — Օրիորդը ո՞ւր է .

Սրօ, — Հոն, խրճթին մէջ.

Լուի, — Մտնենք ուրեմն:

Աւազ, — Կեցէք, ջահ մը կը տեսնեմ:

Սրօ, — Անէ՛ծք, ահաւասիկ իշխանը կը վերադառնայի

Լուի, — Խւր ուղեկիցներո՞վը .

Սրօ, — Ոչ, մինակ մէկ մարդու ընկերութեամբ:

Լուի, — Ուրեմն վրան յարձակինք.

Սրօ, — Դուրսը աղմո՞ւկ յարուցանելու համար, աւելի

աղէկ կըլլայ եթէ հոս բռնենք,

Լուի, ինչպէս որ կուղէք: Օն ուրեմն ընկերք, սա սե-
ղանին շուրջը նստեցէք.

Արօ. Ե, աս քնացողները ի՞նչ պիտի ընէք:
 Լուի, — Աւելի հանգիստ պիտի քնանան տակը քան թէ
 վրան. Եկէք, զանոնք սեղանին, տակը խովենք և մենք ի-
 բենց տեղը նստելով՝ քնանալ ձեւացնենք: (Նշաց իշնին)
 Արօ, — Զգուշացէք, ահա կուգան:

ՏԵՇԻԼ Ժ.

Նոյնք, Բաօլօ և Զինւոր մը ձեռքը ջահով.

Արօ. (Բաօլէ ընդ յառաջ երեսայ և իսկ դառը էուցե.) Ե՛ ուրեմն
 աէր իմ, ի՞նչ ըրիք նաւակը.

Բաօ. — Փառք երկնից, գործը կարգին է և նաւավարը
 մեզ կ'սպասէ, Անթօնիօն հոն ձգեցի որ ամեն բան կար-
 գագրէ, բայց ի՞նչ կը տեսնեմ, մեր մարդիկը քնացեր են,
 ի՞նչ կը նշանակէ այս է՛ բարեկամք, ելէ՛ք.

Արօ, — Այս, ելէ՛ք.

(Զորս գողերէն երեքը Լուիճիի հետ Բաօլօի վրայ
 կը յարձակին, Սրուկթթա և միւս գողը զինւորին վրայ իյ-
 նալով ջահը կը մարեն: Տեսարանը կը մթնայ)

Բաօ. — Մատնութիւն . . . օգնութիւն . . . (Խնդիր
 ու աշխատանքները առաջին մն և վերաբերեա)

Աւազակը, — Դժո՞նք . . . վիրաւորեցայ :

Ա. Աւազ. (Բաօլէ լունելու) — Մեռի՛ք ուրեմն.

Բաօ. — Ահ. (Կիյայ)

Արօ. — Ի՞նչ ըրիք, Լուիճի, լմացաւ:

Լուի. — Ահաւասիկ փռուեցաւ.

Արօ. — Սպաննեցի՞ր:

Լուի. — Ես չէ՛, այլ սա մարդը:

Սրո. — Դետակը նետեցէք այդ մարմինը,

(Հայէնք սաւուիք ու հեռ Բագլը հաքինը առաջ՝ Խորին դիմէ.)

Բ. Աւաղ. — Հիմա կարգը օրիորդինն է :

(Սրոլէթթա ծափ կը զարնէ, և խորէն մտնող երկու աւաղակին նշանացի կը ցուցնէ սենեակը, աւաղակը սենեակ մտնեն, ուսկից օգնութեան կանչելու ձայներ կը լըսուին, աւաղակք Պիանգան զրկած տեսարան բերեն, որ միշտ կը պոռայ և կը տապլտկի. վերջապէս բերանը դաշկինակով կը գոցեն և խորէն կը տանին.)

ՏԵՍԻԼ ԺԱ.

Սրոլէթթա և Լինտա

Լին. — (Խոճիլէն ենելու) Օգնութիւն. . . օգնութիւն.

Սրո. (Դաշնութեալուացնելու) — Լու թշուառական կին, ապա թէ ոչ մեռած ես :

Լին. (Ի շանը, արագինաց) Թիսո՛ւս, Աստուած իմ:

ԶԳԻ ՎԱՐԱԳՈՅԻՆ



ՊԱՏԿԵՐ Ե.

(ՅԱՅՑՆՈՒԹԻՒՆ ՈՃՐՈՅՆ)

Տեսարանն է Մանթուի պալատին մէկ սրահը

ՏԵՍԻԼ Ա.

Կուիտօ և Լէօնօռա (Տբառակարգ էն,) Անթօնիօ կեցած,
Ծառայք և Աղախինք անոնց շուրջը առած են:

Լէօնօռա,— Զաւակս, խեղճ զաւակս . (Աչերը ուբեւ .)
Կուիտօ.— Սիրելիդ իմ Լէօնօռա, (Անբանքն) այն աղետալի լուրը առնելէն ի վեր ; խեղճ կինը լալու անգամ կարողութիւն չունի . ո՛հ, բոլոր քաջարառութիւնս այսպիսի սոսկալի վշտէ մը կը յաղթուի . (Քէւ հը լուսնիւն .) այսպէս ուրեմն Անթօնիօ, այդ պատմած սարսափելի արկածդ . . .

Անթ.— Կուզէի Զեր Վաեմութենէն ծածկել զայն, բայց աւա՛ղ սը շատ իրաւ է . . .

Լէօ.— Զաւակս, ո՛հ, զաւակս . . .

Անթ.— Այն թշուառականներէն մին, զոր բաօլո իշխանը ինքինքը պաշտպանած ատենչվիրաւորած էր, չկընառ լով իւր ընկերացը պէս շուտ մը վախչիլ, ձկնորսին խըրճիթին մօտ մահամերձ վիճակի մը մէջ գտայ : և անկէ լոեցի այս սպաննութեան և առեւանգութեան սարսափելի պատմութիւնը :

կուի. — Այս ոճըին հեղինակացը անունները չի տուած, Անթ. — Դժբաղդաբար զանոնքը չի ճանչնար եղեք, բոլոր գիտցածը սա է որ, ինքը և իւրընկերները այս սպանակութիւնը գործելու համար վարձուեր են, և այն ձեռքը, որ սովորված եցուն քսակ մը տուեր է իրենց, խաւարին մէջ կը կենայ:

Կուի. — Լրագրաց միջոցաւ հրատարակել տուէք թէ՝ իշխանին սպաննիշները մատնողը 500 ոսկի սկուդ սկստի ընդունի ի վարձատրութիւն։ Ֆրանչէսդօ իմացած է այս թօթաբեր լուրը.

Անթ. — Այս, տէր իմ, այն միջոցին իշխանը հիւանդէր, և այս լուր այնպիսի սաստիկ ներգործած է իրեն, որ այս առաւօտ արթնդած ժամանակ յուսահատութեան և վրէժինդրութեան ճիշեր կ'արձակեր . . . շատ կը վախճամ թէ այս բարկութիւնը իւր վրայ . . . բայց ահաւասիկ իշխանը որ կու դայ։

ՏԵՇԻԼ Բ.

Նոյնք և Ֆրանչէսդօ, որ անյարդար և խոռվեալ է, աղ կողմի սենեակէն դուրս կը նետուի գոչելով.

Ֆրան. — Արդարութիւն, տէր իմ, արդարութիւն . . . ի՞նչ ընթառատ զարթնութեան, սարսափելի տենդէ մը բռնուած կարծէի թէ կերպեմ, ո՞հ, եղբայր իմ, սիրեցեալ թագուհօ, ա՞հ, թող իմացնեն ինձ մարդասպանին անունը, որ դոնէ անոր մահը վիւրի ացնելով ամենուս ալ վրէժը պահեմ։

Կուի. — Ֆրանչէսդօ,

Ֆրան. — Մարդասպանը կուզեմ։

Կուի. — Քայց վարատեցէք ձեր տրտմութիւնը որդեակիմ, որպէս զի մօրերնուղ սիրտը աւելի չի վիրաւորին:

Ֆրան. — Ո՞հ, այս վիճակին մէջ որ կը գտնուիմ, ինչ ընելիքո չգիտեմ: Դո՞ւք էք Անժօնիօ, որ այս բօթաբեր լուրը հաղորդեցիք, ո՞հ, ինչո՞ւ չի պաշտպանեցիք զինքը, ո՞ւ էիք և ի՞նչ կընէիք այն միջոցին:

Անթ. — Իշխանը հրամայելը էք որ իրմէնքիչ մը հեռաւն կենանք:

Ֆրան. — Բայց գուք պարտաւոր էիք անոր հետեիլ և իրեն կամացն հակառակ զինքը պաշտպանել: Ահա այսպէս մեր մարդիկները հեծելազօրաց դաշոնը և սուրը կը կրեն, բայց իշխաննին պաշտպանելու համար զանոնք գործածելու կերպը չգիտեն:

Անթ. (Չեւու որդի քույշ) — Տէք իմ, այդպիսի յանդիմանութիւն մը. . .

Կուի. — Ֆրանչէսկօ, վիշտը կը մոլորեցնէ զքեզ:

Ֆըան. — Ներեցէք հայր իմ, այս՝ վիշտն է զիս մոլորեցնողը, բայց այս գաւադրութեան շանծանօթ հեղինակին վեայ չի յարձակիլ և զայն չի խողխողե՛լ. . . ա՞հ, ո՞ւր է հիմա, ուր պահութած է, թողէք զիս, թողէք որ երթամ զինքո փնտուեմ:

Կուի. — Դու Ֆրանչէսկօ, կուզես մեկնիլ այս վայրկենիս և զբկել զիս իմ վերջին նեցուկէս, զբկելնուե մայրդ այս իրեն մասող վերջին զաւկի մը ներկայութենէն:

Ֆրան. (Դաստիարակ ճառեցած) — Մայր իմ, այս՝ միայն քեզ կը վերաբերի իմ պարտականութիւնս ինձ յիշեցնել, և եթէ իմ խնամոցս կը կարօտիս, եթէ զաւկի մը քաղցը մը և իմարանքը կընդունիս, . . . (Ի ՃԱՆՔ ԱՆՑ + Հ.)

Լէօ, (Երեւ անուն քարշացած՝ ու բարձր) — Զաւա'կս, Բա՛օլս, ո՞հ, չապիկը այլ եւսու (Ֆրան. ուր ենէ իմաս զայրացեալ)

կուի . — Եկուր որդեակ իմ, այս կսկիծը կենացս անց-
եալ հոգնութեանց հետ խառնուելով՝ հոգւսյս բոլոր ըղ-
դացումները ջախջախեց, և տիրապէտութիւնը իմ վրայ
այնչափ ծանր պարագանութիւններ դրած է, զորս աւ
քու հետդ բաժնելու պէտքը կ'զգամ, Խեղճ Լէօնուա,
եթէ զքեզ կը թողում՝ քիչ մը ետքը իմ արտմութիւնս
աւ ձերինին հետ խաւնելու համար է. թեւդ, Ֆրանչէսկո:
« Լէօնուա Անդանէօն նշան իշնէ որ ինայ, հացեւլ+ Թինէ»

ՏԵՍԻԼ Գ.

Լէօնուա, Անթօնիօ, ետքը Մանկլաւիկ մը

Լէօ, — Անթօնիօ, իշխանին անարդարութեանը վրայնե-
րողամիտ եզիք, իւր եզրայրը անշա՛փ համարում՝ ունէր
ձեր վրայ . այս, դուք անոր հուատարիմն էիք և անշաւշ
եմթէ կը սիրէիք իմ զաւակո . « Զեւց անոր բալէ » աւսակ
իւր մայրը խորին շնորհակալիքը քեզ կը յայտնէ:

Անթ. « Խառընելք » — Ո.Հ, տիկին . . .
Լէօնօ, — Եւ որովհետեւ դու էիր որ զինքը վերջին ան-
դամ աեսար, ուրեմն նորէն պատմէ այդ սարստվելի ար-
կածին բոլոր պարագաները, արդեօք մեռնելու ատենը
դաղանիք մը հազորդեց քեզ . . . բայց « Հ նաև եր-
շանիկ էր ինձ նման . . . բան մը չմասցուց ինձ, և սակայն
այն հարուածը որ զինքը ոչնցացուց, պէտք չէր որ նախ
և առաջ զիս ոչնչացներ:

Մանկլաւիկը « Դալք » — Տիկին, ժողովրենէ կին մը զեզ
ներկայանալ կը խնդրէ. Ֆերարի երվածառարդ դքսուհւոյն
քանի մը ադամանդները անձնելու համար . . . ոհ, թող գոյ,
Լէօ, — Պիտոնգ այի՞ն . . . ազնկա՛նս . . . ոհ, թող գոյ,

ՏԵՍԻԼ Դ.

Նոյնք և Լինտա

Լէօ. — Մօաեցէք տիկին :

Անթ. — Ո՞հ, տիկին, ես կը ճանչնամ այս կինը, այսէ այն պանդոկապետուհին, որուն պանդոկը պիտի անցնէ. ինք այն սոսկալի գիշերը:

Լէօ. — Ասառուած իմ, արդեօք զաւակս տեսած է .

Լին. — Զինքը տեսայ՝ երբ գուշը տակաւին երջանիկ մայր մ'էիք, և հիմայ . . . (Ի ՃՈՒՅ ԻՉՆԵ)

Լէօ. — Ի՞նչ կընէք:

Լին. — Ցաւակցեալ մօր մը առջև ի ծունը պէտք է խօսինք :

Լէօ. — Ո՞հ, ելէք : Անթօնիօ, քիչ մը ատեն առանձին թողէք զմեզ : (ԱՆԹՕՆԻՕ և ՄԱՆԻՄԱՆԻՉՆ ՔԻՆՔՆ) ըսէք տեսնեմ ուրեմն ձեր տո՞ւնը կը գտնուէր :

Լին. — Այս տիկին, երէկ գիշեր, Մինչիօ գետը անցնելու համար նաւակի մը սպասելով:

Լէօ. — Քու հետդ խօսեցա՞ւ.

Լին. — Ամենայն բարութեամբ..... խեղճ երփառարդ իշխան քանի մը վայրկեանէն խրճիթս իւր նշնաւածն առեւանդող աւազակներով լեցուեցաւ .

Լէօ. — Իւր նշանածն,

Լին. — Իւր այրի կինը գրեթէ աւա՛զ

Լէօ. — Այս', պէտք էր որ զաւակս մեռցնէին, անոր ձեռքէն յափշտակելու համար խեղճ Պիանդան և դուքանի մը կտոր գոհարեղենները բերեր ես.

Լին. (Ծըռը հըշանյնել) — Այս ապարանջանը և այս մանեակը, դոր երփառարդ գըսուհին ձգած էր

Լէօն, — Որդւոյս ընծանե՞րը, ո՞հ, ես էի որ այս մանեակով Պիանգայի պարանոցը զարդարեցի և այս ապարանշանը իւր ձեռքը դրի, բայց ի՞նչ ուրախութեամբ Աստ, ուած իմ և իմ ազօթքներու այս սիրեցեալ զաւակաց երջանկութեան և սիրոյն երկար կեանք մը կը խոստանային, Ահաւասիկ դորա առհաւատչեայք, կըսէի ինքնիրենս, և այսպէ՞ս պէտք էր որ զանոնք տեսնէի, (Լուլ) ա՞հ սիրեցեալդ իմ Պիանգա, խեղճ զաւակ, արդեօք պիտի կարենամ օր մը այս նուրիրական յիշատակները քեզ վերադարձնել, եթէ թշուառականները քու թանկադին կենացդ մաս մը չեն հասուցած, քու՝ ինչպէս իմ Բաօլօ որդւոյս Բայց քեզ իմ շնորհակալիքս յայտնելու համար բոլոր ցաւերս կը մոռնամ, քեզ կըսեմ, որոյ մտերմութիւնը զիս երախտապարտ պիտի կացուցանէ :

Ան, — Ահ տիկին, յիշատակ մը որ հետո պիտի տանիմ, բաւական է ինձ :

Լէօն, — Բայց կեցեք, դուքսը ձեզ պիտի տեսնէ իւր շընորհակալութիւնը անձամբ յայտնելու համար, բայց ահա նիքն տլ կուգայ :

ՏԵՍԻԼ Ե.

Նոյնեք և Կուիտօ

Կուիտ. — Ի՞նչ էր լսածս, սիրելիդ իմ Լէօնուա, հոս կին մ'կայ եղեք, որ ոճրոյն ականատես վկայ մ'է եղեք,
Լէօն, — Եւ որ ինձ բերած է մեր սիրելի Պիանգային ակամանդները :

Կուիտ. — Կ'ողջունեմ ձեր դալուստը աիկին, վասն զի ըդ մեր աջապատող այս վշտաց և տարակուսանաց պարագանելը պիտի պատմէք անշուշտ, ո՞վ եք դուք տիկին,

Լին,— Խեղճ այլի կին մը, որ իւր եղբօրը, հին ծովային զինւորի մը քով կը բնակի, որ այժմ Մինչիօ դեսին վրայ ձկնորսութեամբ կը պարապի :

Կուի, — Զեր անունը .

Լին,— Լինտա :

Կուի, — Լինտա, (Մեկուսէ, զայն դեռելու) բայց սա իւր գէմքը . . . կը խաբուիմ արդեօք, (Բարձր) դուք միշտ այն հիւղը կը բնակէիք,

Լին,— Ոչ տէր իմ:

Կուի. — Դքսութեանց սահմանագլխոյն վրայ, պանդոկ մը ունեիք.

Լին,— Բէշիէրայէն կէս մղոն հեռու :

Կուի, — Եւ ձեր ամուսինը Լուինի՞ կը կոչուէր.

Լին, Այս տէր իմ:

Կուի. — Բայց ուրեմն ձեզի՞ էր որ ասկէց 23 տարի առաջ տղայ մը յանձնուեցաւ :

Լին. (Մեկուսէ) — Աստուած իմ, ինչ յիշատակ, (Բայց) աղայ մը .

Կուի. — Զոր դուք խնամեցիք և մեծցուցիիք :

Լին, — Մեծցուցի՛ . . . այս' .

Կուի. — Եւ զոր օր մը իւր հայրը եկաւ ետ տանելու :

Լին. — Իւր հայրը . . . ո՞վ, Ասթօլֆօ՞ն :

Կուի. — Աղէկ մը նկատեցէք զիս . . . ուրեմն չէ՞ք ճանչնար :

Լին. (Նկառէւէ) — Դուք . . . ո՞վ երկինք . . . Մանթուի դուքսը, իւր հայրը, այս, նոյն ինքն է, (Դեմք և ծագիւ:)

Լէօն. — Ահ, տիկին, ձեր խնամքները մոռցած չենք, բայց դուք աներեւոյթ եղած էիք այն միջոցին հակառակ մեր այնչափ վիճակներուն, (Լինոս և Էռալէ) բայց ի՞նչ ունիք. ի՞նչ կըլլաք.

Լին. — Ոչ, ոչինչ, տիկին, այս տղան որ ես . . . , որ իմ ամուսինս նորին վսեմութեան յանձնեց՝ իշխան մը եղած է այսօր, և թերեւս այս հզօր դքսութեան ժառանգորդը:

Լէօ. — Աւազ:

Լին. — Կը հասկնամ, այս գիշեր իմ պանդոկիս մէջ ըստ պանուած դժբաղդ իշխանը ինքն էր թերեւս . . .

Կուի. — Ոչ, իւր անդրանիկ եղբայրն էր որ մեռաւ:

Լէօ. — Իմ սիրեցեալ Բաօլօս:

Կուի. — Ֆրանչէսքօն քու սնուցած զաւակս է, որ միայն ինձ մնայ, և հիմա պիտի տեսնես զինքը,

Լին. (ՄԵՒԱՆՔ) — Զինքը տեսնե՞լ ինքը, որ խարդաւանօք այս իշխանական ընտանեաց մէջ մտած է, զանի տեսնե՞լ . . . ոչ, չեմ ուզեր, անկարելի է:

ՏԵՍԻԼ Զ.

Նոյնք և ֆրանչէսգօ

Ֆրան. — Հայր իմ, մարդասպանաց դլուխը ի դրաւ հանող հրավարտակը հրատարակուեցաւ, անշուշտ եմ թէ քիչ ատենեն . . .

Կուի, (Լինուան ցուցնելով) — Տեսէք որդեակ իմն այս կինը.

Ֆրան. (Եղ եռ երթալով մէկուս) — Խըճթին կի՞նը . . .

Լին. (ՄԵՒԱՆՔ) — Ի՞նքը . . . , այս տղա՞ն:

Ֆրան. (Նայեան) — Արդեօք զիս ճանչցա՞ւ:

Կուի. — Ահաւասիկ այս կինն է որ զքեզ ինամեց մանկութեան ատենդ մեր փախստական պտտած օրերուն մէջ, վիստու է իւր անունը, զոր թերեւս կը յիշես:

Ֆրան. — (Զայն բէաւելով) — Այս, հազիւ թէ կը միշեմ .

(Աքաղայք հօդենայ, բայց անոր եռ ուշաւելը բէաւելով մէկուս) ինձ համար ինձմէ կը խորշի. (Բայց) տիկին արդեօք ինձ

Նման իշխանի մը ներկայութենէն զդացած երկիւղիդ պատճտռա՞ն է որ այդպէս կ'ստիպուիս ետ քաշուիլ,

կուի, — Խեղճ կնոջ սիրտը այս գիշերուան սարսափելի դէպքէն խռովեալ՝ տակաւին հանդարտած չէ:

Ֆրան. (Դաշնաբ) — Ինքը պատմե՞ց ձեղ զայն

կուի, — Թերեւս մեղ կարենայ օգնել յանցաւորները դտնելու:

Ֆրան, — Կը կարծէ՞ք .

կուի, — Պատրաստ է իւր սրտին դաղտնիքը որդւոյ մը յայտնել անվախ սրտովկ և թերեւս մեր ներկայութենէն արդիկուի մանրամասնօրէն պատմելու, ուստի ահա մենք կը հեռանանք և ձեղ կը թողունք զինքը հարցաքննելու պաշտօնը, Եկէր Լէօնօսա, թերեւս այս պատմութիւնը անհաճոյ պիտի թուի ձեղ և անաւանելի ըլլայ: (Գինչ)

ՏԵՍԻԼ Է.

Ֆրանչէսգօ և Լինտա

Ֆրան, (Անժնէրն) — Արդեօք ամեն բանէ տեղեա՞կ է և իմ վրայ կը կասկածի՞.

Լին, (Նոյնէրն) — Ի՞նքն է .

Ֆրան, — Ի՞նչպէս զիս կը դիտէ, «Բարձր» Ինչու կը զարմանաք այդչափ զիսնկատելով բարի խնամածու մայր,

Լին, — Զեր դիմացը վրայ իմ խնամած Ֆրանչէսգօ տըզուս գէմքը կը վնասեմ, և զարմացած եմ հան այնչափ քաղցրութիւն տեսնելուս .

Ֆրան, — Միշտ քու զաւակդ է նա բարի Լինտա, կը կարծէ՞ք թէ ես երտխատանու ըլլամ ձեղ՝ ոչ, ոչ, զիս այնչափ խնամով և սիրով սիուցանելդ իմացած եմ, բայց հիմա ե՞նչ պատճառաւ աչքերդ կը դարձնես ինձմէ ,

Լին.— Ահ, պատճառը սա է որ, զքեզիմ կարծածիս
հակառակ տեսնելովս անցեալ գառն յիշատակ մը կը
զարթնու սրտիս մէջ, աղետալի գէպք մը . . .

Ֆրան.— Ի՞նչ է այն գէպքը,

Լին.— Ֆրանչէ սպօս այն սպաննութիւնը . . .

Ֆրան, (Խռովութեալ) — Սպաննութիւն մը . . .

Լին.— Այո, եզրօրդ վրայ գործուած .

Ֆրան, (Խնդիրնութեալ) — Թշուառակա՞ւն կին, ի՞նչ
կըսես, ո՞ւսկից իմացար, և ի՞նչպէս կը համարձակիս
ինձ նկատմամբ այդպիսի բան մը մտաքերել .

Լին.— Աւաղ, ինչ որ աեսած եմ.

Ֆրան.— Դու զիս տեսա՞ր, գո՞ւ . . . զգուշացիր, դու
զիս տեսա՞ր, ե՞րբ, ո՞ւր և ի՞նչպէս .

Լին.— Երբ տղայ մ'էիր տակաւին:

Ֆրան, (Այսուհետեալ) Տղայ . . . (Մեկուկ) Ի՞նչ ըսել կու-
զէ արդեօք .

Լին,— Ոյն ատեն տակաւին չարեաց ծանրութիւնը չի
գիտնալով, բայց սոսկալի բնածին զգացմամբ մը . . . աս-
կէ ատանեւեօթը տարի առաջ,

Ֆրան, (Մեկուկ) — Տասն և եօթը տարի՝ . . . ոհ, շունչ
կառնում, (Բարձր) է ուրեմն Լինաա.

Լին,— Այն պլոտիկ Ֆրանչէսդինօն, որ քեզի հետ մեծ-
ցուցած էի, տակաւին աշքիս առջևէն հեռացած չէ պա-
տշգամէն վար գահավիժեալ իւր վիրաւոր և արինաշա-
խաղ վիճակը .

Ֆրան, (Ինքեւն) — Ահ, ուրեմն երազչէ եղեր:

Լին, Եւ կը զարմանա՞ք Ֆրանչէսգօս, որ զձեզ դրկելու
համար չեմ բանար իմ բազուկներս:

Ֆրան,— Աւաղ, ի՞նչ է այդ որ ինձ կիմացնես բարի
կին, ոհ, կը տեսնեմթէ կեանքս վտանգաց և գժբաղդու-

թեանց ենթարկեալ է, և օրօրանէս մինչև հիմա անմեղ արիւնը ինձ գէմ բողոքած է:

Լին. — Դուք դժբա՞ղդ էք հիմա, և ինչո՞ւ համար.

Ֆրան. — Կը հարցնէ՞ք, երբ սիրելի եղբօր մը մահը զիս տրտմութեամբ կը պաշարէ, երբ բոլոր սիրականներս չորս կողմն կուլան ու կողբան, ահ Լինտա, պէ՞տք էր որ զիեզ նորէն գանելու բարեբաղդութիւնս այսչափ գառնակսկիծ ցաւերով թունաւորուած ըլլար :

Լին, (Ուրեխունեամբ) — Փառք երկնից, ուրեմն աշօթք-ներս ընդունելի են եղեր, Տէրը Ֆրանչէսդօի անգութ սիրտը մեզմացուցած է, Ֆրանչէսդօ բարի է հիմա, գթասիրտ և այս ազնուական ընտանեաց արժանի որդի:

Ֆրան. — Այս .

Լին. — Ոհ, ամուսնոյս գործած այս ոճիրը կարծածէս աւելի պղտիկ է եղեր.

Ֆրան. — Ոճի՞ր մը, ի՞նչ ոճիր :

Լին, (Լնուխուն բուշէ) Այլ սակայն, Ֆրանչէսդօ, ձեր վրայ տարակուսելնուս . . .

Ֆրան. — Այս, շատ գէշ բան մ'է այդ բարի մայր, ներեցէք ինձ որ միշտ այս քաջցը անուամբ զձեզ կոչեմ, գիտեմթէ այս բարձր տատիճանին համառդին, որտևն բազդը զիս հասուց, վեսութիւնն ու հպարտութիւնը շատ սխալ. ներ գործել կուտայ, բայց այս սեւ կիրքերը երբէք տիրած չեն խմ սրտիս, ոհ, եթէ պարզօրէն կեանք մը անցունելու համար ծնած ըլլայի, քու քովիտ, բարի մոյրո, հեռու այս ոլէրճութիւններէն, զոր մարդս կուղէ իւր ունցածով վրայ տարով վայելել՝ հաւատացէք թէ աւելի երջանիկ պիտի ըլլայի :

Լին. — Կարելի՞ բան է այդպէս Ֆրանչէսդօ, որ եթէ դու աննշան ծնունդ մը ունենայիր . . .

Ֆրան. — Բազդս պիտի օրհնէի:

Լին. — Եւ այսպիսի երջանկութեանց չպիտի՝ փափաքէիր.
Ֆրան. — Եւ ոչ մէկուն. երկինք վկայ են իմ խօսքերուու
թարուիմ, տրտմութիւնը բաւական ատենէ ի վեր իմ վը-
րաս ծանրացած էր, առաջի Աստուծոյ ինքինքու մեծ պա-
տասխանատու կը կարծէի, բայց այսուհետեւ այս տրտ-
մութիւնը ես չպիտի ունենամ միայն, այլ եթէ ճշմար-
տութիւնը ձեզի խոստովանիմ՝ դուք պիտի կատարէք ինչ
որ խղճմտանքնիդ պիտի ստիպէ. Այլ ևս ինքինքու չպի-
տի յանդիմանեմ ամսւանոյս այս սարսափելի ստախօսու-
թիւնը յերեան չհանելուս համար, և թերեւս այս խոստո-
վանութիւնս իր հոգւոյն փրկութեանը պիտի նպաստէ.

Ֆրան, (Մէկուսէ) — Ի՞նչ ըսել կաւզէ. (Բոբյը) շարունա-
կեցէք:

Լին. (Զորս ո՞չ նոյելով էաւաց հը) — Է ուրեմն ֆրանչոսո,
Բաօլօ իշխանը իբրև քու հարազատ եղբայրդ լալէ դադրէ.

Ֆրան, — Ի՞նչպէս .

Լին, — Բաօլօի հարազատ եղբայրը դու չես:

Ֆրան, — Ես չեմ, ուրեմն ո՞վ է .

Լին, — Այն պզտիկ տարտբազդը՝ զոր դու սպաննեցիր
տասնը եօթը տարի առաջ.

Ֆրան, — Ի՞նչ կըսես .

Լին. — Խեղճ տղուն մեռնելու վայրկենին ամուսինս ըզ-
քեզ Ասթօլֆօյին յանձնեց որ իւր զաւակը առնել եկած
էր . . .

— Խենդեցա՞ր Լինտա, թէ ոչ ես չեմ կընար հասկնալ
քու խօսքերդ. ես դուքսին տղան չեմ . . .

Լին: — Ոչ .

Ֆրան, — Ուրեմն ո՞վ եմ .

Լին, — Աւազակի մը տղայ, որուն մայրը իմ տունս մե-
ռաւ :

Ֆրան, (Ինչու Բնիքն դուռը ելած) — Անկարելի՛ բան է . .
կը ստես .

Լին . — Ե՞ս ստեմ .

Ֆրան, (Նայակեն) — Եւ դու ո՞վ եռ որ կը համարձակիս
ինձ այդ խօսքերը ըսել . Լինտա , ո՞ր Լինտան , միթէ կը
ճանչնա՞մ դքեղ . . . և երէկ որ այլոց կենացը վրայ կը
տարակուսէի , այսօր այս կինը կուգայ չգիտեմ ո՞ւսկից ,
աներկիւղ ինձ ըսել թէ՝ « վա՛ր իջիր այդ դահէն , բազդի
իշխան , վասն զի դու աւաղակի մը որդի ես . . . ա՛հ .
կորի՛ր , կորի՛ր , թշուառական կին , թերես յիմարանոցէն
փախած խենդ մի ես դու :

Լին . — Ա՛հ Աստուած իսմ , կը սոսկացնես զիս , ինչո՞ւ
ուրեմն հոս եկայ . (Կոռուկ Հենիւ)

Ֆրան. (Թւեն բանելով) — Ասկէց դուրս չպիտի ելնես
թշուառական կին , կը հասկնա՞ս .

Լին . — Ֆրանչէ՛սդօ , այդ խռովեալ դէմքդ . այդ կատա-
ղութեամբ փայլող աչքերդ և այդ սպառնալից շարժմուն-
քըդ . . . ահա , ահա ճշմարիտ Ֆրանչէոդօն ինձ կը ներ-
կայացնէ :

Ֆրան . — Ոնամօ՛թ կին :

Լին . — Զիս սպաննե՞լ կուզես .

Ֆրան , (Ինչու Բնիքն դու Յեայնելով) — Ե՞ս . . . ոչ , ոչ . .
կարծեմ թէ կը խենդենամ ; ոհ , դեռ այս առաւետ որ
սաստիկ վշտացած էի , հիմա աւելի կը վշտանամ և կը սոս-
կամ , վասն զի սիրեցեալ հօր մը և մօր մը բազուկներէս
մերժուիլ կ'ստիպէ զիս այս անիծեալ յայտնութիւնը , զիս
ծնողացս կապող կապերը որ ամեն մարդ հարազատ ար-
եամբ յօդուած կը կարծեն , այսչափ շուտ խորտակուիլ ու
սրբ և անտէրունջ մնալ աշխարհիս երե՛սը , ո՛հ , ո՛վ սարսա-
փելի մտածմունք . և եթէ երկինք որոշած է քու ձեռօքդ

զիս պատուհասել՝ թող որ ինքինքս պատրաստեմ այդ կրելիք պատժոյս. (Ա.Յառակ Տ. Ք. Հ. Հ. Հ.)

Լին.— Ո՞հ, թերեւս աղեկ բան մը չըրի այս գաղտնիքը յայտնելով, բայց ի՞նչ ընէի, երկար ատենէ ի վեր խըդ-ձի խայթը զիս կը նեղէր:

Ֆրան.— Կը ներեմքեղ Լինտա, և քեզմէ ի զատ ուրիշ մը չունիմ աշխարհիս երեսը . խեղճ կին. . . տաս-նը եօթը երկար տարիներ այս գաղտնիքը պահելու քա-ջասրտութիւնը ունեցա՞ր.

Լին.— Այո, կերդնում:

Ֆրան.— Բնդ ամենը երկու հոգի էին այս գաղտնիքը դիտցող.

Լին.— Այո, ամուսինս և ես:

Ֆրան.— Իսկ այսօ՞ր.

Լին.— Այսօր դարձեալ երկու, այսինքն դուք և ես: Ֆրան.(Մէկուսակ) — Մէկը աւելորդ է:

Լին.— Հիմա որ ամեն բանի տեղեկացար, կրնաս խըլճ-մտանքդ քննել կամ ամոքել, իսկ իմն՝ հանդարտած է:

Ֆրան.— Ո՞հ, եթէ ինձ չի վերաբերէր այդ գաղտնիքը . . . բայց այն խեղճ մայրը որ իւր անգրանիկ զաւակը կորանցնելէն ապագայ յոյսն ու միսիժարութիւնը ինձմէ կ'ոպասէ, այն իշխան հայլը որ զիս իւր գահուն միակ ժառանգորդը կանուանէ, պէտք է որ այս ամենը իրենց իմացնելու ժամանակ ունենամ, մինչև այն ատեն կը խոստա-նաս այս գաղտնիքը մէկու մը չիմացնել, այնպէս չէ բարի մայր:

Լին.— Այո .

Ֆրան.— Կերդնո՞ւս.

Լին.— Հոգւոյս փրկութեանը վրայ: (Կոսէքո հոգեւ)

Ֆրան, (Պողոսհար) — Գո՛ւքալ:

ՍԵՒ ԴՂԵԿԻ

ՏԵՍԻԼ Է.

Նոյնք և կուիտօ

Կու. — Ե ուրեմն որդեակ իմ,

Ֆրան. . Մեր բարի Լինտան բան մը չգիտեր :

Կուի. — Ուրեմն այս գիշերուան մարդասպանները տեսած չեմ.

Լին. — Այո տէր իմ, իրենց գլխաւորը տեսայո:

Կուի. — Իրենց գլխաւո՞րը .

Ֆրան, (կը սուսայ) — Ա'հ .

Լին. — Բայց դիմակով ծածկած էր իւր դէմքը :

Կուի. — Իսկ իւր հասա՞կը ,

Լին. — Մթութիւնը աչքերուս արգիլեց զայն որոշելու :
Կուի. — Եւ իւր ձայնը .

Լին. — Իւր ձայնը . . . թէ և անոր նմանող ձայներ լսած եմ, բայց զինքը չեմ ճանչնար :

Ֆրան. — Կը տեսնէ՞ք հայր իմ, բան մը չգիտէ :

Կուի. — Ահաւասիկ դարձեալ անյուսութեան մէջ կիյ-նանք, ցաւ ի սիրտ կերթամ քու մօրդ իմացնել զայս . լ-սեմ նաև թէ Լինտա կը հաճի իրեններկայանալ :

Ֆրան. — Հայր իմ, Լինտա շնորհակալ է ձեր և դքսու-հի մօրս շնորհներէն, բայց կը փափաքի հեռանալ .

Կուի. — Ա՛նմիջապէս.

Լին. — Այո տէր իմ, եղբայրս իմ խնամոցս կը կարօտի
Կուի. — Բայց . . .

Ֆրան. — Ալ չստիպենք զինքը հայր իմ, քանի որ կաճապարէ իւր խրճիթը երթալու .

Կուի. — Ցիկին, մեր փարձատրութիւնները ձեզ ոլիուի հասնին :

Ֆրան. — Ա.յու, սիրելիդ իմ Լինտա, քիչ մը ետքը պիտի
դամ զքեղ գրկել քու խրճթիդ մէջ, ինչպէս որ հիմա կը
զրկեմ. (Զայն գրէե)

Կուի, (Մենաւու Հըս) — Երջանիկ ես Լինտա այսպիսի
զաւակ՝ մը գտնելուդ վրայ, այնպէս չէ:

Ֆրան. — Հայր իմ, չի կրնար ինծի չափ երջանիկ ըլլալ.
(Լինու խորհու ժոնի, կոսիքո ու յոնը իւ ժոնի)

ՏԵՍԻԼ Բ.

Ֆրանչէսգօ, ետքը Պէքօ

Ֆրան. (Մբնակ) — Ի՞նչ սոսկալի յայտնութիւն . . .
ով . . . ես իշխանին զաւակը չեմ . . . ես որ և ոչ մէկ
բանէ մը սոսկացած չեմ, ոչ իսկ արիւնէ . . . և ի՞նչ
արիւն . . . իրենը, . . . իւր ժառանգորդը ըլլալու համար :
Ես բաղդախնդրի մը զաւակը եղած ըլլամ և զայն հիմա
իմանամ, հիմա որ ամեն բանի կարող ըլլալու կոչումն ու-
նիմ: Ոտքերուս մին գահուն առաջին աստիճանին և միւ-
սը անյատակ անդնդի մը եղերքին վրայ կը դողդան . զի
այն սարսափելի գաղտնիքը անիծեալ կնոջ մը չորնալիք
բերանը արտասանեց. ո՛հ, ինչո՞ւ թողուցի զինքը ասկէց
մեկնելու . . . եթէ պալատիս մէջ մինակ ըլլայի . . .

Պէքօ. (Մակ) — Տէը իմի

Ֆրան. (Յաւալբերեալ) — Ի՞նչ կայ, ի՞նչ կուվես .
Պէք. — Բայց մի բարկանաք, կուզէք նէ կերթամ,
(Մենաւու ունե իւնե)

Ֆրան. — Անկիրթ, ի՞նչ լուր կը բերես ինծի, լառէ:

Պէք. — Վերջը :

Պէք. — Զեր ողորմութեանը կարօտ խեղճ մարդ մը
կայ, այսինքն ըսել կուզեմ թէ կը մուբայ, և դիտէք,
ո՞րչափ կօրհնէ զձեզ:

Ֆրան. — Թերեւս աւաղակ մ'է :

Պէք. — Պարկեշտ մորդ մը ըլլալը իւր գէմքէն յայտնի է, (Թէսո՞վ) այսինքն այնչափ գէշ գէմք ու կերպարանք մը ունի որ . . .

Ֆրան. — Քիչ մը ստակ տուր ու ճամբէ :

Պէք. — Վրաս մանրուք չունիմ :

Ֆրան. — Քսակէս ա՛ռ :

Պէք. — Եթէ քսակնիդ գտնէի, մէջէն պիտի տայի :

Ֆրան. — Ի՞նչպէս . . .

Պէք. — Զեր վսեմութիւնը այս առաւօտ իւր վերադարձին . . .

Ֆրան. — Լուէ՛ անպիտան .

Պէք. (Լահաց) — Քսակնիդ հետերնիդ չէր :

Ֆրան. — Կարելի՞ է :

Պէք. — Հիմա ի՞նչ ըսելու է այս մարդուն .

Ֆրան. — Թող կորսուի երթայ: (Լուէնի խոհոյն հանէ)

Լուէնի, — Ոչ տակաւին, եթէ կը հաճիք տէր իմ: Փրան, (Տեկուս) — Այս գիշերուան մա՛րդը . . .

Պէք. (Նոյնուու) — Բոի և դարձեալ կըսեմ թէ աս մարդուն կերպարանքին ես չեմ հաւնիր կոր: (Եթեայ)

ՏԵՍԻԼ Թ.

Ֆրանչսդօ և Լուէնի

Ֆրան, (Մեկուս) — Զգուշանանք, այս ալ վորթորիկ մ'է, (Նոյնու բարձր) ո՞վ էք դուք, և ի՞նչ կը խնդրէք ինձմէ:

Լուէնի, — Խարուած է ձեր սպասաւորը եթէ իմացուց թէ ես ողորմութիւն խնդրելու համար կուգամ, մինչընդհանուրակն պարտք մ'է որ կը պահանջիմ: Ֆրան, — Պարտք մը .

Լուի, — Այս, թմբկի ձայներով լսեցի հիմա կուիտօ ար կոնզակսւէի որդւոյն Բաօլո իշխանին սպաննիչները մատնողին 500 ոսկի սկուգ խոստացող հրովարտակը:

Ֆրան, — Ա՛հ, խեղճ եղբայրս.

Լուի, — Եւ ուրեմն, ահա եկայ նոյն խոստացեալ վարձատրութիւնը պահանջել:

Ֆրան, — Ի՞նչպէս, սպաննիչը կը ճանչնա՞ս.

Լուի, — Եթէ զայն կը ճանչնամ, Աստուած վկայ ահա դու ես:

Ֆրան, (Յառա) — Ես . . . թշուառական, կը համարձակի՞ս այդպէս . . .

Լուի, — Զի բարկանանք տէր իմ, չի բարկանանք . դիմակի ու ծպտեալ հանդերձանքը մարդ մը միայն իւր ընկերոջը աչքերէն կրնայ ծածկել, բայց ոչ Լուիճիի աչքերէն՝ որ ունեցած արհեստին մէջ նորընծայ մը չէ, ես գաղտագողի գործելը չեմ սիրել, ինչպէս որ ըսած ալ եմ ձեզ թէ առանց որու հետ գործ ունենալս գիտնալու ձեռքս գաշոյնիս չեմ տանիր:

Ֆրան, — Ի՞նչ վատ ենթադրութիւն :

Լուի, — Ենթադրութիւն, հիմա պիտի տեսնէք . մարդու մը հանդերձանքին մէջ այնպիսի նշան մն կայ՝ որ առաջին անգամ իմ ուշադրութիւնս կը գրաւէ, այս նշանը քսակն է, չգիտեմ ինչու համար իմ աչքերս չուտ մը այդ քսակին վրայ կը յառին, Դուք այս գիշեր մեծ տիարի մը քսակին վրայ կը յառին, Դուք այս գիշեր մեծ տիարի մը պիտի առանց սակարկութեան ձեր քսակը բացիք իմ վարձպէս քըս վճարելու համար, գիտեցի որ թաւշեայ և մետաքսէ էր, և ըսի ինքն իրենս, «Գրաւ կը գնեմ թէ այդ քսակին էր, և ըսի ինքն իրենս, «Գրաւ կը գնեմ թէ այդ քսակին էր, ու զիստի համար համար իրենս, յագեցնելու համար գտնեմ, » ուստի հետաքրքրութիւնս յագեցնելու համար զայն գողցայ, (Քառական էր առաջնակ հանէ) ահաւասիկ այն քսակը, զայն գողցայ, (Քառական էր առաջնակ հանէ) ահաւասիկ այն քսակը, որուն մէջ (Ց) մը և (Կ) մը կը տեսնենք, որ թարգմանի

Ֆրանչեսկօ տը կօնզակուէ, և դքսութեան թագ մը , զոր ձեզ կը վերադարձնեմ առանց մէջէն բան մը առնելու , գիտցիք որ ես գողջեմ:

Ֆրան, — Շատ աղէկ, բայց գիտե՞ս թէ ես եմ այս տեղի իշխանը :

Լուի, — Բայց և այնպէս տակաւին ժամանակ ունիմ ձեզ խօսք մը ըսելու : (Մէջէն դաշնա հը և Տերէացնէ)

Ֆրան. (Կահաց) — Կուղե՞ս ինքինքդ մատնել մատնելով նաև զայն որուն համար ծառայեցին քու բազուկներդ :

Լուի .— Ճշմարիտ կըսեմթէ՝ արդէն կեանքէս և ունեցած արհեստէս բոլորովին զզուած եմ , և եթէ ուշ կամ կանուխ պտրտաւորիմ կազախան ելնել՝ ամենեւին չպիտի դժգոհանամձեր ընկերութեամբը հոն ելնելուս :

Ֆրան, — Խնչո՞ւ լրջօրէն չէք խօսիր , գիտեմթէ բան մը կուդէք ինձմէ

Լուի, — Արդէն ըսինք ձեզ թէ հրատարակած հրովարտակնուդ համամաճայն սպաննին յայտնողին խոստացուած վարձատրութիւնը կը պահանջեմ . ի՞նչպէս , աղէկ չի յաջողեցա՞յ զայն շահելու , ճշմարիտ յանցաւորը ճանչցայ , և հաւաստի եմ որ եթէ ձեր դուքս հօրը ներկայանայի

Ֆրան, (Ուժէն) — Վաստկած կամ ոչ , այդ գումարը պիտի առնուք :

Լուի, «Խառնելով» — Տէ՛ր իմ :

Ֆրան, — Քու աներկիւդ համարձակութիւնդ հաճոյ թուեցաւ ինձ , եւ քանի որ գաղանիքը չես սիրեր , քանի որ քու հետդ բացայայտ խօսելու է , քեզմէ ուրիշ ծառայութիւն մը պիտի խնդրեմ :

Լուի, — Սատանա՛ , , , կ'երևի թէ աղէկ վճարող մ'էք :

Ֆրան, — Դու պիտի ոլոշես գինը ,

Լուի, — Հը՞մ , ուրեմն մե՞ծ գործ մ'է ,

Ֆրան, — Սպաննուելիքը կին մ'է :

Լուի, — Կի՞ ն մը,

Ֆրան, — Վասակառ գաղտնիքի մը ճահով կի՞ն մը:

Լուի, — Շնորհակալ եմ, պահեցէք ձեզ սպակը, ևս կի՞ն բր չեմ սպաներ:

Ֆրան, — Բայց եթէ դիմայիր Լուինի թէ . . . :

Լուի, — Արդէն բաի ձեղ թէ այս արհեստէն սպակացած եմ, մօտակայ գիւղերէն մէկուն մէջ կրօնաւոր մը կոյ որ արա բանին վրայ քանի մը խրառական խօսքեր ըստ ինձ որ մաքիս մէջ ապասրուեցաւ, կը տհանէ՞ք ուրիշն, այն բարձուկը որ կը գործէ՝ իրեն հրամայող բաղկէն աւելի մազապարտ չուզեր բլլալ. և ճշմարիս յաս կը փափաքիմ այ եւս այս արհեստէն հրամարիլ, ուստի չեմ ուզեր որ կեով մը սպանութեամբ նորէն սկսիմ:

Ֆրան, — Բայց դու չե՞՞ս դիմեր արեմն թէ այս կի՞նը մեր ոճային ականառես և մեզ սպանացող վկոյ մ'է, որ քիչ մը առաջ եկած էր հոս մարդասպանը մատնելու:

Լուի, — Ե՞նչպէս,

Ֆրան, — Ամէն բան տեսած է այս դիշեր Մինչիս գետին ափանցը վրայի խրճիթին մէջ, մարդասպանաց մէկ երկուքն ալ ճանչցած է:

Լուի, — Այ սատանայ:

Ֆրան, Ես անձամբ դի՞նքը հարցաքննեցի և այսօրուան համար անոր լոռիթիւնը վարձեցի, բայց վաղը կրնայ խօսիլ գարձեալ, եթէ մենք գանգաղինք զի՞նքն աշոօրուընէ մեռցնելու, հիմա կը հասկնա՞ս Լուինի, թէ , , ,

Լուի, — Այդ ուրիշ խնդիր, քանի որ ամենուս ապահովութեամբ կը մնամ:

Ֆրան, — Կընդունիս արեմն

Լուի, — Ե՞ս, հաղար առ գատը շա՞տ է արդեօք,

Ֆրան, — կուտամ, թող հաղար ըլլոյ,

Լուի, — Բայց երբ պիտի. . .

Ֆրան, — Վաղը սկիտի առնուս, յուսամ թէ իմ վրայ ան-
վոտահ չէք.

Լուի, — Ոչ, սա իրաւամբ թէ՝ ձեզի այդ գումարը հա-
տուցանել տալու միջոցները դեռ ձեռքիս մէջն են,
(Մէկնէլու ուն քակ)

Ֆրան. (Մէկնէլ) — Եւ իմ ձեռքիս մէջն է քու ձեռքէդ
աղատելուս միջոցները երբ հրամաններս կատարես:

Լուի, (Կառարանի եռք) — Տէ՛լ իմ. (Մէկնէլ)

ԶԳԻ ՎԱՐԱՐՈՅՑ



ՊԱՏԿԵՐ Զ.

(Զ Դ Զ Ո Ւ Մ Ն)

(Տեսարանն է Գ. Պատկերին մէջ տեսնուած խրճթիչ
դրսի կողմը. Զախ կողմը յարդանոց մը, որուն մօտ տառ
կառներ գրուած են. Աջ կողմը դէպի խորը պղտիկ լեռ
մը, Խորը Մինչիօ գետը կերեւայ, Երբորդ բեմատախտա-
կին վրայ քարէ նստարան մը :)

ՏԵՍԻԼ Ա.

Բիեթոօ (Ուսիւն Կ-րէւէւ) Լինտա (Խոհեման Խնե,) Կտքը
Բաօլօ

Բիեթ. — Ե՛ ուրեմն քոյր իմ, այս առաւօտ ինչպէս ես:
Լին. — Խիստ լաւ, թէև տակաւին քիչ մը տկարութիւն
ունիմ. . . ով Աստուած իմ, արդեօք ինքն է այս երի-
տասարդ իշխանը, որուն ծնողը Մանիթուի մէջ կուլան ու
Բիեթ. — Ես ալ այս առաւօտ քիչ մը իմացայ. գեղաս
զործ ժէրօնիմօ եղբայրը, որուն տունը փոխադրած էին
հշանել, արգիլեց ինծի այս բանին վրայօք աւելի բացատ-
րութիւն ուղելու. կ'երեւի թէ առած վերքը այն ատեն
մահացու պիտի ըլլար՝ երբ ջրոյն պաղութիւնը արեան
հոսումը չի դադրեցնէր: Էսի՞ր իրեն թէ ընտանիքը զինքը
մեռած կը կարծէ .

Լին. — Այո՞ւ
Բիեթ. — Պէսը չէր որ ըստիլի, վասն զի շատ անհանդիստ

պիտի ըլլայ , բայց ահաւասիկ ինքը , որ իր ճթէն դուր
ելնել կ'աշխատի , թէ և տակաւին քալելու կարողութիւն
չունի : (Բառն իւ բէմասբէն) ո՞հ , իշխանդ իմ , ձեր այդ վար-
մանքը մեծ յահգգնութիւն մ'է , (Զերեն իւ բան) հաղին
թէ վտանգէն ազատեցաք և . . .

Բաօլո . — Քիչ մը օդ առնուլ կուղեմ , վասն զի հան
խրճին մէջ կը խեզզուէի :

Ենթա . (Բերը ներկայացնէ և դէղ է նորութան ունելով) — Հան,
զիստ ըրէք . . . առ արեւուն գիմացը նստեցէք , որ ձեզի
համար շատ առողջարար է :

Բաօ . «Նսորէվէ» — Բարի մարդիկ , ո՞րքան պարտական
եմ ձեզ ինձ մասուցած այս ամեն ծառայութեանց և խը-
նումքնելնուդ համար :

Բիէթ . — Ա՛ , ոչ իշխանդ իմ , մենք վարձատրութեան
արժանի բան մը ըրած չենք , եթէ զուք պարտք մը ունիք
կառարելիք՝ այն ալ մեր ձկնորսաց պաշտպան լիրոյն Մա-
տուի պատկեր և առաջը գեղեցիկ ճրագ մը վառել է , ո-
րոն բարեխօսութեամբը ազատեցաք , վասն զի երրոր աւա-
զակք զրեզ դեմք նետեցին , եթէ ճշշդ այն տեղը ինկած
չընալիք՝ ուր ուռկանելս պարզած էի , անշուշտ պիտի
խեզզուէիք :

Բաօ . — Եսու իրաւացի են ձեր խօսքերը , այս զիտիմ
թէ հրաշքով ազտուցայ :

Բիէթ . — Այս հրաշքով երկու ժամէ ի վեր իմ Քառլո
ընկերոջս հետ առատ որս մը ձեռք ձղելու համար կ'շ-
խառնիք , բայց յոյսերենու ի գերի ենելէն երբ կը պատ-
րաստուինք ետ գառնալ յանկարծ պում ձայն մը լսեցինք
է , ի՞նչ է առ , ըստին իրարու , թերես հրաշալի որս մ'է ,
մըմուցի , ուստի անոնքապէս գետ ի հոն վազեցինք՝ ուր
ծան բախիւր ուսկանեն կը գաշեր , և մարդ մը ահամիտ
ահա այս մարդը զոք եիք . իսկոյն ազատեցինք ուսկա-

նէն, բայց ձեր վրայ կենդանութեան նշոյլ մը չի աեսնու-
ելէն՝ պարաւորեցանք նաև ակնիս կապել և զձեղ մեր
դիւզին գեղագործ ժէրօնիմօ եղբօր խրճիթը տանիլ, ո՞ր
տան օրի չափ մնացիք, և այս առան օրուան մէջ բաւա-
կան առողջանալու դ համար հսս փոխագրեցինք, կարծեմ
թէ գոհ եք այս տեղերէն և թերեւս կը փափաքիք մեր-
ձակայ գաշտերը երբեմն պաքտելու ելնել:

Բառ. — Բարեկամք, զիս ամենէ աւելի տանջող բանը
իմ այս անդործութեան դատապարտուիլս է, ո՞հ, չկրցա՞ք
ուրեմն նեղեկանալ թէ ի՞նչ եղաւ այն երիտասարդուհին,
որ ինձ ընկերացած էր : Ոհ, արինոս երակացս մէջ կը սա-
ռի, մտածելով որ արդեօք այդ թշուառականները կրկնն
մարդասպանութիւն մը գործեցին :

Հին. — Օ՛, ոչ, այդ մասին անհոգ եղիք, արդէն ըսի և
դարձեալ կը կրկնեմ թէ տիրուհւոյն կենացը վնաս մը հա-
սուցած չեն. զայն կառք մը գրեր և ձեր հատեսրդաց ձի-
երը այն կառքին լծեր են, ասիկայ վիրաւորեալ աւաղակէ
մը իմացայ որ խրճիտս մէջ մեռաւ, բայց չկրցի հասկնալ
թէ ո՞ւր դացին :

Բառ. (Յառա) — Ո՞հ, անշուշտ պիտի դանեմ՝ ալս անո՞-
դորմառեւանդութեան հեղինակը Ալ ես անտանելի է ինձ
այս վիշտը և մաածմանքը, պիտի իմանամ իմ սիրելի Պի-
տեղախս ո՞ւր և ի՞նչ ըստալ, (Հառաւու) պէտք է մեկնիմ
եթէ կեանիքս ալ վրայ տալ հարկ է՝ պէտք է որ բնտութը
և զինքը զանեմ (Նորուանին քըս էնեաց ունեցեւ), ա'հ .
ո՞ւր մնացին իմ շախնի զօրութիւնս և ուժս, արդեօք Աստ-
ուած չսէ զեր զանինք դարձեալ ինձ պարզեւել:

Լու. — Խերզինքի այսպէս վրգովելով՝ զանոնք ձեռք
ձգելու միջ ց մը զտած չեք րլլար օ՞ն աէր իմ՝ խոհեմու-
թիւնութիւնք, որչափ որ իշխան մ' էք՝ իմ՝ ալ հիւան գո-
էք և իւս վեմ՝ ը բժշկութիւն :

Բառ,— Ռարի Լենտա.

Բիեթ,— Եւ իրաւունք ունի . զձեղ թողուլը կեանքեր-նիդ ամեն կերպով վոանգի ենթարկել ըսել է, եթէ թըշ-նամիքդ վերատին զքեղ գտնէն, արդեօք պիտի կարողա-նայի՞ր ի՞նքնինքդ պաշտպանել ընդհակառակն հսո ո և է վոանգէ աղաս էք, քանի որ թշնասիներնիդ զձեղ մեռած կը կարծեն։

Բառ,— Ոչ, ահա այդ մտածմունքն է զիս յուսահատեցընը, երբ ծնողացս զգացած տրտմութիւնը կը մտա-բերեմ, որ կարելի է իրենց մահը պիտի փութայնէ,

Բիեթ,— Ուրեմն ես յանձն կտունում զանոնք հանդար-տեցնել, գուք նամակ մը տուեք ինձ, զոր իսկոյն հօրեր-նուդ կը յանձնեմ։

Բառ,— Ահ, Բիեթո, կեանքս կըլին անդամ կազատես, այս, իմ ֆւանչէսդօ եզրօրս պիտի զրեմ որ գուքս հօրս և գքսու հի մօքս խոհեմութեամբ իմացնէ իմ այս հրաշքով աղատիլու։

Բիեթ,— Այդ աղեկ է, հիմա ինձ կը մնայ երթալ ձի մը դանել, դոր օրինակ, Սպանիացի նաւապետինը, որ ասկէ մզանի մը չափ հեռի է, և վերադարձիս նամակդ պատրաստ գանելու եմ։

Բառ,— Խեղճ եզրայրս ոչչափ պիտի ու բախանայ արդ-եօք, . . . երժամնամուկս պատրաստեմ։

Բիեթ,— Է ուրեմն քոյր իմ, մնաս բարեաւ, բայց ի՞նչ բանի վրայ կը մտածես զլիսակոր։

Լեն.— Ես . . . ոչինչ, (Մէկունդ) իւր եզրայրը։

Բառ.— Բարի Լենտա, ընկերացիր ինձ, վասն զի տա-կուին քու բազկացդ օդնութեանը կը կարօտիմ (Լինուց-ուն-ըն-ըն-է եւ հին ժամ, Բիեթու ու եւ էն է ընդէ)

ՏԵՇԻԼ Բ.

Լուիսի (Էռաքլյան)

(Երբ Հինաառ և Բիէթոօ կ'աներեռը մահան և Լուիսի բրտակին վրայ տեսնուի վերաբերով ծածկուած և ընդարձակ գտակով մը. Համբարոյլ կիջուէ և ապահով ըլլուու համար չորս կողմը կը նայի . . .)

Լուիս (Մէ-է) — Ճիշդ այս տեղն է, ահաւասիկ անցորդաց խրճիթը հոս էր որ այս գիշեր, և ահաւասիկ այն զետը. Է՞ն, ներս չի մոած քիչ մը հանգստանանք. (Լուիս) Արթօր տռաջ այս գործը կաարուելու էր, իսկ ես ուժ օրէ ի վեր առանց որոշում մը տալու մէկ տեղէն միւս տեղ կը թափառիմ, և սակայն ա'լ կ'ստիպուիմ գործել . . . Թրտնչսդօ այս կնօջմէն կը վախնայ այն վա՛աը . բայց վերջապէս եղածը եղած է: Ահ, բանտէն եղած տաենս ինչո՞ւ համար Սբոլէթիւան դիմաւորեցի . . . ա'ն, ի՞նչ ստուանայական դոդ մը կուգայ վրաս. (Յունո) ուրիշ անգամներ ասանկ տկարութիւն մը զգացած չէի . արդէն անցեալ աւուր դէպքը խղճիս վրայ ծանըացած է, թէե երիտասարդը ես չսպաննեցի, այլ միայն մարմինը գետը նետելով աւականացայ . իսկ հիմա, կենացս մէջ երբէք գէմքը չի տեսած կնոջ մը վրայ դաշոյնս բարձրացնելու մտածմունքը այնչափ կը խռովէ զիս, որ եթէ առաջաց վատնած ըլլայի խոստացեալ գումարին մէկ մասը, կարծեմ պիտի մերժէի այս սպաննութիւնը: Օ՞ն, օ՞ն, արդէն ուշացար, խատարէ այս պաշտօնդ թշուառ Լուիսի, քանի որ ուրիշ կատարելիք պաշտօն մը չունիս : Այս վերջին սպաննութեան ոսկիներով ա'լ պիտի հարստանամ և անգործութիւնն ոսկիներով ա'լ պիտի ապահովեմ: Ամեն տեղ իմ լինդ կինտաս կը լըս պիտի ապահովեմ:

բնուածք, որ եթէ տակա ին կապըի՝ իւմն հետ պիսի բառ ներայս հարատութիւնը, տառաց տուկիյ ձեռք բերուծ ըլլար փրեն իմացնելու . վերջապէս զիս գործածու բայսը թշուառականաց զահերուն հօգուց քառակենը համար վանրին քահ անային պառարագ մը բանել տամ, այս, այս վերջին անդամնան զահիս համար ալ և առնեն բան պիսի լմնոյ:

ՏԵՍԻԼ Դ.

Նոյն և Լինոս

Լին. (Մահապատճեն էնէ) — Յըրանչեսղօն իր եղբայրը, . . . ո՞հ, ճշմարիտն ըսելով այս մասածմաւնքը զիս շատ կը նեղէ . տոկէց զատ, այս գալոնիքը տակաւին խռոտաված չեմ.

Լուի. (Մէկունք) — Եին մը! . . . անտարուկոյս ինքն է, (Հետու բազան ուստի) տակաւին վայրկեան մ'ոլ և . . . բայց սիսալ քայլ մը չառնունք, նախ և առաջ ստուգենք թէ մեր լնուածը այս է . (Վերաբէն Քանուակ, Քիւուին = Քնու յանէլու և +ուլ)

Լին. — Բիէթոօն ո՞ւր մնաց արդեօք . . . բայց հաս մարդ մը կը տեսնեմ. . . ո՞վ կընայ ըլլալ . . . եղբայրը չէ:

Լուի. — (Մէկունք) Զեմուղեր իր երեսը տեսնել, զի դուցէ վհատիմ, (Եւեւ անո՞ն ուստինելու ժո՞ն) ալ' կին, զո՞ւք էք այս խրճթին տանտիկինը.

Լին. — Այո՛,

Լուի, — (Այո՛, ալ չեմ տարակուսիք, ինքն է :)

Լին. — Ի՞նչ կուղէք, պարսն .

Լուի, (Դաշնան բանականաց) — Կուղեմ, կուղեմ . . .

Բաօլո, (Ներսէն և էնչէ) — Լինտա, Լինտա .

Լուի. (Դաշտը Յեռն է Էկայ) — Հէ՛. Լինտա կըսէ .

Լին. — Այս, պարոն, Լինտան ես եմ :

Լուի. (Եր ուշուելով) — Դո՛ւք . . . ո՛հ, եղո՛ւկ ինձ :

Լին. — Այդ ձայնը, այդ շարժմա՛նքը . . . ո՛վ երկինք :

Լուի. (Կաւուկ) — Կի՞նս . . .

Լին. — Լուի՛ճի .

Լուի. (Դեմք նոծիւմ) — Ո՛հ, թշուա՛ռ, ես եմ :

Լին. — Այս, դուն ես. բայց տասը տարիէն ետքը երբ մէկդմէկ կը գտնենք, փոխանակ զիս գրկելու կը խորշի՞ն նձմէ, ինչու զարմանօք ինձ կը նայիս, զրեթէ ամօթալի, ուրեմն զիս բնտուելու մտօք հոս եկած չես :

Լուի. — Ո՛հ, ոչ . ամեննեխն չէի գիտեր թէ դու հոս ես, դէպք մը զիս հոս առաջնորդեց, իմ խեղճ և բարի՛ Լինտաս . այնչափ տառապադին օրերէ վերջը ահա զքեզ անվնաս կը գտնեմ. (Մեկոչ) ոհ, սատանա՞ն տանի զիս , ի՞նչ պիտի ընէի :

Լին. — Ըսէ՛ ինձ , ճամբուդ վրայ եղբայրս գիմաւորեցր՝ արգեօք այսուհետեւ պիտի երջանկացնե՞ս զիս , թէ ոչ գարձեալ ամօթալի պիտի մնամ աշխարհի առջեւ . խօսէ՛ , ուսկից կուգաս .

Լուի. — Վէնէսի բանտերէն , ուր տասը երկար տարիներ մնացի :

Լին. — Անշուշտ ի պատիժ նոր դործած մէկ չարութեանըդ համար :

Լուի. (Մեջուն) — Այս, ամէն բան պիտի պատմեմ քեզի, ալ վարժուեցայ բանտերու մէջ ճգնելու և պատրաստ եմ ուրիշ չարութիւններ գործել գարձեալ. (Լինու շոշանակ է ինեւ) ըսել կուզեմ թէ տասը տարուան բանտարդելութեամբս չգործած չարութիւններս հիմա մէկ վայրկենի մէջ գործելու կարող եմ. բայց մի՛ վախնար Լինտա , ալ այսուհետեւ բնութիւնս փոխեցի , բարիք պիտի գործեմ :

Լին. — Զեմ հասկնար, ի՞նչ ըսել կուղես .

Լուի. — Եւ չես կրնար հասկնալ, ա՛հ, խեղճ Լինտա , զքեղ տեսնելովս, դրկիս վրայ սեղմելու և դգուելու փառաք մը կ'զգամ սրտիս մէջ . . . բայց աւաղ որ արժանի չեմ . . . ալ զքեղ չպիտի թողում, միանդամայն ամեն արկածից դէմ պիտի պաշտպանեմ, այս, կ'երդնում թէ մինչեւ վերջին շունչս զքեղ պիտի պաշտպանեմ սա դաշոյնովըս, աեսնենք, ո՞վ պիտի համարձակի դէմս ելնել

Լին. — Ես պաշտպանութեան կարօս չեմ Լուիճի, բայց հոս հիս մը ունիմ, որ քու բաղկացդ օգնութեանը կը կարօտիս

Լուի. — Եւ ո՞վ է .

ՏԵՍԻԼ Դ.

Նոյնք և Բաօլո

Բաօ. — Ահաւասիկ Լինտա, եղբօրո դրկելիք նամակա Լուի. (Եռ ուշեւելով) Ո՞վ երկինք, ի՞նչ կը տեսնեմ:

Լին. — Արդեօք ի՞նչ ունի .

Բաօ. — Լինտա, ո՞վ է այս օտարական անձը.

Լին. — Մի՛ վախնաք, ամուսինո է . (Լուիճի) ի՞նչ ունիս Լուիճի. ինչո՞ւ այդչափ ապուշ կրթեալ կը նայիս .

Լուի. (Նորութեալ) — Հաս . . . հոս . . . այս տեղս . արդեօք կերազե՞մ Աստուած իմ:

Լուի. (Նորութեալ) — Աւրեմն մեռեալք կը վերակենդանաւնան . . .

Լին. — Խե՞նդ ես Լուիճի.

Լուի. — Գրեթէ տասն օր առաջ . . . այս տեղ . . . դէլուիը ջախջախեցին և գետը նետեցին, և . . .

Լին. — Եւ զօր ետքը եղբայրս աղա տեց.

Լուի. — Աղատեց. իրա՞ւ . . . այս, այս. ա՛հ, ներէ՛ ինձ
Քաօլօ իշխան .

Բաօ. — Ներել քեղի՛, ի՞նչպէս .

Լին. — Թշուա՛ռ, ուրեմն գո՞ւ ալ մարդասպաններուն
հետ էիր .

Լուի. — Բայց ես չի զարկի, թէ նոյն մարդասպանու-
թեան համար մեծ գումար մը խոստացուած էր ինձ .

Լին. (Եր + աշուելով) — Գաւաճանութիւնն, նենդութիւնն .

Բաօ. — Խմ' մահուանս համար գումա՞ր մը խոստացեք
էին քեղի, ուրեմն կը ճանչնաս այդ դժոխային խմբին
պարագլուի իր :

Լին. — Այս կը ճանչնամ, և դուք ալ կը ճանչնաք :

Բաօ. — Ա՞վ է .

Լուի. — Կ'երդնում թէ ձեր կրտսեր եզրայը Ֆրանչէս-
դո տը կօնդակուէն է :

Բաօ. — Եղբա՛րս .

Լին. — Ֆրանչէսդօ ,

Բաօ. (Զայրացեալ) — Ա՛հ, թշուառ կը սիսալիս :

Լուի. — Ոչ, չեմ սխալիր, Լուիճի երբեք սուտ խօսած չէ
և այսու հետեւ ալ չպիտի խօսի :

Բաօ. — Ուրեմն խարուած ես.

Լուի. — Այս, նախ իւր դիմակէն, բայց յետոյ իւր
պալատին մէջ ստիպեցի զինքը դէմքը ցուցնելու և ձայնը
լսելու :

Լին. — Ա՛հ, կը յիշեմ իւր ձայնը :

Բաօ. — Սակայն անկարելի՛ բան է այս, չեմ ուզեր և
չեմ կրնար հաւատալ թէ եղբայր մը իր հարազատ եզրորը
դէմ դաւաճանութիւննիւթէ, ո՛հ, ամենեւին մաքէս շանց-
նիր ատանկ բան մը, մարդկային բնութեան սարսափ կազ-
դէ այդ ըսածդ :

Լին. — Տէ՛ր իմ, ձեր հարազատ եզրօր վըայ ատանկ կաս-

կած մը մի՛ ունենաք, փառք Աստուծոյ, այս վատութիւնը գործողը եղբայր մը չէ։

Լուի. — Ի՞նչ կըսես կնիկ։

Բաօ. — Ֆրանչէսդօն չէ՞ ան։

Լին. — Ֆրանչէսդօն քու եղբայրդ չէ։

Բաօ. — Իմեղբայրս չէ։

Լուի. — Ինչպէ՞ս . . . այն իշխանոր, որ . . .

Լին. — Իշխան չէ, 45 տարի է որ ինքզինքը եղբարդ կուզէ կարծեցնել, այն եղբօրդ տեղ՝ դոր աղայութեան ատենը իր ձեռոօքը սպաննեց. կը յիշե՞ս Լուիճի։

Լուի. — Այս, այս, մուրացկան աւաղակի մը տղայն, զոր Պարոն Ասթօլֆօի հարազատ զաւկին հետ փոխանակեցի։

Լին. — Ահա ինքն է այն Ֆրանչէսդօն, որ թէև Կուիտո տը կօնզակուէի պալատը կը գտնուի, բայց ես զինքը ճանչցայ, ճանչցաւ զիս նաև Կուիտո տը կօնզակուէ դուքսը, որ ժամանակաւ խեղճ Ֆրանչէսդինօն ինձ յանձնած էր։

Բաօ. — Եւ ի՞նչ, այսպիսի յանդուգն խարէութիւն մը։

Լուի. — Ակամայ գործեցի աէր իմ, բայց պատիմն ալ լիովին կըեցի։

Բաօ. — Արդեօք ծնողքս իմացա՞ն։

Լուի. — Ոչ, անոնք ալ ինծի պէս մեռած կը կարծեն Ֆրանչէսդինօն, բայց քանի որ զադուիքն հիմա երեւան ելաւ, աճապարենք երթալ ի Մանթու։

Լուի. — Ուր դուքս հօրդ պալատին մէջ Ֆրանչէսդօ կ'իշխէ, և ուր հօրդ ներկայանալէ առաջ անոր պիտի ներկայանաս։

Բաօ. — Ես որ զայն կը սիրէի և իրը հարազատ եղբայրը կը պատուէի, ես որ անոր օգնութիւնը կ'ակնկալէի այս նամակաւ։ Պիանգա նշանածս նորէն գանելու համար,

Լուի. — Ինքն է որ զքեզ իւր եղբայրը կարծելով խողիողեց, միանգամայն ժառանգութիւնդ և կինդ Պիանգան կողէր յափշտակել։

Բառ.— Խեղճ Պիանդառ . . . բայց պէտք է գիտնաս
դու Լուիճի, թէ ուր տարառ զայն Ֆրանչէսկօ:

Լուի.— Դժբաղդաբար շգիտեմ, բայց կուղեմ գիտնալ
և կը խոստանամ ալ գտնել.

Բառ.— Ո՛չ, ի՞նչպէս կրնամ վստահիլ քեզ, քանի որ
այն սարսափելի արհեստին տէլն ես, ինչպէս կրնամ հա-
ւատոլ թէ այսուհետեւ բարիք պիտի գործես:

Լուի.— Ժամանակին թշուտառութեան բերմոնքն էր որ
զիս նախ՝ սրիկայ, յետոյ զինեմոլ և աւաղակ ըրաւ, սա-
կայն ալ պէտք է վերջ տամայս ընթացքիս, ինչպէս վանա-
հայրն ալ կէս մը համոզեց, թէպէտեւ քիչ մը առաջ հոս-
եկած ատենս զքեզ մեցցնել կը պատրաստուէի, խեղճ
կէն. (Լիոն Շառլ) այն գաղան Ֆրանչէսկօին հրամանաւը,
զոր գու սնուցեր, մեծցուցեր և աղէկ աշակերտ մը հա-
սուցեր էիրու Բայց ալ ևս անցեալը մոռնանք, այսուհետեւ
միշտ բարիք պիտի գործեմ և կրնամ ըսել թէ մինչև ցարդ-
գործած շարութիւններէս շատ աւելի բարիքներ:

Բառ.— Ե՞րբ.

Լուի.— Հիմա, անմիջապէս, երբոր Լինտա ինձ ներէ:

Լին.— Ե՞ս .

Լուի.— Այս, դուն, քու ներսւ մդ ինձ քաջալերութիւն
պիտի տայ այս երիտասարդ իշխանին ծառայութիւն մը
մատուցանելու:

Լին.— Աւերեմն սա պայմանաւ կը ներեմ քեզ՝ որ երի-
տասա դ դքսուհին շար ֆրանչէսկօի ճիրաններէն աղատե-
լով իւր սիրահարին գիրկը յանձնես: (Նշե Հնան Ներէն լե-
ռն իւլիո Յուներ իւ լուսին)

Սրոլէթթա. (Ներէն) — Զեզ կըսեմ, այս կողմէն, ահա-
ւասիկ ճամբանիս:

Լուի.— Հը՞ն . . . այդ ձայնը կը ճանչնամ, (Խը՞ն)՝
անդառնին վրայ ենէ և իւ նոյն.) ինքն է, Սրոլէթթա սլիկան՝

Ֆրանչեսկօփ գործիքը . . . բայց մինակ չէ:

Բառ. — Աղջ մարդիկը ի՞նչը լուս համար հոս կուգան, արդեօք զի՞ս կը բնտուեն:

Լուի. — Աչ, որովհետեւ զձեզ մեռած կը կարծեն, բայց գուք խրճիթ մտէք իշխանդ իմ. Լուիճին է որ ձեզի կըսէ, հաւատացէք խօսրիս թէ ես ձեր վրէժինդիրն եմ:

Լին. — Այս տէր իմ, եկէք, ձեր ապահովութիւնը մերն է: (Բայց հետ իրանի տուե.)

ՏԵՍԻԼ Ե.

Լուիճի, (Երրու) Սբոլէթթա և երկու Աւաղակք

Լուի, (Մինու) — Ո՞վ կը բնտուեն արդեօք . . . անշուշտ զիս. թերիս իմ վրայ իշխելու պաշտօնը մըրանչէսզօ ասոնց յանձնուծ է, և կամ ինձ վճարելիք հազար տուգալիը կը բերեն, ինչ այ ըլլայ՝ պէտք է որ արթուն կենանք: (Արդեւ հանդիւն և բարձրէ չէ նաև, Սբոլէթթա ու իւ տուե ընթերաց հետ.)

Սբօ. — Ընկերք, ինչպէս որ ըսի՝ ահաւասիկ այն խրճիթը, (շանի) ահա մեր բնտուած մարդն ալ, (բայց) բարելուիճի բարեկամ:

Լուի. — Ա՛, մին բարի Սբոլէթթան է, զոր այն դէպէէն ի վեր տեսած չեմ:

Սբօ. — Դու լաւ գիտես թէ ես Ֆէրարի կոմսութեան դնդերէն մէկուն մէջ մտուծ էի իրու դնդապետ, և ահա միենոյն պաշտօնով կերթամ Ֆէրարի դքսին իմացնել երիտասարդ աղջկանը գլխուն եկած պատահարը:

Լուի. — Աղէի խարէսութիւն, բայց ինչո՞ւ հոս եկար:

Սբօ. — Տէրոջս հրամանաւը զքեզ բնտուելու համար:

Լուի. — Ա՛, ըսելէ որ օձիքս տիրոջդ ձեռքէն աղաւ տելիք չունիմ:

Սբօ. — Դուն անոր աջ բաղուկն ես,

Լուի . — Դու ալ ձախ բաղուկը . (Մէջուք) կը կասկածիմ
այս պատւոյ պահնորդներէն, (Բ-Շ) դուք հիմա Մանթու-
է՞ն կուգաք ,

Սրօ . — Ոչ, այլ Սեւ դղեկէնո

Լուի . — Այդ հին ու աւերակ դարձած աշտարակին
դղեակ անո՞ւնը կուտաք, որ բուերու և դիշատիչ թըռ-
չուններու բոյն մ'է դարձած , և ուր չատ անդամ՝ ես ալ
պահուըտած եմ :

Սրօ . — Պիանդա իշխանու հւոյն բնակալայր սրոշուելուն
համար ֆրանչէստօի հրամանաւ նորոգուեցաւ :

Լուի . — Կարծեմ այն դքսուհին՝ զոր գու առեւանդե-
ցիր ասկէց :

Սրօ . — Նոյն ինքը :

Լուի . — Ուրեմն, Սեւ դղեկին մէ՞ն է հիմա :

Սրօ . — Կնոջս, աիկին Սրօլէթի այի ընկերակցութեամբը :

Լուի . — Եւ դու ալ իրո պահապա՞ն կը հսկես :

Սրօ . — Այո, կերեի թէ իմ տեղս բռնել կուզես :

Լուի . — Ա՛, ոչ, ատո՞նկ կը կարծես :

Սրօ . — Այո, քանի որ տէրս հրաման տռւած է ինձ
զքեզ հոն առաջնորդել :

Լուի . — Բաել է որ տէրդ Սեւ դղեակն է :

Սրօ . — Ոչ տակաւին , բայց վաղը կամ միւս օրը հոն
պիտի գայ :

Լուի . (Մէջուք) — Թշուառակա՞ն , (Բ-Շ) Շատ աղեկ ,
ըսէք իրեն թէ իրմէ առաջ պիտի դտնուիմ ի Սև դղեակ :

Սրօ . — Ուրեմն մեղի չե՞ս ընկերանար հիմա .

Լուի . — Ոչ, քու ընկերութիւնդ ալ ես ձանձրակի է
ինձ սիրելի Սրօլէթթա:

Սրօ . — Սա կնոջ դործը լմնցուցի՞՞ :

Լուի . — Ա՛, դու գիտե՞ս :

Սրօ . — Դիտեմ նաև որ զմեզ կը նեղէ և դու ալ խստա-
ցար . . .

Լուի, — Շիտակն ըսելով՝ տակաւին առիթ մը չունեցայ զայն տեսնելու, որով հետև դեռ հիմա հոս հասոյ:

Որո, — Անպիտա՞ն մարդ, զքեզ կարծածէս տւելի աշխոյժ զիտէի, մինչև հիմա լմնցնելու էիր, կուզե՞ս որ զայն հիմա սպաննեմ, (Խոսվէ երջին ճանել)

Լուի, (Աբէնելով) — Կամաց, մ'աճապարեր:

Որո, — Ենչո՞ւ համար,

Լուի, — Մինակ չէ,

Որո, — Եղբա՞յրը հոս է,

Լուի, — Այս նաև ամսւախինը:

Որո, — Հոգ չէ, ի՞նչ կըլլայ, անոնք երկու հոգի են, իսկ մենք չորս, պէտք է ուրեմն մտնենք: (Դաշնա հերթակներ, այն ինձն ընկերներն ու:)

Լուի, (Աբէնելով) — Բարց ոչ կըսեմ ձեզի, կիմանա՞ք, կնոջ հանելիք օգնութեան աղաղակները գիւղիս մերձակայ պահականոցէն պիտի իմացուի, երիտասարդ իշխանը սպաննող աւազակը ամեն բան տարածայնած է, քու անոր եղբօր Ֆրանչէսդօի հետ պտըտելդ տեսած են, և եթէ ճանչցուիս՝ կորսուած ես:

Որո, — Իրաւունք ունիս, զգուշութեամբ գործելու է, բայց ես ուրիշ միջոց մը զիտեմ, ոչով մէկը չպիտի կասկածի վրաս:

Լուի, — Ի՞նչ է նայինք,

Որո, — Տեղի ունենալիք կռւոյն աղմուկէն գլուխնիս շատ մարդ չի հաւաքելու համար մենք հոս սա յարդի Ըշտեմարանին մէջ կը պահստամբ, ուր թերեւս խոտ ալ կայ (Երես նայ) ճիշդ գուշակածիս պէս, բաւական խոտ կայ:

Լուի, (Մեկուով) — Արդեօք ի՞նչ է միտքը:

Որո, — Այս շտեմարանը որ փայտաշէն է, խրճին շատ մօտ է, քիչ ատենէն զիշերը վրայ պիտի հասնի, շտեմարանին կըակ կռւտանք և դուռը կը պաշարենք:

Լուի . (Մեկոսով) — Այ անպիտան սրիկայ :

Սբօ . — Ի՞նչ կըսես .

Լուի . — Կըսեմթէ ատիկայ շատ աղէկ խելք մ'է .

Սբօ . — Մեզի համար ամենեին վախ չի կայ , ահա դիւն շրն ալ վրայ հասաւ . (Տեսքանը էլ Տինայ)

Լուի . — Սպասենք որ քնանեան , դուք սա յարդի շահմարանը մտէք ես ալ գրանը առջև կը կենամ , և երբ յարմար առիթը գտնելով բուի ձայնով նշան մը տամ' անմիջապէս հասէք .

Սբօ . — Ուրեմն որոշուեցաւ :

Լուր . — Խոտը այրելու համար կրակ ունի՞ք քովերնիդ :

Սբօ . — Ունիմ . ատանկ բաները չեմ մոռնար .

Լուի . — (Ազգուի լոսձի ուես յետացնելով) — Ո՛հ , ահա կուգան շուտ ըրէք շահմարան մտէք . (Ո՞ք լենին ես ընկեր + Քիւրինին ու Քերաբիսնին նոն յիշեն ես շրեմաբան հոնեն :)

Լուի . (Կահաց ճը շրեմաբանին նիշը դնե ես իրմինին դուռը իւ դունի)

— Լինտա . Լինտա և դու իշխանդ Բաօլո , շուտ եկէք :

(Լինտա ես Բաօլո հոնեն)

Լին . — Ի՞նչ կայ որ ,

Լուի . — Սո՞դ , կամաց խօսէ աւազակները հոս շտեմարանին մէջ փակեցի , պէտք ասկէց մեկնինք շուտ :

Լին . — Մեկնի՛լ , գիշեր ատեն . տէք Աստուած , և ինչո՞ւ .

Լուի . — Պիանդա իշխանուհին երթալ ազատելու համար Բաօ . — Ուրեմն ուր ըլլալը դիտես :

Լուի . — Սեւ գղեակը , ուր անպատճառ մինչեւ վաղի առաւօտ համելու ենք օն շուտ ըրէք :

Բաօ . — Երթանք , երթանք ուրեմն :

— Լին . — Բայց դուք դեռ տկար էք և քայլելու կարողութիւն չունինք :

Բաօ . — Ո՛հ , Պիանդան ազատելու համար տուած այս որոշումնիս արդէն զիս զօրացուց :

Լուի . — Շատ աղէկ , բայց նախ ըսէ ինձ Լինտա , թէ խրճթին մէջէն դիւրաւ փախցնելիք թանկագին բաներ ու նի՞ս , վասն զի աւաղակք մէկ վայրկենէն կրակի պիտի տան խրճիթնիս :

Լին , — Ո՞վ Աստաւած իմ , մեր խեղճ պատսպարանը :

Լուի . — Ումենելին ցտւելու չէ , վասն զի ասկէ աղէկ ընակարան մը պիտի արտուի սեզ , հիմա ըսէ ինձ թէ ըշտեմարանէն խրճիթ տանող ճամբայ մը կա՞յ :

Լին . — Ո՞չ ,

Լուի . — Աւրեմն օգնէ ինձ սա տակառները դրանը առջեւ դնելու , (Կընք) հիմա սա աւաղակաց վերարկուները վրանիդ առէք և ճամբայ ելլանք երբոր նշան մը տամ:

(Զայս ըսել է ետքը Լուիին բուի պէս ձայն մը կը հանէ , Լինտա և Բաօլօ ժայռէն վեր ելնեն , քիչ մը ետքը շտեմարանէն բարակ մնուխ մը կ'ենէ , յետոյ բոցեր ,)

Լուի . — Ահաւասիկ խոտերը կրակ տուին :

Սբոլէթթա . (Ներսէն) — Լուի'նի . Լուի'նի դուռը բաց վրանուս գոցուած է (Ասուշիւ պառան կանչէն) օգնութիւն :

Լուի . — Ի՞նչ ազւոր կրակ մը կը շինեն սա խոտերը և կը յիշեցնեն ինձ սա ճշմարտութիւնը թէ՝ «Գուրբն զսրբորեաց և պեղեաց՝ ի նոյն անկցի ի խորիսորատ զոր և գործեաց :» աւրեմն մնայք բարեաւ . (Մերկ)

